


I-0P, 2013 V. 7

Բազին

ԸՍՍԵԳԻՐ

Գրական-թեման
և Արտ-Երգի



ԺԳ. ՏԱՐԻ

ԹԻԻ 1

ՅՈՒՆՈՒԱՐ 1974

digitized by A.A.B.




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՍՏԵՂ	Համրոյը- քատերգութեան վերածեց՝ Բ. Փափագեան
Մ. ԹԱՌԻԴԵԱՆ	«Եւ եղիւ խաւար...»
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Հռչիգոնէ հորիզոն
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Տաղ այլակերպութեան Ռապիմտրամաթ Թակոր
Ռ. ԹԱԿՈՐ	Տուն եւ աշխարհ (Քարզմ. Պ. Գեորգեան)
Բ. ԿՌԱՆԵԱՆ	Տպարտութիւններ Տասնըչորս տարի ետք
Պ. Ս.	Իսահակեանական առասպելներ
Պ. ԱԼԱՀԱՅՏՈՅԵԱՆ	Բ. Կանաչեան
ՄԻՇԷԼ ԿՈՐՏԷ	Ա. Սոյժեմիցիի «Կուլակ արշիպղա- գուր» (Քարզմ. Տ. Ռ.)
Ք. ՃԻՆՊԱՇԵԱՆ	Ա. Արփիճէլի «Եւ մաւր սուլեց» հատորը Խօսք՝ «արտաքին վկայականներու եւ ապստամբի վրայ արտասանուած նստերթու մասին «Գրախօսական՝ գրախօսականի մը մասին» Մեր ազուէսին յանախանքը

JUN 2010

Բազմը



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. Գ. ՅԱՐԻ. ԲԻՆ 1 Ե Ո Ւ Ն Ա Ր Ո Ւ Ը 1 9 7 4 ԳՐԱԳՐՈՒԹ

Գրեթէ «Հայրենիք» ամսագրին հետ ծուռք զործեց Համաստեղ գրականության մէջ ու սկսած օրէի յայտնութեան մը պէս հնչեց իր անունը, պատմութեան մարզին մէջ իրեն վարպետ ողջունուելով մինչև անգամ ամէնէն զժողովրդական թնկապաններուն կողմէ:

Կոչուած աշխարհի մը կենդանի յուշարձանն է Համաստեղի գրականութեան կարեւոր մէկ քաճիկը, որ իր անունը առաւ հայրենական մեր դիւղին մէջ զարթուն կուտակած ահիլէն ու կը կրէ մեր քարգերուն, աւանդութիւններուն եւ հազարամեակն առանձնայատկութիւններուն խոր կնիքը:

Այդ մթնոլորտին մէջ եւ չեղբին ա՛յդ մթնոլորտով յարգուած Համաստեղի տիպարները հողի, մարդու եւ Աստուծոյ հանդէպ բուն սիրէր սպրած եւ այդ գիծերէն շեղողներուն զէմ հակադարձ բնոյժով ու զա՛րձնայ ուժգնորէն աւելո՞ւած մարդիկ են: Աշխատանքի ու մոլուքեան, սիրոյ ու ստեղծութեան, ազգիքի ու հայեւայտեցի մթնոլորտի մը մէջ իրենց ամբողջական կարազատութիւնը դասած միւս ու սուրբի տէր այդ տիպարները հասարակաց ամուր գիծեր ունին բոլոր հայերուն հետ, եւ ո՞մանք՝ առհասարակ մարդ էակին:

Դասական դրո՞ծերը շարժապատկերի կամ Քատերզութեան վերածելով հանրութեան շեղակայանելու միւս ժողովուրդներուն ճատ ընդհանրացած սեր վերջին քառօրէ զարուն ծուռք դրո՞ծեց նաեւ մեր մէջ, հասկնալի պատճառներով, շարժական մարզին մէջ՝ զի, Քատերզութեան




մէջ՝ աւելի յաճախ: Համաստեղի պարագային, Բ. Փափազեանի փորձը առաջինն է: Անուանի գրողէտին պատմութեանը յափշտակութեամբ կարգացած մարդիկ վստահարար հոյն ընթացքով պիտի կարգան այս վերածումները եւ Քատերզական մեր խաճիկներէն մէկն ու միւսը պիտի ժամակ անոց բեմադրութեան մասին: Յաջորդով, — յս վերածումներուն մասին Համաստեղի կարծիքը:

Handwritten signatures and stamps:
ՅԱՐԻ
ՀԱՅԿԻ ԳՐԱԳՐՈՒԹ
90702-167

162-2000

digitised by A.R.A.R.®



Հ Ա Մ Բ Ո Յ Ի Ը

Յատերգութեան վերածեց՝ Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԱՐԱՐ Ա.

Գիւղական փողոց մը, կարօ Մարտուպի տան առջեւ: Քարէ նստարան, ցրուած կանգեր ու քարեր ծառերու տակ, որոնց վրայ կարելի է նստիլ:

Կը մտնէ Կարօ Մարտուպ քեմի ձայնէն (ժողովուրդի աշէն): Կարօ Մարտուպ մեծդի է, կնճռոտ ճակատով: Թաղիքէ զըլ-խարկին շուրջ արախչին փաթ-թըւած է, որ կը ծածկէ ակամբ-նորուն կէտը: Ձեռքիմ՝ գաւա-գամ: Կը նստի իր տան առջեւ, քարէ նստարանին: Նայուածքը գետնին է, գաւազանով գետնին վրայ գիծեր կը գծէ, ապա կը զարնէ գետնին քանի մը անգամ. գայրոյթ կայ ամբարտած իր մէջ:

ԿԱՐՕ ՄԱՐՄԱՌԻՊ (առանց դառնալու դե-պի տունը). — Ա, կե՛հ՛կ...

ԿԻՆԸ (Ներսէն). — Ի՞նչ է, մա՛րդ:

ԿԱՐՕ ՄԱՐՄԱՌԻՊ. — Էկու:

ԿԻՆԸ (եայկական, գիւղական առօրեայ տարագով. լաչակով քերանը ծած-կած, կու գայ դուրս). — Ի՞նչ է, մա՛րդ:

ՄԱՐՄԱՌԻՊ (լուռ գայրոյթով, գտարած բարկութեամբ). — Էս ճղարայի տու-փը առ, մէջը թիւթիւն լեցուր:

ԿԻՆԸ (տուփը աննելով). — Ինչո՞ւ բար-կացեր ես, մա՛րդ:

ՄԱՐՄԱՌԻՊ. — Թիւթիւնը պիտի բերե՞ս թէ չէ:

ԿԻՆԸ (կ'անցնի ներս, ու շուտով կը վե-րադառնայ ու ծխախոտին լեցում տուփը կ'երկարէ մարդուն, կը քաշ-ւի մէկ կողմ, ձեռքերը իրարու կա-պած՝ լուռ կը սպասէ):

ՄԱՐՄԱՌԻՊ. — Եկեղեցիէն դուրս որ կ'ել-լէի, ի՞նչ տեսնեմ հաւնիս... Էջնօ Մարկոսին կիներ, պատմայով շաղ-վա՛ր ու կապերով կօշի՛կ հաղած...

Թողար-Թողար եկեղեցիի ճամբէն տուն կ'երթար... էնպէս կը քայլէր, կ'ըսես քարերուն վրայէն Ս. Սարգիսի ձիւնն է կ'անցնի:

ԿԻՆԸ.— Հա, է՛դ էր պակաս. շալվար՞, քաղցրենի կօշիկ՞... Ինչո՞ւ չէ, վաղն ալ շալվարին վրայ թող շանչուլ շարէ: Աստուած վկայ, որ էսպէս երթայ՝ էս գեղը կը փլի, կը փլի՞: (Դրան սեմին կը ըստի, ձեռքը մերկաբար արկածով պղնձե խոլուսի արիւտ մը կ'առնէ, ու յայտորդ խօսակցութեան ընթացքին մէկ կողմէն ցորեն կը մտնի) Գեղին մէջ ո՞վ է տեսեր պատմալով շալվար, գեղի կնկան ձեռքովը գործած կտակէն չինուած շալվարին ինչ է եղեր... կապերով կօշիկ. մեր Բարսեղ էմմիին կարած կօշիկները շին բաւեր, հր՞: Տաւա կոպէս որ երթայ՝ աչքերուն սիւրմէ ըլլ պիտի քաշէ: Ինչո՞ւ չընէ, Նաճար Գրիգորը թող սող կենայ:

ՄԱՐՍՈՒՊ.— (դառնալով կնկան) — Քա, կնիկ, Նաճար Գրիգորին ինչ:

ԿԻՆԸ.— Դուն ալ աշխարհէն պէտապար, ինչէ՞ր կը խօսին, պեղի մը բերան ծածուն է դարձեր:

ՄԱՐՍՈՒՊ.— Ինչո՞ւ, ի՞նչ կայ, կնիկ:

ԿԻՆԸ.— Ինչ տրլի. Նաճար Գրիգոր գիշեր ցերեկ Մարկոսին տունէն դուրս չ'ենլի: Վարդիկին գոնտրան, պատմալով շալվարը Նաճար Գրիգորն է բերեր քաղաքէն: Ես ինչ գիտեմ, մեղքերին վիզերնին:

ՄԱՐՍՈՒՊ.— Ալ ինչո՞ւ կրակ չի տեղայ էս աշխարհին վրայ, կնիկ. էս ի՞նչ օրերու մնացինք: Գեղացին թող ազօթք բնէ դոճու էն լէն ճակտին, չէ նը էս գեղը Սողոմ Գոմար է, Սողոմ Գոմար: Մարկոսը չ'ըսե՞ր, թէ «Քա, կնիկ, էս շալվարը քեզի ուսկի՞ց»:

ԿԻՆԸ.— Էրիկն ի՞նչ ըսէ. էրկան իւլաբը կնկան ձեռքն է, ուզած տեղը կը կապէ: Էրիկն ալ Վարդիկը տէի՞ խուր ու խուրպան կ'ըլլի: Անցեալ օր խնամի Մարանը կը պատմէր, որ կալ

ու կուտի ատեն, աղա, խառ աղա, շաշառ ու գլիթ թոփուեր էին էքնոյննց արաը, կայը կը շափէին. էդ կուտ ու կրակ ատեն, էս Մարկոսը քաղաք կ'երթայ որ կնկան փորթուքալ բերէ, գլխը կը ցուի տէի՞ կընիկը փորթուքալ ուզեր է: Որ աղբըրաօք բաժնուեցան՝ դեղ մի գեղով Մարկոսը մեղադրեցին:

ՄԱՐՍՈՒՊ.— Կնիկ, էս ժարգ էնո՞ր կ'ըսեմ, որ քթին տակ բուսած պեխեբուն արժէքը գիտնայ: Մարկոսին պիտեղէն մէյ-մէկ շանձաղ կը կախուի, պիտեղէն ըլլ շամշնար: Կնկան իւլաբը, որ իր գլխին փաթթես ու ինքն իր հալին ձգես, Աստուած մի արասցէ, աշխարհը մրեղ-մրեղ կ'ընէ: Միտակ էքնոյննց տունը չէ, կընիկ. Թաթովննց տունը մրեղոյն ըլլ կնիկ էր. Բալուրցոնց տունը վերամբ ընողն ըլլ էն պատիկ հարսն էր. ալ ո՞ր մէկը ըսեմ:

ԿԻՆԸ.— Էդ կողմէն մեր Մարուշին բախաը լաւ է:

ՄԱՐՍՈՒՊ.— Չէլպէթ լաւ է, Ես Մուրատ Ակրոյի տղուն աղջիկ չէի նշաներ, եթէ հօր ու մօր մէկ հատիկը չըլլար: Մեր աղջիկը, վաղը, Մուրատենց տունը սր կրթայ, ներոջ ու տաքերոջ ցաւ շունի քաշելիք. կեսուր մը ու կեսարս մը ունի: Էտիկից գատ ես կինէ ամէն հալով աղջիկ տուող չէի. Մուրատ Ակոն քառուն մարդ դրկեց դիս համոզելու, որ տըղան մեր Մարուշին նշանէ: Դուն ըլլ դիտես, որ տէրտէրն եկաւ մերժեցի. Երոճապաշին եկաւ, ըսի, որ զբարի եկար, հաղար բարի, Փախաթ էդ մասին մի խօսիր. աղջիկս առհա պատիկ է: Ալ ո՞վ ըսեմ. մինչեւ որ դնաց Չոփուրենց Մարգիսը գտաւ:

Էդ բալբը խօսքերը ականջս չէին թրջեր: Օր մը Մարխոնին երթած ատենս տեսայ, որ էս Մուրատը վար կ'ընէր: Իրիկուցը, եզներս ճամբու դրի ու գացի Մուրատին վարը տեսայ: ԱՖէրիմ աղայ, խաթերը էն-

քան մանր ու խորունկ էր ձգեր, կ'ըսես մրճան է շարեր: Հա, էն օրը միտքս դրի, որ ալ չմերժեմ: Նուների, Աստու աչքը Մուրասին վերայ ըլլայ: Էնպէս վար ժը կ'ընէ... տեսնելու բան է, տեսնելու:

ՄԱՐՈՒՇ (հագիւ 15 տարեկան ազգիկ մը, գիւղական զգեստներով: Ձեռքը կաթին դոյլը լեցուն, կու գայ ձախէն ու կ'երթայ դէպի տան դուռը):

ՄԱՐՍՈՒՊ — Մարուշ: (Մարուշ կանգ կ'առնէ) Ալ նշանուած աղջիկ ես, առանց լաշակի դուրս չելլես, հասկըցա՞ր:

ՄԱՐՈՒՇ (առանց խօսք մը ըսելու, լաշակը կը շտկէ ու կ'երթայ ներս):

ՄԱՐՍՈՒՊ — Մուրասին անունը լսեց, ներս էկաւ: Էդ լաւ չէ, Նունի, լաւ չէ:

ՆՈՒՆԻԿ — Ձէ, մա՛րդ, կոյր կ'թած, կաթը ներս կը տանի, եփելու:

ԱԿՈՒ (խնամի Ակոբ կ'երեսայ բեմին ձախ կողմէն) — Բարեւ խնամի:

ՄԱՐՍՈՒՊ — Աստու բարին: Էս կողմ հրամայէ, խնամի Ակոբ. Մարուշ, խնամի Ակոբին մի՛նտէր մը բեր:

ՄԱՐՈՒՇ (մի՛նտէրը կը բերէ, կը տեղաւորէ հօր կողքին, քարէ մտարանին վրայ, կը քաշուի մէկ կողմ, ձեռքերը ծալած կը սպասէ. Ակոբ կը մօտենայ, կը նստի. Մարուշ կը մօտենայ ու իր տպագայ կ'եսոր ձեռքը կը համբուրէ, կը քաշուի մէկ կողմ):

ՄԱՐՍՈՒՊ — Տունով տեղով ինչպէ՞ս են, խնամի:

ԱԿՈՒ — Փա՛ռք տիրոջ, լա՛ւ են. Մուրասն էսօր Հոգաբարի արար կը ցանէ:

ՄԱՐՈՒՇ (շարժուելով մը իր ներքին շարժումը կը մտնէ Մուրասի անունը լսելուն. սակայն անշուշտ լուս կանգնած է):

ՄԱՐՍՈՒՊ — Հա, խնամի, անցեալ օր տեսայ՝ Մուրաս չէնք-չնորճ սերմ կը նետէր: Էնոր տարիքին մենք սերմ ցանել ի՛նչ դիտէինք...

ՆՈՒՆԻԿ — Մարուշ, աղջիկս, խնամի Ակոբին դինի մը բեր:

ՄԱՐՍՈՒՊ — Նունի, ինձի ըսեր դինին թմա՛ր է:

ՆՈՒՆԻԿ — Էդ դինին խնամի Ակոբին համար ի՞մ պահէր:

ՄԱՐՍՈՒՊ — Քա, կնի՛կ, ես կ'ըսէի ծերութեանս ատեն Նունիկ տահա ինձի հոգ պիտի տանի, խնամի ունեցար-չունեցար, դէս երեսէ ձգեցիր հա, էիս, էիս, էիս (կը խնամեմ երկու խնամիներն ալ. Մարուշ գիծն կը բերէ, դիտելով ու երկու պղծակէթսա, կը դնէ հօր առջիւ, կը քաշուի մէկ կողմ):

ՄԱՐՍՈՒՊ (կը լեցնէ խնամիին ու իր քաշերը, կը հրամայէ խնամիին) — Իչքէ է՛սպէս, խնամին պիտի գայ, որ մենք ալ խնամուն սեպպով դինի խմենք. էս խնամին ինչ շուտ սիրուն եղաւ. էիս, էիս, էիս... Գէ՛հ, բարին եկար. Աստուած իրերքն ընէ:

ԱԿՈՒ — Ձեզ ողջութիւն, Աստուած Մուրասին ու Մարուշին շնորհն աւելցնէ (կը խմեն: Ակոբ պիտիբը սրբելով կը խօսի) Գէ՛հ, ալ աշուն եկաւ, վաղը մէկալ օր այգեկու՛թքն ալ կ'անցնի: Ես կ'ըսեմ հիմակուց Հարսնիքի պատրաստութիւն տեսնեմ: Փա՛ռք Աստու, էս տարի ձեռքս կէնիւր է. կ'երեւի Մարուշի բարտն է: Հը՛մը հը՛մը, 110 չէրէկ ցորեն վերցուցինք կալէն: Հաշու ըրէ, խնամի՛. հաշու ըրէ, մինակ Մարխոնիէն 40 չէրէկ ցորեն եկաւ. ես ինձիս դիտեմ էր արտէն էդքան ցորեն հանած չէինք: Հեզ մը տեսնայիր, խնամի՛, էդ արտը փրփրեր դուր կը թափէր, հասկերն էնպէս ծանր, գլուխին էնքան ցած... կ'ըսես մեզմէ աղէկաներ, հուրի փերիներ հարսնէք են բուներ:

(Մարուշ կանգնած տեղը կ'երթայ, կը ճօճուի, տարուած ներքին երեսակայութեմէն):

ՆՈՒՆԻԿ — Մարուշ: (Մարուշ կ'անշարժանայ կրկին):

ՄԱՐՍՈՒՊ — Արտորնալու պէտք չունիս, խնամի՛. տահա ասեն շատ կայ հարսնիքի. այդեկութքն ըլ ներս կ'առնենք: Աստուած ողորմած է: Իսնակին, խնամի՛, Իսնակին:

ԱՎՈՒՐ — Հա, Իսնակին, էդ լաւ ըսիր, խնամի՛: Խելքին թող ըլլի, Իսնակին թող ըլլի: (Թաւր շրթներուն տանելով) Փա՛ռք Աստուծոյ, դուրսը մէկ փարս պարտք չունիմ: (Գաւաքը դնելով վար ու պիտերը սրբելով ձեռքին կոնակովը) Խնամի՛, ալ մենք մեղի ենք, մէջերնիս օտար մարդ չըկայ. հալբերնիս, վախտերնիս հիմա շատ լաւ է. հարսնիք ընելէն վերջ ձեռք տահա եղան մը փարս կը մընայ: Հիմակուց հիմա եղայ պէտք չունիմ. եզներս կէնճ են:

ԱԿՈՐ (գիծի գաւաքը նորէն վերցնելով) — Ըսել է Իսնակին, հա՛:

ՄԱՐՍՈՒՊ — Հա, հա, Իսնակին. բա՛՛ պակներն ալ ներս կ'առնենք:

ԱՎՈՒՐ — Էս տարի, որ տէրը ողջ պահեց, եօթը կարաս դիմի պիտ լեցրենեմ: Ի՛նչպէս հարսնիք մը ընեմ, որ դեղ մը դեղով սփի ի բերան մնան: (Կը պտտաւտուի ելլելու, կը շոտկուի, կ'օշիկները կը հագնի) Ըսել է էդպէս, Իսնակին: Է՛հ, մնաք բարով, խնամի՛:

ՄԱՐՍՈՒՊ — Երթաս բարով, խնամի՛. Աստուծով Իսնակին: (Ակոր կ'ելլէ դուրս) Կնի՛կ, էս թասերն ու դիմին վերուր, դեղացիք ո՛ւր է ուր չէ կը հաւաքուին: Ես մէր գրացի բարսեղին հալը հարցնեմ դամ, տանիքէն ինչպէն պերի անկողինն է: (Դուրս):

ՆՈՒՆԻԿ (Իր աման-չամանը հաւաքելով ու ներս երթալով) — Մարո՛ւշ, էդ թասերն ու դիմին ներս բեր:

ՄԱՐՈՒՇ (կը մնայ առանձին, աչքերը գետին, մտածմունքի մէջ է):

ՆՈՒՆԻԿ (ներսէն) — Աղջիկ Մարո՛ւշ, կիտէ Ի՛նչ եղաւ քեզի. էդ ամանները հաւաքէ:

ՄԱՐՈՒՇ (կը ցնցուի, կ'երթայ թախտին

քով, կը վերցնէ խնամի Ակորին թաւը, կը նայի մէջը ու կրկին կ'անշարժաց: Բեմի ձախ կողմէն կը մտնէ իրեն տարեկից ազդիկ մը, Շուշիկ):

ՇՈՒՇԻԿ — Մարու՛շ, (Մարուշ կը ցնցուի) Մարու՛շ, դիտե՛ս, Մուրատը Հողգարի արտն է:

ՄԱՐՈՒՇ — Հա, գիտեմ:

ՇՈՒՇԻԿ — Քալէ երթանք ջուր բերելու.

կարելի է կը տեսնէք իրար:

ՄԱՐՈՒՇ — Ձէ, չէ, Շուշի՛կ: Ախ, էնպէ՛ս կ'ուզեմ հեղ մ'ալ տեսնեմ Մուրատը, հող չէ, թող հեռուէն ըլլայ: Անգամ մը միայն հանդիպեցայ իրեն, աղբիւրի ճամբան էր, լաւ է կուժը չինկաւ ուսէս ու չկտորուեցաւ, էնպէ՛ս կը դողայի:

ՇՈՒՇԻԿ — Որ էդպէս է, քեզի կ'ըսեմ քալէ երթանք աղբիւր, ջուրի:

ՄԱՐՈՒՇ — Ձէ, Շուշի՛կ: Գեղին մէջ հողար աչք, հազար լեզու: Մեր նըշանտուքէն տողին Մուրատ մեր տան դռնովն անցած չէ, վերջը պիտի ըսեն Մուրատ ու Մարուշ աչք ունք կ'ընեն իրարու. է՛հ, հայրս ալ որ խմանայ... չէ, Շուշի՛կ, չէ, չ'ըլլար:

ՆՈՒՆԻԿ (ներսէն) — Աղջիկ, Մարո՛ւշ, էդ դիմին ու թասերը Ի՛նչ եղան: (Շուշան կը փախչի դուրս: Դրան մէջ կ'երեւայ Նուսիկ) Աղջիկ Ի՛նչ է եզեր քեզի. լո՛ւս ըրէ:

ՄԱՐՈՒՇ (գիծի դրամն ու թասերը առնելով ներս կ'երթայ):

(Խորհէն կու գան կարօ Մարտուպ, Սրապ Դուկաս, Աբգար Թումաս, Արեւիկ Դուկաս, Ձիշօ Գրիգոր, Մելեան: Կու գան իրարու հետ, իրարու ետեւէ, խօսակցելով: Կը նըստին Մարտուպի տան առջևի ճտտարանին ու գանազան քարերուն):

ՄԱՐՍՈՒՊ — Որ էսպէս երթայ, էս դեղը պիտի փլի, պիտի փլի: (Կը տեղադրուի, սիկարա մը կը փաթէ, կը վառէ. ուրիշներ ալ կը հետեւին

իր օրինակին) Վախտին, էղէ, իշ-
խան, մեծ ու պղտիկ կար գեղին
մէջ խէր, պէրէքէթ կար:

ԱՐԵՒԻԿ ՂՈՒԿԱՍ — Ի՞նչ կայ, Մար-
տուպ:

ՄԱՐՍՈՒՊ — Տաճա ի՞նչ բլի: Էսօր էն-
պէ՛ս բաներ տեսայ, էնպէ՛ս բաներ
լսեցի: Ինչպէ՛ս բի, էտէն՞ խէր, պէ-
րէքէթ կար: Քանի մը շէրէկ ցորեն
կը ցանէինք, կային լեռայ չափ շէճ
կը վերցնէինք: Պարտքն ինչ է, չը-
կար: Քաղաւորին կու տայինք, ա-
ղային կու տայինք, Եկեղեցիին կու-
տայինք, նորէ՛ն փեթակ ամպար ցո-
րենով կը լենար: Հաշիւ բրէ, թոր-
կանց տունը քառսուն հոգի սեղան
կը նստէին: Վախտին ար-նամուս
կար, ամէն մարդ իր նամուսին տէրն
էր:

ԱՐԳԱՐ ԹՈՒՄԱՍ — Ախր ի՞նչ է եղեր,
Մարտուպ:

ՄՐԱՊ ՂՈՒԿԱՍ (կասկնայ ձեռքներով
Մարտուպի խօսքերը) — Ըսել է տա-
ճա շատկցա՞ք:

ՄԱՐՍՈՒՊ — Այաֆրանկա՞, Այաֆրան-
կա՞... չը ըլ ամշնար, իրիկուն-առ-
տու ժամ կու դայ, խաշահմբուրի կը
մտենայ: Ճա՛հի կնիկ բածո՞ղ մին-
չեւ քթին ծէրը կը ծածկէ լաշակով:
Էսորը մինչեւ ճակատին կէսը բաց է:
Կ'ըսես մէյտան է, մէյտա՞ն: Այ ի՞նչ
բսեմ՝ պասմայով շալվա՞ր, կապե-
րով գոնորա՞յ...

ԱՐԵՒԻԿ ՂՈՒԿԱՍ — Ես բան չհասկցայ:

ՄԵԼՔՈՆ — Ծօ, ալ ի՞նչ բէ, լոս որ ք-
սէ՛ լուսնկայ հասկցիր:

ՉԻՉՕ ԳՐԻԳՈՐ — Էս օր ես ըլ տեսայ,
Մարտուպ: Էդ ի՞նչ կէտիչ է: Էդ
հարսին շրթածը շմնաց. էքնոյնեց
չէն տունը տակնուվրայ ըրաւ: Ես
ի՞նչ գիտեմ, ելաւ ձէնձնեց թէ տէք-
րը իրեն ծուռ աչքով կը նայի:

ՄԱՐՍՈՒՊ — Էդ կնկան երեսէն կ'իւլէ,
Գրիգոր՝ երես մը ունի, կ'ըսես մե-
տն չէ տեսեր:

ՄԵԼՔՈՆ — Հիմա ըլ ուղածին պէս կ'եր-

կրնայ-կը կարճնայ: Չի՞՞ Գրիգոր,
էն օրը, որ Մարկոս շրտուքի կ'եր-
թայ, էն օրը որ քաղաք բաժպակ կը
տանէ, մուրն ու լուսուն մարդը
քր'ազ ներս կը մտնէ:

ԱՐԳԱՐ ԹՈՒՄԱՍ — Ի՞նչ կ'ըսես, Միլ-
քո՛ն, գիտե՞ս:

ՄԵԼՔՈՆ — Արդար թուճառ, ինչ բսեմ,
աչքովս տեսայ:

ԹՈՒՄԱՍ — Ի՞նչ... Մա՞րդ կը սիրէ:

ՉԻՉՕ ԳՐԻԳՈՐ — Հա, հա, էրիկն ըլ
դիտէ, կ'ըսեն: Կ'ինէ, կ'նիկը տէի
խենթ կ'ըլայ:

ԹՈՒՄԱՍ — Ձրլի, որ... աղբիւրին դի-
մացինք...

ՄԵԼՔՈՆ — Հա, հա, գիտցածդ է...

ԱՐԵՒԻԿ ՂՈՒԿԱՍ — Ես ձեզի բան մը ք-
սե՞մ: Ես բան չհասկցայ:

ՄԵԼՔՈՆ — Իրա՞ւ չես հասկնար, Արե-
ւիկ Ղուկաս:

ՂՈՒԿԱՍ — Կը խոսաք, բաներ մը կ'ը-
սէք, ես բան չեմ հասկնար:

ՉԻՉՕ ԳՐԻԳՈՐ — Ձեմ հասկնար ինչու
կը ցանէք. իշտէ Նաճար Գրիգորն է,
հասկցա՞ք, Արեւիկ Ղուկաս, Կեղ մը
գեղով գիտէ:

ԱՐԵՒԻԿ ՂՈՒԿԱՍ — Հիմա Նաճար Գրի-
գորը Մարկոսին կնիկը կը սիրէ. էդ-
պէ՛ս. ա՛, հասկցայ, հաս... կը...
ցա՞յ...

ՄԱՐՍՈՒՊ — Իմ ատենս, էղա, իշխան,
կը բռնէին էդ տեսակ կնիկը ու սէլին
գրայ նստեցուցած՝ գեղին շորս կող-
մը կը դարձնէին... Մեռելին ետե-
ւէն խօսալը լաւ բուն չէ, Փախաթ ե-
ղած բան է. էս Ձիւխ Գոգոյին մօ-
րը, հետու ձեր օճախէն, լէչէկը գըլ-
խէն հանեցին, գլխիբաց սէլին գրայ
նստեցուցին:

ՄՐԱՊ ՂՈՒԿԱՍ — Ողորմած հոգի մէրս
կը պատմէր, որ Բաշաբցոնց տունը
լաւ զուտնա փչող մշակ մը կու դայ-
ամա ի՞նչ մշակ... մէկ շէրէկնոց ճը-
ւալը մէկ ձեռքով կը վերցնէ եղեր:
Ձիւխտին մեծ մայրը էդ մշակին զու-
նա փչեղուն ու ուժին է վատեր:

ՄԱՐՍՈՒՊ — Էսոնք իմ օրով եղած բաներ են. ես շատ բան չեմ յիշեր, մինակ իջ յիջեմ, որ էդ կնիկը, ոչինչ վրայ երեսն ի վար ինկեր, մազերով երեսը ծածկեր կուլար. սէլը քաշողը Պոզոյենց երկու գոմէշներն էին: Հիմա, որո՞նն ինչուն պէտքն է:

(Հեռուէն կ'երեւայ Նախարարի գործար, ու կը մտնենայ նրատողներուն: Արեւիկ Ղուկաս կը հագայ ու միւթը կը փոխէ):

ԱՐԵՒԻԿ ԴՈՒԿՍՍ — Ըսել է հօր Մարտինին կը վարէիր, Սրտոյ: Բարեւ, Նաճար Գրիգոր, բարեւ:

ՆԱՃԱՐ ԳՐԻԳՈՐ — Ասածու բարին:

ԱՐԳԱՐ ԹՈՒՄՍՍ — Նաճար, վաղը էդ արօրը բերեմ, չի՛նէ:

ՆԱՃԱՐ ԳՐԻԳՈՐ — Հա, Թումաս, բէ՛ր, չի՛նեմ: (Կը նստի: Ինք հագիւ մըստած՝ Կարօ Մարտապ ոտքի կ'ելլէ ու կը հեռանայ):

ՆԱՃԱՐ ԳՐԻԳՈՐ (զարմացած կը մայի ետեւէն) — Ի՞նչ է եղեր, ի՞նչ կայ:

(ՎԱՐԱԳՈՅՐ)

ԱՐԱՐ Բ.

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Գիւղին դաշտերը տանոց մաւրան, խորքի վարագոյրը արտեր կը ներկայացնէ, հնձուելու վերայ: Տեղ-տեղ մէկ-երկու ծառ-խորքը, հեռուն, լեռներ: Մարուշ կը մտնէ մէկ կողմէն: Ձեռքին կայ հօր տարուելիք հացի ծրարը: Կանգ կ'առնէ, ձեռքը նակտին դրած կը դիտէ հեռուն. երկու քայլ կ'առնէ, կողքէն ու ետեւէն կը լսուի Մուրատի փափսուեալ ձայնը:

ՄՈՒՐԱՏ — Մարո՞ւշ, Մարո՞ւշ:

ՄԱՐՈՒՇ (արտօրանալով երկու քայլ կ'առնէ, փախչելու պէս):

ՄՈՒՐԱՏ — Մարո՞ւշ, կեցիր Մարո՞ւշ (Մարուշ կանգ կ'առնէ. կռակը դարձուցած տղուն: Կ'երեւայ Մուրատ: Մարուշ կը դառնայ տղուն, կը մնայ անշարժ արձանի պէս) **Հօրդ հաց կը տանիս:** (Մուրատ երկու քայլ կ'առնէ, բաւական կը մտնենայ

Մարուշին) **Մարո՞ւշ, եզներս Հողդար ձուցի, համբաղ պահեցի:** (Լըռուութիւն: Մուրատ կ'առնէ վերջին քայլն ալ ու արդէն կանգնած է Մարուշին շատ մօտ, միշտ դիմացը. աչքերուն մէջ համբայրին ծարարը, ծարարին կրակը): **Մարո՞ւշ:**

ՄԱՐՈՒՇ — Մուրատ, մա՛րդ կը տեսնէ, Աստուած իմ, մա՛րդ կը տեսնէ, դե՛ղ մը գեղով խայտառակ կ'ըլլամ:

ՄՈՒՐԱՏ — Մարո՞ւշ (թեւորուն մէջ կ'առնէ Մարուշը. Մարուշ կը դիմադրէ): **Հեղ մը, Մարո՞ւշ:**

ՄԱՐՈՒՇ (քփրտալով տղու թեւորուն մէջ) — **Չէ՛, չէ՛, Մուրատ, ամօթ է. ա՛խ, Աստուած իմ, հա՛յրս, Մուրատ, հա՛յրս...** (Մուրատ կը համբարէ Մարուշը: Մարուշ ե՛ւ կը դիմադրէ. ե՛ւ կը յանձնուի: Կողքի ծառերուն մէջէն կը լսուի խշրտուէ մը: Մարուշ կը ցնցուի, կը հրէ Մուրատը. մտիկ կու տայ):

ՄԱՐՈՒՇ — Մուրա՛տ, տեսա՛ն մեզ :
Մուրա՛տ, աւելի լաւ էր ես մեռնէի :

ՄՈՒՐԱՍ — Ձէ, չէ, էդպէս մի՛ ըսեր,
էդպէս մի՛ ըսեր :

ՄԱՐՈՒՇ — Հայրս որ ի՛մանա՛յ...

ՄՈՒՐԱՍ — Մորդ չկար, Մարո՛ւշ,
մարդու ուքի ձայն չէր. երեւի այժմ
եւր էին :

ՄԱՐՈՒՇ — Ձէ, չէ, մորդ էր. ես դի-
տեմ, կը դռամ : Գնա՛, Մուրատ,
չո՛ւս գնա :

ՄՈՒՐԱՍ — Մարո՛ւշ :

ՄԱՐՈՒՇ — Ձէ. գնա՛, Մուրատ :

ՄՈՒՐԱՍ (կ'անհետի քուփերուն մէջ) :

ՄԱՐՈՒՇ (կը մնայ անշարժ ու աչքերը
սեւեռած՝ Մուրատի գացած կողմը :
Գլխու լաշակին ձեռք տարած է քիչ
մը. աչքերուն մէջ սակայն կրակը
կայ չյագեցած սիրոյ) :

ԿԱՐՕ ՄԱՐՍՈՒՊ (ձայնը քեմի աջ կող-
մէն) — Աղջի Մարո՛ւշ... (Մարուշ
կը գնցուի. կռակը կը դարձնէ Մու-
րատի գացած կողմը. ձեռքէն ինկած
հացի ծրարը կը վերցնէ ու կը պատ-
րաստուի իջնելով դէպի հոր ձայնին
կողմը : Կ'երեւայ Մարտուայ, քեմի
աչքէն : Քրտնած, յոգնած, ձեռքին
մանգալ) Աղջի՛, էդ հացը ո՛ւր մը-
նաց : (Մարուշ ծրարը կ'երկարէ)
Աղջի՛, էդ մէրդ ինչո՞ւ չեկաւ ու քեզ
դրկեց :

ՄԱՐՈՒՇ — Մայրս տունը դորժ ունէր.
ըսաւ՝ էսոր հացը դու տար :

ՄԱՐՍՈՒՊ — Տար ծրարը, հէ, հո՛ն,
ծառին տակ դիր : Ետքը գնա՛ րամ-
պակի վարի կորիէն մէջի դռու՛մը
փրցուր, տուն տար. էսոր տեսայ
բաւական ժրեր է :

ՄԱՐՈՒՇ (կը մնայ կանգնած. աչքերը
հեռուն, Մուրատի գացած կողմը) :

ՄԱՐՍՈՒՊ — Մարո՛ւշ, քեզի կ'ըսեմ,
ի՛նչ է, հիւսնո՞ղ ես, ինչո՞ւ սառեր
կայներ ես :

ՄԱՐՈՒՇ (կը շարժի դէպի դուրս, քեմին
աչքը, հոր եկած կողմը. կանց կ'առ-

նէ, կը դառնայ հորը) — Դռու՛մը ո՞ր
կորիէն մէջ է :

ՄԱՐՍՈՒՊ — Վարի կորիէն, վարի կո-
րիէն. ըսել է շլոնգի՛ր. Մարուքնց
արտին կողմը : (Մարուշ կը թալէ,
երբ կը հասնի քեմի կողքին) Մա-
րո՛ւշ (Մարուշ կանգ կ'առնէ ու կը
դառնայ հորը), տուն որ երթաս, էդ
թեւերուդ շաւաները հանէ : Ի՞նչ է,
հարսնի՞ք է, թէ Զատիկ : էդ տեսակ
ճիւղ-պիւղ բաները ամօթ բաներ են :
էդ շաշակդ աղէկ չտէ : (Մարուշ
կ'իլէ դուրս : Մարտուայ նրկար կը
նայի ետեւէն : Քեմի ձախ կողմէն,
գիւղի կողմէն կը լուսի Մարուշի մօր
ձայնը) :

ՆՈՒՆԻԿ — Աղջի Մարո՛ւշ... ո՛ւր մնաց
էս աղջիկը : Մարո՛ւշ (ու կ'երեւայ
քեմին վրայ) : Արի՛մարդ էդ աղջիկը
հացդ բերա՞ւ : (Մարտուայ լուս է,
հերստած) Քեզի եմ, արի՛մարդ :

ՄԱՐՍՈՒՊ (չոր) — Հա, բերաւ :

ՆՈՒՆԻԿ — Հերստեք ես, մարդ, ի՛նչ
է եղեր :

ՄԱՐՍՈՒՊ — Չէլպէթ կը հերոտեմ.
բանի դորժի ատեն շաւաները չ'ուէն
պակաս չեն : Ի՞նչ է, հարսնի՞ք է, թէ
Զատիկ :

ՆՈՒՆԻԿ — Ի՞նչ կ'ըլլայ, արի՛մարդ,
նշանուած աղջկայ հաւաս է :

ՄԱՐՍՈՒՊ — Հա, հա, նշանուած աղ-
ջիկ ըսելով էսոր շաւաները թող թե-
ւէն չ'անէ, վաղն ըլլ նշանածը դրան
վրայէն կ'անցնի տէյի, թող փարջն
տանէ աղբիւր վազէ :

ՆՈՒՆԻԿ — Մարդ, ճահել աղջիկ է :

ՄԱՐՍՈՒՊ — Ձէ՛նդ. ճահել աղջիկ է-
քու ժամանակդ դուն ճահել աղջիկ
չէի՞ր : Հայտէ, գնա՛ վարի կորիէն,
աղջիկդ հոն է, դռու՛մը խոչորցեր,
ժրեր է, ըսի որ տուն տանի :

ՆՈՒՆԻԿ — (Կը թալէ դէպի դուրս. վա-
րագոյրը կ'իջնէ արտերուն ու դառ-
տերուն վրայ) :

(ՎԱՐԱԳՈՅՐ)

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԿ

ԳԻՒՂԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԿԸ

Նախորդ տեսարանի խորքի պատասառ, որ գիւղի դաշտերը կը ներկայացնէր, արագօրէն վեր կը փաշուի: Երեւան կու գայ պատասառ մը, որ գիւղի եկեղեցին կը ներկայացնէ, իր բաց դուռով: Եկեղեցին քովը բաց տարածութեան մը ետք տուներ կ'երևին: Հետեւն դաշտերն են նորէն ու լեռները: Բնմի կողքին նախորդ տեսարանի կողքի խաւաքտաներն են, կամ այլ խաւաքտաներ, ծառեր ներկայացնող: Սրահէն դիտած, եկեղեցին պատասառին աւելի ձայն կողմը կ'իյնայ: Սրահէն դիտած՝ քեմի առաջամասին մտերը, երկու պատու կը խօսակցին: Եկեղեցին դուրս ելած ու դըրան առջեւ են, ու կամաց-կամաց խօսակցող պատաններուն կը մտնեն ուրիշ կիներ, գաւազան տարիքի:

ՁԱՐԴԱՐ — Ախր կը խօսին, Հոռո՛փ, ես ինչ գիտեմ (քախտուիմ տուփը կ'երկարէ):

ՀՈՌՈՓ — Չաւար Կարօ Մարտուպն ըլկ'ընէ ես աղջիկ ունիմ:

ՁԱՐԴԱՐ — Մարտուպն ո՞վ ումի՞չ կ'ընէր, մէրս, քորս. սուրբի պէս աղջիկ էր:

ՀՈՌՈՓ — Մի ըսեր, Ձարգա՛ր, խելօք կատուն է զողջեր ժամուն մտը: Հիմակու աղջիկնե՛րը... (Քրախտաւր քթին ծակերէն վեր խոռացնելով) Հիմակու աղջիկնե՛րը պոյ մը գետնին վրայ են, պոյ մը գետնին տակ: Սուս չըլլայ, Ձարգա՛ր:

ՁԱՐԴԱՐ — Սո՛ւտ... Տեսնող կայ եղեր, Հոռո՛փ, էնպէս գրկուեր են, որ մէջերնին հով չ'անցնիլը եղեր:

ՀՈՌՈՓ — Թո՛ւ, սէր է եկեր ստինոցները: Ես ինչ գիտեմ, մէրս, քորս, տարի մը նշանուած մնացի՛ նշանածիս երեսը չտեսայ: Հիմակուայ աղջիկնե՛րը չեն ըլ պարտկուիլ: Աստուած օճախ պուճախէ հետու ընէ, աղջիկայ ու աղի տէր ենք:

ՍՈՒԳԻԿ ԽԱՌՈՒՆ (կը մտնենայ իրենց: Յաջորդ խօսակցութեան քնթացքին կիմ մը ես կը մտնենայ խումբին, ու ունկնդիր կ'ըլլայ գլուխը շարժելով միշտ, իբրև հաւանութեան կամ ցաւի նշան: Մէկ-երկու կիմ ալ տանց խումբին քով գալու, քեմի ձայն կողմէն դուրս կ'ելլին, մէկ-երկու տղամարդ ալ կը սկսին եկեղեցին դուրս գալ ու կու գան քեմին աջ կողմը, ծառի մը տակ, քիչ մը ետեւօք):

ՁԱՐԴԱՐ — Ողորմի Աստուած:

ՍՈՒԳԻԿ ԽԱՌՈՒՆ — Ողորմի հողուդ, Ձարգա՛ր, էսոր ուշ մնացեր ես:

ՁԱՐԴԱՐ — Հոռո՛փին հետ խօսքի բռնրակցանք:

ՍՈՒԳԻԿ — Լսեցի, որ աղադ կը նշանեն:

ՁԱՐԴԱՐ — Է՛հ, ո՛ւր է աղամարդու աղջիկ մը որ ըլլի... Հիմակու աղջիկնե՛րը միեւնէ էր նանցը տունը երթալու չափ տալը չունին: Լսեցի՞ր Կարօ Մարտուպին աղջկան շնորհքը:

ՍՈՒԳԻԿ — Ի՞նչ կայ, Ձարգա՛ր:

ՁԱՐԴԱՐ — Գեղին բերանն է ինկեր, դուն ըլ բանէ լուր չունիս: Երէկ նըշանուեցան, էսոր ճամբուն վըրայ շարժախ լէյլի կը խաղան. փըշերու ճամբուն վրայ պաշտուակի ձէնը եայլան է բռներ: Երթամ մէրս, քորս, երթամ, աղէկ միտքս ինկաւ, կովը տաւա չեմ կթեր. խեղճ հայւանը հիմա աչքը հայոց եղաւ:

ՍՈՒԳԻԿ — Ո՞վ է տեսեր, Ձարգա՛ր:

ՁԱՐԴԱՐ — Ես ինչ գիտեմ. գեղին բերանն է, գեղին բերանը, Սուգի՛կ: (Կերթայ: Միւս կիներն ալ իրարու հետ խօսելով, կամաց-կամաց կ'ելլին քեմի ձայնէն, մինչ ամոյն մէկ երկու տղամարդ ես եկած կանգնած են աջ կողմի ծառին տակ: Կարօ

Մարտուայ կ'ելի եկեղեցիէն, հետը գիւղացի մը: Կու գան կը միանան ծառին տակ կանգնողներուն):

ՄԱՐՍՈՒՊ .— *Ողորձի Աստուած:*

ԾԱՌԻՆ ՏԱԿ ԵՂՈՂՆԵՐԸ .— *Ողորձի Հոգուգ, Մարտուայ:*

ՄԱՐՍՈՒՊ .— *Էղ Մարգարենց ջուրի խրճազի բնա՞ր վերջացաւ:*

ՄԻՆԸ .— *Անցեալ օր նորէն կուուեր են ջուրին համար:*

ՄԱՐՍՈՒՊ .— *Աղուոր բան չէ, ամօթ է: Զեւ մը գտնալու, հաշտեցնելու է (եկեղեցիէն դուրս կու գայ էզնոյենց հարաբ' վարդեր, գարդարուն, բարձր կօշիկ հագած, պամայով շալվար: Երկուքի հիւսած երկար մագերու ծայրերէն կախած է պոյմայ: Կը քալէ շորտուելէն: Կարօ Մարտուայ ալ չի կրնար ինքզինք գայել: Արախչիին ծայրը ծալիին մէջ տեղաւորելու պահուն կը ճշմարէ վարդերն ու անոր շորտուով քալելը: շարժումը կը մնայ օդին մէջ. ճայուածքով կը հետեւի վարդերին, որ դէպի բեմին ձախը կ'երթայ):*

ՄԱՐՍՈՒՊ .— *Շորտու, խանրձ հարս: Էդ քիչ է, քիչ, տահա՞ շորտու:*

ՎԱՐԳԵՐ (կանգ կ'առնէ, ետ կը նայի ու) .— *Քեզի ի՞նչ, խոֆած:*

ՄԱՐՍՈՒՊ .— *Անամօթին նայէ, հայասորո՞ւ ինչ (աչքերը լայն կը բանայ, ձեռքերը կը դողան) Քեզի համար Աւետարանին մօտենալ հարամ է, հարամ: Ես էգ տէրտէրին ինչ ըսեմ որ...*

ՎԱՐԳԵՐ .— *Դուն գնա՞ աղջկանդ փէշերուն տէր եղիբ: Քեզի ի՞նչ իմ շորտուս: Հեղ մը ահանջը ետեւ ըրէ, թէ աղջկանդ վրայ ի՞նչ կը խօսին:*

ՄԱՐՍՈՒՊ .— *Թրդ-թրդ, հմա՞ որ հասնիմ, էդ լեղուդ քոֆէ՞ն կը քաշեմ. անամօթին բանը նայէ:*

ՎԱՐԳԵՐ .— *Է, դուն ի՞նչ գիտես, խրճա՞մ: Աղջկանդ լայակը ծառին դըլին է կէր: Դեղ մը գեղով գիտեն: Փշերուն համբուն վրայ նշանածին*

հետ պալպուկին ձէնը գեղն է բռնեմ:

ՄԱՐՍՈՒՊ (իմքնիրմէն ելած, կ'ուզէ վագիլ հարս վարդերին վրայ. դրացի Մարգար կը բռնէ գինք):

ՄԱՐԳԱՐ .— *Դուն քեզի եկ, գրացի՛. կնկայ հետ չափուիլը լաւ բան չէ: Եկ երթանք, կնկայ հետ կուր բռնելը ամօթ բան է:*

ՄԱՐՍՈՒՊ .— *Մարգար, Կարօ Մարտուայ նամուսով ապրող մարդ է: Էդպէս անամօթին բերանը խնայը ինծի համար մեռնիլ է, մեռնի՛լ:*

(ՎԱՐԱԳՈՅՐ)

Վարագոյրը կ'իջնէ, ու տեսարանը կը փոխուի, արքան որ կարելի է արագ: Տեսարանը կը ներկայացնէ Կարօ Մարտուայենց տան ներսիդին: Մէկ կողմը, կերակուրի ցած, տախտակէ կլար սեղանը, վրան կերակուրը, պղնձէ ամանով, հողի պնակներ: Պատերը, կահ կարասին հայկական գիւղական տան մը կահ կարասին են: Մարուշ կանգնած է բեմին աջ կողմը, եւ սեղանի պատրաստութեան վրայ է: Նուրիկ բեմին ձախ կողմն է, դարձեալ զբաղած բանով մը: Բեմի ձախ կողմի ետեւէն կը մտնէ Կարօ Մարտուայ, դաժանացած դէմքով: Դանդաղ կ'առաջանայ դէպի բեմին աջ կողմը, տախտակէ ցածկեկ սետիրին վրայ կը նստի ու յուս իր ծխամորցը կը քաշէ: Մարտուայի դէպի սետիրը քայած ժամանակ, Նուրիկ, առանց մարդուն դէմքին նայելու՝

ՆՈՒՆԻԿ .— *Պէ մա՛րդ, չես ըսեք, թէ կերակուրի ատեն է, էսքան ատեն ի՞նչ կ'ընես գրսեբը: (Ամուսինին չպատասխանելուն գարմացած՝ Նու-*

նիկ կը դառնայ աւ կը ճշմարէ Մարտուպի գայրոյթը: Մարուշ՝ նոյնպէս: Նուսնիկ կ'անցնի քեմիմ աջ կողմը, Մարուշի քով):

ՆՈՒՆԻԿ.— Մարուշ, երկու հաց թրջէ:

ՄԱՐՈՒՇ.— Վրաս դող մը կայ, հիւանդ եմ, մա՛յր: Հացերը թրջուած են, մայր:

ՆՈՒՆԻԿ.— Ի՞նչ ունիս, աղջիկ, ո՛րտեղիդ կը ցատի (ձեռքը աղջկան ցակատին դնելով):

ՄԱՐՈՒՇ.— Ձե՛մ դիտեր, գլուխս կը ցաւի, սրտիս կայ վրաս:

ՆՈՒՆԻԿ.— Ճակատդ կը վառի, գնա՛ ներս, պառկէ: (Մարուշ դուրս կ'ելլի քեմի աջէն):

ՆՈՒՆԻԿ.— Ախր ի՞նչ է պատահեր, մա՛րդ: (Մարուշը չի պատասխաներ) Կերտուրդ առջեւդ բերե՛մ:

ՄԱՐՈՒՇ.— Էդ աղջիկը ո՞ր գնաց, կե՛հ:

ՆՈՒՆԻԿ.— Էսօր ամբողջ օրը զիթը ծուռ էր, հիւանդ եմ ըսուաւ. ճակատը կը բակի նման կը վառէր, անկողին դրնաց:

ՄԱՐՈՒՇ.— Թաթարխամի՛ն կոյի: Խորովէ՛ր ու զազազը տան առջե՛ւ կայնի:

ՆՈՒՆԻԿ (Մարուշի անէծքէն սարսափած)։— Աստուած ի՛մ, ի՞նչ է պատահեր, մա՛րդ:

ՄԱՐՈՒՇ.— Թէ՛ց գնա՛ Մարուշ Ակոն հոս կանչէ՝ թէ՛ղ եկէ՛ք: (Կինը տեղէն չի շարժիր) Հայտէ՛, գնա՛: (Նուսնիկ պահի ալ չի կրնար շինազանդիլ. լաչակը կը շտկէ ու դուրս կ'ելլի):

ՄԱՐՈՒՇ (կը մնայ նստած, ծխամորթը կը քաշէ իրարու ետեւէ: Ապա կ'ելլի, անկողիններու տակէն Աստուածաշունչը կը բերէ, ետեւի թերթերը կը բանայ, պատիկ մատիտով մը անուն մը կը սրբէ: Գիրքը քովը կը դնէ, ու կը շարունակէ ծխել: Ներս կը մտնեն Մարութ Ակոն ու Նուսնիկ):

ՄՈՒՐԱՏ ԱԿՈ.— Բարեւ, խնամի՛ Մարութ: (Իր սովորական ժպիտով կը մտնուայ ու կը նստի աթոռակի վրէ, Մարութի ձախիմ) Էս օր, հարսնիքին համար, քաղցէն մեծ սէյնի մը առի: Ա՛մա ի՞նչ սէյնի: Երեք ոսկի տուի, Փոխաթ աչքիս հինգ ոսկի կ'արժէ: Իշտէ բան մըն էր բաժա եկաւ: Հը, էսքան կայ: (Կնիլէ տեղէն, մատով լայն բոլորակ մը կը գծէ ու կը նստի): Քաղցի բարեկամս, Մարութո՛ս աղան, պղնձէ լաւ կը հասկնայ, էնոր միջոցով առի: Ես ինչ դիտնում, վրան ալ ի՞նչ թիւրթ պատկերներ՝ աղուընկայ, փէշիկմանի պատկեր, էժառհարի պատկեր: Խնամի, մէջտեղն ըլ մենծ պատկեր մը կայ՝ աղան, ըլլաքանի ձիուն վրայ հեծած, ետեւն ըլ աղջիկ մը, կը փախցնէ. էս աղան, ղէնկին տուեր, ձին էժառհարի վրայ կը քէ: Իբրաքոյ անսնելու բան է խնամի: Գալ շարթուն ըլ երթամ աման-չաման առնեմ, հարսնիքը կը մօտենայ. հը, վաղը մէկալ օր իսնակ է:

(Մարութ Ակոն կը նկատէ, որ միակ ինքն է խօսողը. Նուսնիկն ալ չի խօսիր, Մարութ մէջտեղ չկայ: Լուսքիւն պահ մը):

ՄԱՐՈՒՇ.— Ախր, խօսքը երկուք չեմ ուզեր ընել. էս օր քորոզ առ ու դնա՛, ես աղջիկ չունիմ տալիք:

ԱԿՈ.— Ի՞նչ կը խօսիս, խնամի՛, կատարէ՛, ի՞նչ է:

ՄԱՐՈՒՇ.— Ձէ, Ակո՛ր, Կարո Մարութ կատակ չի ընէր. էս իրիկուն մատնին կ'առնես ու կ'երթաս. է՛ս իրիկուն, Ակո՛ր, է՛ս իրիկուն. երկու խօսք չեմ ուզեր:

ԱԿՈ.— Խնամի, կ'երեսայ խալիխի խօսքին ահանջ ես դրեր: Հա՛, հա՛, խալիխի աչքը չի վերցնէր, որ Մուրատ Ակոն արտ կ'առնէ, եղներ կ'աւելցնէ, աղան կը նշանէ: Մուրատը նշանցի թէ չէ, ըսին, խօսեցան, որ Մուրատ անց մէջ մէկը ինքզինք կախեր է:

Խնամի, եղածը էս է, իմ պապիս մեծ
 Կոր քոյրը էծի ականջներ ունի եղեր.
 օր մրն ալ արտը կ'երթան, որ ինք-
 զինք կախեր է: Էսքան բան: Ալ ին-
 չե՛ր ըսես որ չխօսեցան: Հա՛, հա՛,
 խալիի խօսքին ականջ ես տուեր...
ՄԱՐՍՈՒՊ.— Ակո՛ք, էդ բաները իմ ա-
 կանջը չեն թրջեր: Ես նամուտի աէր
 մարդ եմ: Էս օրս իմ պատիւս էլին
 անամօթին բերանն է ինկեր: Ինծի
 համար մեռնիլ է, Ակո՛ք, մեռնի՛լ:
ԱԿՈՒ.— Ի՞նչ է եղեր, Մարտո՛ւպ, ի՞նչ
 է եղեր. պատմէ տեսնենք, է՛:
ՄԱՐՍՈՒՊ.— Գնա՛, Ակոր, զնա՛ սողուչ
 հարցուր: Էդ մատնին ո՞ւր է, կնի՛կ:
ՆՈՒՆԻԿ.— Մատնին Մանուչին մատն է:
ՄԱՐՍՈՒՊ.— Ես շատ երկար խօսելու
 գլուխ չունիմ: Գնա՛, էդ մատնին բեր,
 Ակորին տուր, որ տանէ:
ՆՈՒՆԻԿ.— Մա՛րդ, ազլիկը կրակներու
 մէջ կը վառի, մեղք է, ել մէջ մը
 հալը հարցուր:
ՄԱՐՍՈՒՊ.— Ես քեզի կ'ըսեմ էդ ազլը-

կան անունը մի՛ տար, կնի՛կ. թող
 երթայ սատկի:
ՆՈՒՆԻԿ.— Հիւանդ է, տնայէ՛ն, անկող-
 նին մօտեցր տես ի՞նչ հալի է:
ՄԱՐՍՈՒՊ.— Ձէ, չէ, որ սատկի՛ դե-
 բեզմանը չեմ երթար. էդ իմ ազլիկը
 չէ՛: (Ոտքի ելած է վերջին խօսե-
 րուս հետ) Ինծի ազլիկ չկայ: Գնա՛,
 մատնին բեր ու տուր Ակորին որ
 տանէ: (Նուցիկ դուրս կ'ելլէ ազլն):
ԱԿՈՒ.— Խնամի, էս բանը մի բնե-
 ռեղք են Մարտո՛ւչն ալ, սողա՛ Մու-
 բա՛նն ալ. մի ըներ, խնամի՛:
ՄԱՐՍՈՒՊ.— Ակո՛ք, խնամի-մնամի չը-
 կայ. նամուտը կայ: Էնոնք իմ նա-
 մուտիս մեղքըն: Երբ իմ պատիւս
 էլին բերանն է, ինծի համար մահ է
 մա՛հ, կր հասկնա՞ս: (Դուրս կ'ելլէ
 ձախէն) Քսուրդ ու մատնին նուշիկը
 կու տայ քեզի, կ'առնես ու կ'երթաս:
 Ես ազլիկ չունիմ այլեւս:
 (Երբ Մարտուպ դէպի դուրս կ'ելլէ՝
 վարագոյրը կ'իջնէ):

(ՎԱՐԱԳՈՅՐ)

(Մնացեալը յաջորդով)



Մ. Թ Ա Ի Բ Ի Զ Ե Ա Ն

«ԵՒ ԵՂԵԻ ԽԱԻԱՐ...»

Պարոյր Սեւակի յիշատակին

Անցո՛րդ,
կա՛նգ առ հոս,
Այս արկածավայր խուլ անային մէջ,
Ուր խաւարը իր ռոտայնն է հիւսած՝
Ցանցի մը նման,
Լոյսը հանահազած մտած է պստեան:

Անցո՛րդ,
կա՛նգ առ հոս,
Հս՛ս փշրուեցաւ
Մարդկային միտք մը կուռ ու հրավառ,
Ուր մշտաբորբոք կը շողարձակէր՝
Իբրեւ հրաբորբ, լուսարձակ փարոս:
Երկիւղածուքեա՛մք
Խոնարհէ այս սուրբ տարածքին առջեւ:
Անցո՛րդ, կա՛նգ առ հոս...

Անցո՛րդ,
կա՛նգ առ հոս,
Հայրենի երկրի այս սուրբ սարերուն,
Կը հախորէր հզօր ու թեւատարած,
Մտքի բարձունքի բեռնոյն վրայ
Արծիւներու պէս միշտ երկնաւայտ,
Փայլատակո՛ղ, վե՛հ, միտք մը շողարձակ:
Արծիւներո՛ւ պէս
Ինկաւ նետաճար,
Ամեն անունը ազգին կտակած:

Խոնարհէ՛, անցո՛րդ,
Պայծա՛ռ արեւին դէմն այս փշրուած...



Ողբո՛յն քեզ, Մարիա՛մ,
Որ հաշտեցուցիր անձս ինձի հետ,
Եւ կեանքս՝ մահուան:

Հա՛շտ եմ ես հիմա՛
Ճամբորդութեան հետ յաւիտենութեան:
Եւ խորիափելով կը շրջիմ աեա՛
Քաւիղներուն մէջ կեանքի ու մահուան:
Պիտ՛ քայեմ այսպէս դարերուն մէջ մութ,
Ուսիս՛ մարդկութեան մեղքերը անգութ:

Օ՛, ո՞ւր ես, Մարիա՛մ,
Դուն Տիրամայրը այս չա՛ր մարդկութեան:
Մեղասարս մարդիկ, տե՛ս, խոցեցին գիս,
Զարնելէ առաջ մանգաղը վզիս...

Տիրամայր, եկո՛ւր եւ որդեգրե՛ր գիս...
«Թէ՛ չէ ես այսպէս սարեւ չե՛մ կարող»:
Եւ ազատագրե՛ր:
Զիս այս գազրելի տմարդ մարդոցմէ...

Ողբո՛յն քեզ, Մարիա՛մ,
Տե՛ս, խոցուած եմ ես դուժմանքս,
Զաւակիդ նման բու բազմաշարչար...
Թէեւ գլուխս չքազաղրեցին
Փղշտացիներն փշեպակով,
Բայց ակօսեցին գլուխս մուրմով,
Հնձելէ առաջ կեանքս մանգաղով...

Օ՛, ո՞ւր ես, Մարիա՛մ...



Զո՛ւր աղաչեցի
«Միայն խաւարը թողնի՛... Հեռանայ...»
Խաւարի՛ փոխան,
Խաւարին մէջ ե՛ս տարբալուծուեցայ...

Ո՞ր միամիտն է յաղթած խաւարին,
 Որ միամտաբա՞ր,
 Մեր ճեխած կեանքէն վանելու համար,
 Եւ զինք արտաքսե՞լ գուր յանդգնեցայ -
 Միամտաբար զոչելով ի գուր՝
«Միայն խաւարը թողնի՛... Հեռանայ...»

Իսկ թէ յամառի ան չհեռանա՞լ՝
Թէ՛՜ «Մաւարին հետ կը ժեկնեմ ի՛նքս...»,
 Միայն խաւարը հայոց աշխարհէն,
 Միայն խաւարը մեր առօրեայէն
 Եւ քարայտուած մեր շրջապատէն,
 Նախանձի՛... կիրքի՛... գնում պայքարէն,
 Նեղմտութեամբ ընդ քամքսանքներէն,
 Սողոկումներէն,
 Հայպետոհրատի խուլ սենեակներէն,
*«Ե՛ր, ի՞ճի ԼՈՅՍ»*ի ժա՛նց փակնմքներէն,
«Թողնի՛... Հեռանայ...» :

Զուր չէ՛ր երբ ըսի,
Թէ՛՜ «Մաւարին հետ կը ժեկնեմ ի՛նքս...»,
 Եւ ես խոստումս ահա յարգեցի՛...

Սակայն խաւարը գնա՞ց... հեռացա՞ւ...
 Ի գո՛ւր խաւարին զէմ գրոնեցի...

ՄԻՔԱՏԷԼ ԹԱԻՐԻՉԵԱՆ



4. Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

Հ Ո Ր Ի Զ Ո Ն Ե Հ Ո Ր Ի Զ Ո Ն

Է.

Անշուշտ ճամբորդ եմ: Բայց այս ճամբան վերադարձ մըն է դէպի Պոլիս, ուր Իրաւարտական վիպական պիտի ստանամ, ու երկիր վերադառնամ: Ազատագրական յոյները շատցած են: Հայկական նահանգները ինքնավարութիւն մը ստանալու ճամբուն մէջ են:

Հիմա ետդարձի ճամբաները բացուած են: Մեր քայլերը հայրենի երկրի հորիզոնները չափելու վճռական որոշումը ունին: Մեր ժողովուրդի վերելքին ծառայելու ճամբաները միայն արժէք ունին մեր աչքին:

Այս խորհրդածութիւններով տարուած եմ, երբ մեր կառքը կը բարձրանայ վերելքներէն դէպի Տրապիզոն: Վար իջած եմ կառքէն, որպէսզի ձիերը կարենան վերելքը կտրել ու անցնել:

Կառք մը եկաւ վերէն: Ձիս տեսած՝ անիկա կանդ առաւ: Ներկայսնայի մարդ մը իջաւ անկէ ու մտեցաւ ինձի.

— Դուն Կարօ Սասունին ես...

Երեսը նայեցայ ներքին ջերմութեամբ.

— Դուն ալ Ռուբէնն ես:

Գրկախառնուեցանք: Կէս ժամ խօսակցութիւն: Արդէն իրար ըմբռնած էինք:

— Մուշ վերադարձիր, հոն շատ դուրձ կայ:

Խօսք առի շուտով վերադառնալ:

Համբոյրով բաժնուեցանք:

Ճամբաները իրենց վճռական կամքը կը զործադրէին: Ես ուղղուեցայ դէպի Պոլիս, Ռուբէն՝ դէպի Մուշ:

Թէ ճակատագիրը ի՞նչ փուլերէ պիտի անցընէր մեզ, անտեղեակ էինք: Նոյնիսկ այդ մասին մտածման նշոյլն իսկ չկար մեր մտքին մէջ:

Ես հասայ Պալիս եւ վկայական ստացայ: Գործիչը կը դառնար իրաւարան:

Սակայն իրաւարանը կը մնար միշտ գործիչ...
Ճամբաներուն կը յանձնեմ անոր ճակատագիրը...



Պալիս վերադարձիս՝ կեանքս նոր փուլերէ անցաւ:
Ջեկուցումներ՝ Բիւրոյին, Կ. Կոմիտէին ու Ուսանողական Միութեան:
Շատերու աչքին, երկրի գործիչ մըն էի:
Երկիր պիտի վերադառնայի, Թուրքիին հետ գործելու:
Համադրեցէք, եթէ կրնաք:

Ես իմ ներաշխարհով միայն կ'ըմբռնէի քնականութիւնն իմ նկարագրիս, որ ուրիշի աչքին հակասական երեւոյթ մը կրնար նկատուիլ:

Աշխարհը իր ճանապարհով, ես իմ ուզիով: Ուղղակի եւ անշեղ:

Ոչ մէկ տուրք անունի եւ դիրքի համար:

Վազըը շատ էր: Ճանապարհները անհաշիւ... Արձանանալու Ժամանակ չունէի:

Ս. Ջաւարեանի գուրգուրանքը կը վայելէի: Տարօնէն ստացած գնահատական զեկուցումները մեծապէս կ'որոտիացնէին մեր խտտարարոյ ղեկավարը: Դրական գործերը գնահատող ղեկավար ընկերները նոր օգնական մը պտած էին: Այդ գուրգուրանքը հոգեկան վարձատրութիւն մըն էր ինծի համար: Համայնարանի տարուան մը կորուստը մտցած էի:

Ղեկավար ընկերները ուրախ էին՝ Հայաստանի Ռայոնական Ժողովի յուրջ որոշումներուն ծանօթանալով: Ատիկ աւելի ուրախ էին, որ Գրիգոր Լուսաւորիչի հիմնած Սուրբ Կարապետ վանքի տօնակատարութիւնը վերածուած էր Հայ գիրերու դիւտի հազար հինգ հարիւրամեակի հանդիսութեան մը: Հայութեան վերելքի յոյսերը շտացած էին:

Հայաստանի նահանգները Միացեալ Հայաստանը վերակերտած էին այդ քարձուներէն:

Ու զեկուցումներս նոյն խանդավառութիւնը կը փոխադրէին Պալսոյ հայութեան:



Այդ օրերուն, Հ. Յ. Դաշնակցութեան Ուսանողական Միութիւնը նախաձեռնեց տօնելու Հայ գիրերու դիւտին հազար հինգ հարիւրամեակը:

Ս. Կարապետի տօնի մասին տուած զեկուցումներս խանդավառած էին շրջապատը:

Գիրերու դիւտին տօնը փոխադրուած էր Կ. Պալիս:

- Ամբողջ հայութիւնը շարժման մէջ էր:

Բերայի Հայոց մեծ հկեղեցիին մէջ պաշտօնական հանդէսը տեղի ունեցաւ, որուն իրենց մասնակցութիւնը բերին եկեղեցականներ, կուսակցութիւններ եւ մտաւորականութիւնը:

Ձգարձանաք, եթէ ըսեմ, որ Թալաթը եւ քանի մը նախարարներ եւս ներկայ հղան եւ իրենց յարգանքի խօսքը ըսին Հայ Ժողովուրդին:

**

Ուսանողները աճապարեցին ապացուցանելու, թէ Սուրբ Մեսրոպի եւ Սուրբ Սահակի հարազատ աշակերտներն են: Տօնակատարութեան յայտարարութիւնը տրուած էր արդէն Վեգատամարտին:

Բերայի Փրթի Ծանի ընդարձակ թատրոնին եւ պարտէզին մէջ տեղի պիտի ունենար հանդէսը:

Ակնունի, Զարգարեան եւ ուրիշներ պիտի խօսէին: Որպէսզէր համադրային բնոյթ ստանար հանդէսը, Հնչակեաններու, Ռամկավարներու եւ ուրիշ հոսանքներու համաձայնութիւնն ու մասնակցութիւնը կրցած էինք տպագովել:

Հանդէսը խանդավառ մթնոլորտ մը ունէր:

Ուսանողութեան անունով՝ բեմին վարիչն էի:

Անձոտանայի տօնակատարութիւնը կը վերջանար անսահման խանդավառութեան մը մէջ, համազգային մթնոլորտով:

Հասարակութեան մեծ մասը արդէն դատարկած էր սրահը եւ պարտէզը:

Ուսանողներու եւ հասարակութեան մէջ իրարանցում մը նշմարեցի եւ բեմէն վար իջաչ եղելութիւնը իմանալու: Ուսանողներէն ոմանք ինծի մօտեցան: Երկու ուստիկաններ անոնց կ'ընկերակցէին:

— Ո՞վ է այս հանդէսը կազմակերպող ուսանողներուն պատասխանատուն, — հարցուց սասիկանապետը:

— Ես եմ, էֆէնտի, ի՞նչ կը փափաքէիք:

Իմ հանդարտ պատասխանը առնելով՝ ուստիկանը քաղաքավարութեամբ խնդրեց, որ իրենց ընկերանամ ուստիկանատուն, ուստիկանապետին լուստարանութիւն մը տալու:

Ես ընդունեցի ուստիկանին հրաւերը եւ անոնց հետ պարտէզէն դուրս եկայ: Բերայի ուստիկանատունը շատ մօտ էր հանդիսավայրին: Մենք մօտեցանք ուստիկանատուն, շուրջ տեսայ բաւական ուսանողներ, — Պօղոս Տէր Պօղոսեանը (վանեցի), Հրաչ Փափազեանը (սերասուցի) եւ Հնչակեան՝ Սարաֆեանը (վանեցի):

— Տքա՛ք, ինչո՞ւ կ'ընկերանաք ինծի, դուրսը սրճարան մը նստեցէք, ես շուտով դուրս կու գամ եւ կը գտնեմ ձեզ...

Անոնք յամառեցան: Մենք արդէն ուստիկանապետին նախասենեակն էինք:

— Ներս հրամմեցէք...

Ուստիկանապետն էր: Մեզի նայեցաւ. դիտցաւ, որ մեզմէ ոմանք արդէն իրաւարան են, միւսները՝ յաջորդ տարի վկայական պիտի ստանան:

— Ի՞նչ դործի վրայ էք դուք, կ'ուզէք անկախ Հայաստան ստեղծել:

Թթուած երեսին կը նայեմ.

— Պէյ էֆէնտի, մենք հայերէն պիւրբու տօնը կատարեցինք: Հազար հինգ հարիւր տարի առաջ այդ դիւտը կատարեց Ս. Մեսրոպ, որուն անունը միջազգային զրականութեան եւ հանրագիտարաններուն մէջ արձանագրուած է:

— Խօսքը այդ մասին չէ. մենք դիտեցք, որ դուք դիր ու գրականութիւն ունիք: Խօսքը այս մասին է... — ու ձեռքը երկարեց սեղանին, տրցակ մը դրոշմաթուղթ ցոյց տալով:

Տիզրան Մեծի, Լուսինեան եւ Ռուբինեան թաղաւորներու նկարներով
զրուածաթուղթեր, որոնք առանց մեր գիտակցութեան դրաժճաճառներու ցըր-
ւիչները ծախած էին հասարակութեան: Երեւի Վինետիկի եւ Վիեննայի Միտ-
թարեաններու տպածներն էին:

— Մենք տեղեակ չենք, որ այսպիսի պատկերներ ծախուած են հան-
դէսի ընթացքին...

Ա՛լ խօսքս չկրցայ շարունակել: Ոտտիկանապետը հրամայեց ոտտիկան-
ներուն, որ մեզ բանա առաջնորդեն:

Գուրս եկանք՝ առանց մտահոգուելու:

Բայց մեզ դրին գոց կառքի մը մէջ եւ կէս ժամ ճամբայ կտրեցինք:
Երբ վար իջանք, նոր հասկցայ, որ գողերու եւ մարդասպաններու բանաը
բերած են մեզ:

Մեզ առաջնորդեցին գնտունը:

Անկիւն մը, շոր խաբրի մը վրայ տեղաւորուեցանք: Մեր շուրջը լեցուն
էր այլանդակ դէմքերով: Վէրքերով զարդարուած երես ու ճակատ, կոտոր-
ւած բազուկ, ու կուրցած աչքեր շատ էին: Բայց անոնց շարժումներն ու
նիստ ու կացը կռիւ ընելու, պատկածները կոխկռտելու միտումը ցոյց կու
տային:

Ինքնապաշտպանութեան բնագոյով իրարու սեղմուած՝ մենք մնասկան
դէմք մը առինք:

Մեզ աչքով չափեցին: Անցան-դարձան մեր առջեւէն, բայց զգուշացան
որեւէ արարքէ:

Մեր ընկերները յաջողեցան քիչ մը ուտելիք ճարել՝ դանապանին մի-
ջոցաւ: Յաջորդ օրը, քիչ մը դրամ տուինք դանապանին, որ մեզի համար
«Ազատամարտ» մը դնէ: Յրուիչը, որ բանտերը կ'այցելէր թերթը սպասելու
համար, հայ էր եւ մեզի ծանօթ: Երկտող մը գրեցի Վարդգէսին, խնդրելով,
որ միջմտէ եւ մեզ այս զնտանէն դուրս հանէ:

Վարդգէս՝ իրեն հետ առած Գ. Զօհրապը՝ կը ներկայանայ Ներքին
Գործոց նախարարին եւ կը պահանջէ, որ մեզ ազատ արձակեն:

Մեր չորրորդ օրն էր զնտանին մէջ:

Այդ օրուան «Ազատամարտ»ը ստացանք: Սեւ շրջանակի մէջ Ս. Զա-
ւարեանի դէմքը տեսանք, ու անոր մահուան սուղը մեզ անհունօրէն յուզեց:
Բանտի նեղութիւնը մոռցանք: Մտի ցաւով գլուխնիս կախեցինք: Լուս էինք:
Իրարու հետ չկրցանք խօսիլ:

Յաջորդ առաւօտ, մեզ ազատեցին, պատուիրելով, որ պետութեան
դէմ վատ քայլեր չառնենք:



Մենք Զաւարեանի սուղը ապրեցանք: Սուղը համազգային էր, բայց
ուստոյններու համար Զաւարեանի հետացումը կ'որբացներ մեզ: Այդպէս էր
մեր ապրումը: Այդ աղիով լեցուած էինք:

Անոր գերեզմանին վրայ խօսեցան Ակնունի, Զարգարեան, Վարու-
ժան, Գ. Խաժակ, Գեղամ Տէր Կարապետեան, իսկ Ուստոյնական Միութեան
կողմէ՝ եւ Յաջորդ օրը, Յ. ձ. Միրունին ուղեց, որ խօսածս դրաւոր տամ:
Իրեն յայտնեցի, որ խօսածս զրի չեմ կրնար առնել: Հիմա ալ չեմ միշեր,
թէ հոն ինչպէս արտայայտած էի յուզմունքս: Քանի մը տող արձանագրուած

է այդ օրերու «Ազատամարտչին մէջ, գոր կ'ընդօրինակեմ այս տողերուն մէջ, իբրև յիշատակ»:

«Հ. Յ. Գաղնակցութեան Ռուսնոգական Միութեան կողմէ խօսելով՝ Կ. Սասունի քառ, թէ Զաւարեան 25 տարի շարունակ միշտ ուսանող մնաց, միշտ սարվազ ու սարվեցնող, շրջապատուեցաւ միշտ ուսանողներով: Աւելցուց, թէ հանգամանօրէն պարզել անոր մեծութիւնը, անմահացնել է զինք: Միայն սրտերը կը զգան Սիմոնի մզին: Եւ որքացած ուսանողութեան սիւսպովը նկատելով զինք, անոնց կողմէ վերջին յարգանքները մատուցց»:

Կը յիշեմ այս խօսածներս: Բայց աւելի յատակ կը յիշեմ առաջին նախադասութիւնը. «Մեր նազովրեցին մեռաւ, բայց նազովրեցին անմահ է...»:



Յուզումնահար այս օգիտով դիմաւորեցինք ձմեռը: Բայց յոյս ունէինք, որ հայութեան գարունը ինքնավարութեամբ պիտի ծաղկազարդուի:

Եւ իրօք, միջազգային Խաղաղութեան Ժողովը որոշեց Հայաստանի վեց նահանգներու ինքնավարութիւնը: Օտար երկու նահանգապետներ ճամբայ ելան դէպի Հայաստան, իրենց օգնական ունենալով Արմէն Գարոն, Վըրաւան, եւ որքան կը յիշեմ, Հնչակեան Մուրատ Պօյաճեանը:

Ու ես կը պատրաստուէի ճամբայ ելլել դէպի Տարօն:

Համախարհային պատերազմը սկսած էր՝ Սերպիոյ վրայ եղած յարձակումով: Թշնամիները դիրքաւորուեցան: Գերմանիա, Աւստրիա, Իտալիա, Պուլիարիա կողմեցին մէկ ճակատը, իսկ Ֆրանսա, Անգլիա եւ Ռուսաստան միւսը:

1914 տարին ցնցող փոշի մը մէջ մտաւ:

Թուրքիա տատամտումի մէջ էր: Մինչեւ Հոկտեմբեր կըցաւ իր լէզոքութիւնը պահել, միշտ համակիր մնալով Գերմանիոյ: Բայց Ռուսաստանի վախը իր ձեռքերը կը կապէին:

Հայկական նահանգներու ինքնավարութիւնը սառոյցի վերածուեցաւ: Հիմա մեր Ժողովուրդի դոյութեան պահպանումը կը դառնար մեր մտահոգութեան առարկան:

Գերմանիա Թուրքիոյ տուած էր Կոպէն եւ Պրէսլաու մարտանակերը, որպէսզի Համարձակութիւն ունենայ իր կողքին պատերազմի մէջ մտնելու ընդդէմ Ռուսաստանի:

Եթէ մեծ պետութիւնները ճամբայ ելած էին իրար խորտակելու եւ իրենց դերաստիճան դիրքերը ամրացնելու, մենք ալ ոտքի ելած էինք մեր դարաւոր Ժողովուրդը փորձանքերէ ազատելու համար:

Ես ճամբորդ էի: Պիտի երթայի Տարօն, ու հոն յժուէի Դուրան-Բարձրականդակի աշխատանքներուն:

Այդ օրերուն, Հ. Յ. Դ. Բիւրոյի հերթապահը Վանի Սարգիսն էր: Վերջին խորհրդակցութիւնը կ'ունենար ինծի հետ: Ներկայ էր նաեւ Ակնուտի: Հրահանգ-նամակներ կային ուղղուած Ռուսէնին եւ Արեւելեան Բիւրոյին: Պիտի անցնէի Թիֆլիսէն:

Սարգիսը քիչ մը Ս. Զաւարեանի նկարագիրը ունէր: Գործին նուիրուած դեկավար մըն էր: Վանի իր անցեալը արգէն յայտնի է:

Հոկտեմբեր 12ին, նաւ պիտի առնէի: Սարգիսը, ճիշդ Զաւարեանին պէս, եկած էր նաւահանգիսա՝ զիս ճամբու դնելու:

Համբուրուեցանք եւ ես նաւ բարձրացայ: Այդ եղաւ մեր վերջին համ-
բոյրը...

Ու այդ օր մեր նաւը անցաւ Վոսփորը:

Ու անցքը եղաւ իմ կեանքի նոր հորիզոնը, որքան ողբերգական, նոյն-
քան արդիւնաւոր եւ սիրտ ջերմացնող:

ՍԵՒ ԾՈՎՈՒ ՎՐԱՅ

Սեւ ծովուն վրայ:

Այնպէս անցեալը հորիզոններու ետին կը թողում:

Ծուռ, սրսորդ, արակերտ, գաղտնի գործիչ, ուսուցիչ, ուսանող ու
խրաւարան:

Այս ծովային ճամբորդութիւնս զիս կը մատնէ խորհրդածութիւններու:

Ծովը իրական ծովն է: Կեանքն ալ իրողութիւններու ենթակայ է:

Կարծես դարաշրջան մը բոլորած էի:

Կ'երթայի հայկական բարձունքներուն վրայ վերջակէտ դնելու կեան-
քիս: Գործել ու զոհուիլը մեր մաքին ամէնօրեայ արեւոմտման էր, վճռական
կոմքոմ ու բնական բմբունումով: Այդպէս կազմուած էր մեր ներաշխարհը:
Կեանքի եւ ապրումի շղթաները իրարու ձուլուած:

Հոգեկան ապրումները քննէ որքան կ'ուզես: Այնպէս մտնելն ու ըմ-
բանումները լրիւ պատկերել պիտի չկարենաս:

Սեւ ծովու վրայ եմ, այս մտածումներով:

Կը ճամբորդենք ռուսական նաւով մը, որ մեզ պիտի հանէր Տրապիզոն:
Ու ահա առնուած ենք Քնդանոթի հարուածներուն տակ: Կոպէն եւ Պրէս-
լաւու զինուորական նաւերուն նաւաւարները գերմանացի էին: Գաղանի հը-
րաման ստացած էին Սեւ ծովն անցնիլ եւ սմբակոծել ռուսական նաւահան-
դիստներն ու նաւերը, որպէսզի Ռուսիա եւ Թուրքիա պատերազմի բռնուէին:

Ու այսպէս, Սեւ ծովուն վրայ կուռի բռնուած էի Թուրքիոյ գէժ, ա-
ռանց զէնքի:

Կոպէն ու Պրէսլաւու Քնդանոթի հարուածներէն ռուսական նաւ մը
խորտակուեցաւ: Մեր նաւուն ուղղուած զնդակները վրիպեցան: Նաւը ան-
պարանջով ինքզինք նետեց Օտեսայի նաւահանգիստը:

Դուրս եկայ որբի մը նման: Սասնոյ լեռներն ու Տարօնի աշխարհը
մնացին թրջական հորիզոններուն մէջ, ու ես ինքզինքս դտայ ռուսական ան-
սահման տարածութիւններուն վրայ:

Մտմտուքի մէջ եմ: Եթէ թուրքերը խորտակէին այս նաւը, ու ես ծո-
վածոյն ըլլայի, ատիկա պիտի ըլլար իսկական մահ մը, անշուք ու անար-
ժէք: Մինչդեռ ես կ'երթայի հայկական լեռներուն վրայ ազատազրգական շար-
ժումը վարելու: Ու եթէ հոն զնդակի զոհ դառնայի, ատիկա մահ չէր...

Հոգեկան իննթութիւնն իր ճամբան ունի, ոմանց հասկնալի, ոմանց
անըմբռնելի:

Ռուս-թրջական պատերազմն սկսած էր: Ու յաջորդ օրերուն զար-
մանքով տեսայ Պալքաններէն հասած հայ կամաւորական զունդ մը, որ Կով-
կաս կ'երթար Թուրքիոյ գէժ պատերազմելու...

Անոնց հետ Հասայ թիֆլիս եւ Բիւրոյին յանձնեցի Պոլսէն բերած նա-
մակներս ու յանձնարարականները:

Այդ մասին մանրամասնութիւններ արձանագրած եմ գրքերէս մէկուն
մէջ:

Մնացեալը նոր կեանքն է: Պատերազմի կեանքը, իր բոլոր վերելայ-
րումներով:

— Յուշերդ գրէ՛:

Ինչպէ՞ս գրեմ:

1914ի պատերազմին մէջն եմ: Մահուան եւ յաղթանակի փոփոխական
առօրեայ մը: Անցած ճանապարհները մարդկային կեանքի բազմազան երե-
ւոյթներու ցուցադրութիւն են:

Հայրենիքի ազատութեան խնդիր կայ:

Հայ կամաւորներու շարժումը ճանապարհներուն վրայ է դէպի Բա-
սէն, Ալաշկերտ, Պայազիտ: Բայց մեր նայուածքը ուղղուած է հեռու հո-
րիզոններուն, դէպի Վան, Տարօն, Կարին... ու աւելի անդին:

Սեւ ծովու բնական ճամբորդութիւնը զիս փոխադրեց Մասիսի բար-
ձունքները: Մովսսարը մնաց Հարաւ, արիւնոտ աշխարհի մը մէջ:

Նաւր, Երկաթուղին եւ կառքը աշխարհին բաժին մնացին: Ես ապաւի-
նեցայ ձիու մէջքին: Լէյլանը շկար: Ուրիշ կորովի ձի մը դատայ: Զիտն ա-
նունը Ալուշա էր: Ռուսական քաղաքականութիւն...:



Կովկասը ետուզեո՞ւի մէջ է:

Կամաւորական դուռնիքը արդէն ճամբայ ելած են դէպի Բաղրեւանդ եւ
Բասէն:

Հարուստ ու աղքատ սոջի են: Կուսակցութիւնները՝ բեմին վրայ:
Երկիրներէն խումբերը իրարու կը յաջորդեն:

Հարուստ ու աղքատ սոջի են: Կուսակցութիւնները բեմին վրայ:

Մասաւորականներ, գրադէտներ, ուսանողներ, կանայք եւ օրիորդներ
կազմակերպուած շարժումի մէջ են:

Կեանքը պատերազմական բոցավառումի կերպարանք ստացած է:

Պատասխանատու մարմինները գործի վրայ են, հռանդուն ճիզով:

Ձէնքի ձայնն է, որ կը հնչէ ամէն կողմ:

Հայաստանի ազատագրումը կայ ամբողջ Հայութեան մտածելակերպին
եւ շարժումներուն մէջ: Ռուսաստանը՝ թիկունք այս ուժին:

Երէկուան Ֆետայական խումբը դարձած է Ֆետայական դունդ, Հա-
ղար, Երկու Հաղար կամաւորներով: Հին Ֆետայի ղեկավարներն ու մարտիկ-
ները, որ հայածուած էին ռուսական բռնակալութեան կողմէ, Հիժա գուրդու-
բանքի առարկայ էին, անշուշտ կայսրութեան տիրապետութիւնը տարածելու
թրքական Հայաստանի վրայ:

Հայերը այս երեւոյթը լրիւ կ'ըմբռնէին: Բայց թրքական արիւնոտ բրո-
նատիրութենէն ազատագրուելու երազը կը խանդավառէր ամբողջ Հայու-
թիւնը:

Շարժումը ազատագրական սպիտի ներշնչուած էր: Կար նաեւ ռուսա-
կան խոստումը՝ Հայկական ինքնավարութեան, անշուշտ ռուսական Հովանիին
տակ...:



Արդէն Բասէնի շրջանն եմ, պատասխանատու պատժումով: Չիտուր: 1914 Հոկտեմբերի վերջերն է, երբ մեր հայեացքը կ'ուղղենք Կարէնին, Վասպուրականին եւ Տարօնին:

Մեզի համար օրերու խնդիր է:

Ճամբաները երկարեցան հինգ տարիներու անվերջանալի կռիւներով, արեւծով ու յաղթանակներով:

Այս հինգ տարիներու պատմական կեանքը պատկերացում եմ հինգ հատրներով: «Ալպրիլեան եղեռնը բնական ակնոցով», «Հայաստան Ա. աշխարհամարտին», «Մայիսեան ապստամբութիւն», «Հայ-թրքական պատերազմը», «Փետրուարեան ապստամբութիւն»:

Ընթերցողին դիւրութիւն մը տալու համար՝ զարձեալ անցնիմ քանի մը ճանապարհներէ, որպէսզի կարելի ըլլայ ըմբռնել հինգ տարիներու անհաշիւ վերիվայրումները:

Պատերազմի տակին աժուռն արդէն Բասէն եւ Ալաշկերտ գրաւուած են: Հայութիւնը փրկուած է, ու մենք անոնց ապրուստը կը հայթայթենք, երիտասարդութիւնը կը զինենք, զպրոց կը բանանք, ուսուսական բանակին կ'օգնենք:

Ահա կարճատեւ շրջան մը:

Անակնկալ հարուած մը 1915ի Փետրուարին, Սարիղամիշին: Էնվէրի յարձակողականը կը վտանդէր Կարսը: Ու մենք կը նահանջենք Բասէնէն, Ալաշկերտի մէկ մասէն: Իրոյի դուռը այդ շրջանին մէջ կը զործէր, ու Դըրուն ծնօտէն վիրաւորուած, փոխադրուած էր Թիֆլիս, մահացու վէրջէն բուժուելու: Ռուսական բանակը եւ Քեռիի դուռը արիւնալի ճակատամարտի էլլած էին Էնվէրի յաղթական բանակին դէմ՝ Կարսի, Արտասանի եւ Սարիղամիշի շրջաններուն մէջ:

Թուրքերը պարտուեցան: Անհաշիւ զոհեր տուին եւ 25.000 զերիներ:

Մենք Բասէնէն նահանջեցինք 1914ի վերջերուն, Կաղզուանի ճանապարհներով ու Բասէնի 30.000 հայութիւնը փոխադրեցինք աւելի ապահով շրջանները:

Այդ նահանջի օրերուն փոքրիկ արկած մը ունեցայ: Կաղզուանէն կ'անցնէինք դէպի Գողթ, Արարատեան դաշտ: Արաքսի այդ ժորին երկու կողմերը ջրտական ցեղախումբեր կային: Յարձակումի փորձեր ըրին, բայց մեր պաշտպանողական խումբերը հակահարուածը կու տային եւ ճանապարհը բաց կը մնար: Այդ ընդհարումներուն ընթացքին, այրում մը զղացի ծունկէս: Գնդակը անցած էր մորթս ճեղքելով եւ սկրթելով սոկորս: Ընդհարումէն ետք միայն ժամանակ ունեցայ թաշկինակովս վերքը կապելու:

Անցայ Թիֆլիս եւ Բասէնի ժողովուրդին տեղափոխութեան մասին զեկուցում տուի: Անմիջապէս գտայ տղթ՝ Տէր Դաւթեանը, որ ծունկս խնամեց: Հինգ օր հանդիստ, տպու ոտքի ելայ եւ պատասխանատու ժամիներնուն հետ հանդիպումներ ունեցայ:

Վէրքը զոցուեցաւ 15 օրէն:

Սարիղամիշի ճակատամարտին՝ թրքական պարտութիւնը նոր ճանապարհներ բացաւ իմ առջեւ:

Կամաւորական դուռները ուղղուած էին դէպի Վան: Ռուսական բա-

նակները վերադարձան էին Բասէնը, Արտաշանը, Աշաղկերաը, Պուլանուխը, Մանազկերտը :

Վանը այդ օրերուն գրաւուեցաւ :

Ռոստոմին Հեա, Երեւանէն ճամբայ ելանք զէպի Վան : Յազթական Վանը պիտի մտնէինք : Արամն ու ընկերները պիտի տեսնէինք : Վրամեանի, Իշխանի եւ միւս ընկերներու կորուստը պիտի ողբայինք :

Ապրեցանք այդ բոլորը : Հին ընկերները գտայ ու ջերմօրէն ողջագուրուեցանք : Կարծես տասը տարիէ ի վեր զիբար տեսած չէինք :

Մահէն ազատուողի օրը տարի մըն է :

Վերածնած Հայաստանը կը սկսէր Վանի ազատագրումով : Արամն էր հոն ու յազթական : Ռոստոմն ալ դարձած էր մեծ հայրիկը բոլորին, երբ հազիւ բոլորած էր 40 տարին :

Ու Արամը պիտի դառնար Երեւանի Արամը, Մայիս 28ի անկախութեան կերտիչը :

Անցիւր այս բոլոր ճանապարհներէն :

Ընկերներու գրկախառնումով յուզուէ : Ազատագրական յաջողութեամբ ոգևորուէ, ընդմիջտ կորսուածներով սպասուր հողիդ միտթարէ : Թշնամին հալածէ : Ճամբադ շարունակէ զէպի Սիփան, Նեմրութ, Մովստար : Ու գրբաւ այդ ամէնօրեայ, տնտաշիւ ապրումները :

Անկարելին թող ոչ ոքի դարձայնէ :

Այսպէս էր մեր կեանքը :

Մենք տուէ աւելի փոթորկալի օրեր պիտի դիմաւորէինք :

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ



ՏԱՂ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Սէրդ՝ աշնամած գիշեր,
Խօսքդ՝ ժահրոտ քաղցրութիւն,
Անհաշտ էիր,

Անդարձ էիր

Գեռ երէկ:

Շումշդ՝ հրայրք դառնաբոյր,
Վարքդ՝ ստուեր ննգութեան,
Դաժան էիր,

Տաժանք էիր

Գեռ երէկ:

Այլ որքան շուտ
Դարձար իմ մէջ վերափոխ,
Դարձար գրգիռ վերածին:

Տեսողական պատրանք ես դուն,
Զգայութի՞ւն անիրական,
Այլ կը սեսնես
Նայուածքիդ մէջ մայրամտոյ
հառնուածքիդ այլամերձ
Վերջին շողերը հիւանդ,
Որ կ'աղերսես անցեալէդ
Շիրմաբար մը օքելան...:

Զկան քառերդ հատու,
Զայնիդ շեշտերը բմբուս-
իզներու դէմ՝
Կ'աշտանակուի՛ս իբրեւ յոյս

Ու խոհերու՝
Բանադրուած գերք հերձուած՝
Կու տաս դրոշմ,
Ըմբռնումի նուիրագործ վեհութիւն...:

Հին հաւատքի դուն վերայայտ յայտարար,
Ուր կ'ըլլան տարր միանոյլ
Մեր էութեան
Ողջ բեւեռներն անհաղորդ
Միախորհուրդ դաշնութեամբ...:

Զարմանայայտ Իմացում,
Թափօր լերան
Խորհուրդէ՛ն ինչ աւելի
Պայծառակե՛րպ ես իմ մէջ...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

«Սովետական գրականութիւն» ամսագրի Օգոստոսի համարին մէջ, Մ. Մաքսապետեան ստորագրած է շահեկան տեղեկութիւններով չի յոգւած ժը, գոր քանի ժը պատահաներով կ'արժէ ուշադրութեան յանձնել, — «Տապիւնարան» Թակար հայ իրականութեան մէջ:

Տրուած տեղեկութիւններուն համաձայն, իր կողմէ տեղեկութիւններ տրուած «Գիթանայի» անուն բանաստեղծական հասարակական ձեռագրող հասց անկողով՝ Հնդիկ Նշանուոր բանաստեղծը 1912ին զուրս կու դայ իր հայրենիքէն եւ կը մեկնի Անգլիան, ուր եւ կը հրատարակուի յիշեալ գործը, որ մէկ օրէն միւսը միջազգային վարկ մը կ'ապահովէ ղեռ աշխարհին անմահութիւնմեայ հեղինակին:

Յաջորդ տարի, Թակար կ'արժանանայ Նոպէլեան մրցանակին: Ետևով միւս կարևոր գործերը եւս կը Թարգմանուին տեղիներէ, ինչպէս նաև եւրոպական շարք մը ուրիշ լեզուներու:

Ուրախութիւն է իմանալ, որ Նոպէլեան մրցանակէն արժանացած այդ նշան տարին, ուրիշ բազմաթիւ ժողովուրդներու կարգին, նաև ժեր մէջ բուռն հետաքրքրութիւն մը կը սկսի Թակարի մասին, արեւելայան նահապետ վրայ իջմիտներ մէջ հրատարակուած «Արարատ» ամսագրին մէջ, Մուշէ Վարդի նախածնունդի մասը, արեւմտաւայրութեան մէջ՝ Պալույ «Շմիթ» կիսամսեայ անդէտին էջերուն, Մ. Պարսեանի էջերում:

Մաքսապետեան Թուած է որոթերթերու, շաբաթաթերթերու, ամսագրերու եւ տարեգրքերու տասնըվեց անուն, որոնց մէջ ժեր մաստրականներն ու խմբագիրները բացառաբար զբաղած են Թակարի «Պարտիզան» եւ «Գիթանայի» խորագրուած բանաստեղծական երկերով: Մաքսապետեան կը յիշէ նաև «Շայիլման» պատմական շնորհ հատորը եւ «Գարնան շրջան» անունին տակ տնօրէնուած շարք մը արձակ երկեր ու Թատերգութիւններ:

Ամրողական ծանօթութիւններու պատրանքը տուող «Տապիւնարան» Թակարը հայ իրականութեան մէջ խորագրեալ յոգւածը, ծանօթութիւններով հարուստ ըլլալով հանդերձ, իրականութեան ամբողջ պատկերը չի տար: Կը Թուի, թէ Մաքսապետեան երեսնական Թուականներէն առջին չէ կկած, մինչև անգամ չէ բացած ժեռ բանաստեղծին ծննդեան 100ամեակին (1961) առի-

թով «Պարտիզան» եւ «Գիթանայի» ամբողջ հայաստանեան հրատարակութեանը, ուր Թակարի մասին իր ստորագրած նշմարին մէջ՝ Ս. Ուստանեան կը գրէ:

«Թակարի ստեղծագործութիւնները քարգամուելու եւ հրատարակուելու ետ նախապատկերներ չըրանի հայ պարբերական մամուլում: Առաջին գրքով յայտ է տեսել «Մահիկը» 1910 թ., «Տուն եւ աշխարհ» վեպը 1931 թ., «Գործ» վեպը 1935 թ., «Պարտիզան» բանաստեղծութիւնների ժողովածուն յայտ է տեսել երեք անգամ՝ 1919 թ. Թեհրանում, 1922 թ. Վիեննայում եւ 1935 թ. Երևանում: «Գիթանայի» բանաստեղծութիւնների ժողովածուն յայտ է տեսել 1934 թ. Թեհրանում:

«Թակարի «Պարտիզան» եւ «Գիթանայի» բանաստեղծութիւնների այս ժողովածուն հրատարակուած է մեծ բանաստեղծի 100ամեակի առթիւ:

Այս տեղեկութիւնները, ինչպէս ըստեցաւ վերը, կը պակսին Մ. Մաքսապետեանի համարած ծանօթագրութեան մէջ, իսկ Ս. Ուստանեանի նշմարին մէջ կը պակսի մեզի ծանօթ պատիկ զմանրամասնութիւնները, այն՝ որ յորիշեական հրատարակութիւնէն առաջ «Պարտիզան» ամսագրը ըստուած ըլլայ է տեսել երեք անգամը պէտք է ըլլայ անտուգել շարք անգամ, ու շարքերը հրատարակութեան իրագործուած է այս քաղաքին մէջ, 1945ին, Գաղար խիկկեանի Թարգմանութեան եւ տաներկու էջոց յառաջարկով, իսկ «Գիթանայի» երկրորդ անգամ հրատարակուեցաւ Թեհրանի մէջ, 1961ին, Արամայի Թ. Ալլաւիերեանի Թարգմանութեան, տասըներ՝ երևանդ Փափազեանի:

Անկախ այս բոլորէն, զիջ մը զարմանալի է, որ Թակարի պարագային Թարգմանական ժեր եռանդը ընդհանրապէս որոմազրած ենք «Պարտիզան»-ին եւ շատ զիջ մտածած ենք ժեր պատմութեան ոչինչ ու հոգեբանութեան աւելի հալտ աւոր արձակ զուտ-գործոցին՝ «Տուն եւ աշխարհ»-ին մասին, որ 1931ին Պողոս Գէորգեանի կողմէ հայերէնի վերածուեցաւ եւ այսօր բացարձակօրէն անմահութիւն միջին անգամ գրական շրջանակներուն:

Մեր հրատարակչատուներէն մէկը պէտք է վերհրատարակէ այս Թանկարէք գործը, մինչ այդ, կ'արագրենք անկէ հաստուած մը, ընթերցողին վայելիքի նշմարիտ պաւ մը ընծայելու վրատակութեամբ:

ՌԱՊԻՆՏՐԱՆԱԹ ԹԱԿՈՐ

Տ Ո Ւ Ն
Ե Ի
Ա Շ Խ Ա Ր Հ

Գ Լ ՈՒ Խ Բ .



ՌԱՊԻՆՏՐԱՆԱԹ ԹԱԿՈՐ

ՊԻՄԱԼԱ ԿԸ ՊԱՏՄԷ

Հիրանոց վերադարձիս, Սանտիպ ներդուքին խնդրեց խանդաղա-
տանօք .

— Կը վախճամ, որ ախորժակդ փախցուցինք, — ըսաւ :

Զգացի, որ կը կարմրէի : Երաւ ալ, անվայել անապարանքով մը ըրնք-
լմնցուցեր էի ճաշս : Ամենազտիկ հաշիս մը մէջտեղ պիտի հանէր, որ շատ
աւելի կերակուր ձգած էի պնակիս մէջ՝ քան թէ կերած : Բայց մտէս չէի ան-
ցուցած, որ այդ հաշիւը ընող մը կ'ըլլար :

— Կ'ենթադրեմ, թէ Սանտիպ ներդուքիս հասկցաւ, ինչ որ ա'լ աւելի նե-
ղեց զիս :

— Վստահ եմ, որ, — ըսաւ, — եղնիկի մը պէս փախչիլ կը փափա-
քիս : Իսկ ես մեծ շնորհ մը կը նկատեմ, որ համեցար խոստումդ յիշել :

Անկարող այս խօսքերուն շարժար պատասխան մը գտնելու՝ բազմացին
մէկ ծայրը նստայ, կարմրելով աւ ներուած : Որքա՞ն հեռու էի իրականացնե-
լէ իմ մտախ հիւսած երազս՝ ազգային Շաբթիին մտքմնացումը ըլլալու փա-
ռահեղ եւ սոսկ ներկայութեամբս պատկելու Սանտիպ Պապուն :

— Սանտիպ վիճաբանութեան բռնեց ամուսինս : Աղէկ գիտէր, որ հակա-
ճառութիւնը ա'լ աւելի կը սրէր իր նրբամտութիւնը : Յաճախ նշմարած եմ
անկէ ետք, որ երբեք առիթը չէր փախցնէր վիճաբանութեան բռնուելու իմ
ներկայութեանս :

Գիտէր ամուսնոյս գազափարմները *Պանտէ Մաթարամի* պաշտամունքի մասին:

— Այսպէս, — ըստ անոր՝ գայն գրգռելու բացայայտ փափաքով, — կը հաւատա՞ս, որ հայրենասիրական գործին մէջ պէտք է խստիւ մերժել երեւակայութեան կօչ ընել:

— Անշն՛շտ ոչ, Սանտիպ. երեւակայութիւնը իր տեղը ունի անոր մէջ. բայց պէտք չէ ամբողջ տեղը գրաւէ: Կ'ուզեմ հայրենիքս իր իրական, բուն վիճակի մէջ նանչնալ, եւ ատո՛ր համար է, որ կը վախնամ ու կ'աւմնամ միեւնոյն ատեն՝ բնածական միջոցներ գործածելու:

— Քու բնածական միջոց կոչածդ ես ճշմարտութիւն կը կոչեմ: Աստուծոյ մը հաւատալու պէս անկեղծօրէն կը հաւատամ հայրենիքիս: Կը պաշտեմ մարդկութիւնը: Աստուած մարդուն եւ հայրենիքին մէջ միաժամանակ կը յայտնուի:

— Եթէ իրապէս այդպէս կը կարծես, այն ատեն քեզի համար ո՛չ մարդէ մարդ եւ ոչ ալ հայրենիքէ հայրենիք տարբերութիւն ըլլալու է:

— Չի՞շոք է: Սակայն իմ կարգաւթիւններս սահմանափակ են. այնպէս որ՝ մարդկութեան հանդէպ պաշտամունքս հայրենիքիս պաշտամունքիմ մէջ կը պարփակեմ:

— Ո՛չ մէկ առարկութիւն ունիմ պաշտամունքիդ՝ իբր պաշտամունք: Բայց ինչպէ՞ս կը յաւակնիս զԱստուած պաշտել՝ ատելով ուրիշ հայրենիքները, որոնց մէջ քու կիներդ մուտք չի յայտնուիր Աստուած:

— Ատելութիւնը լրացուցիչն է պաշտամունքին: Օրջում Մահատեղին հետ կոռելով՝ արժանացաւ անոր շնորհին: Ի վերջոյ, Աստուած մեզի հետ պիտի ըլլայ, եթէ պարտօստ ըլլանք իրեն դէմ կռիւ մղելու:

— Եթէ այդպէս է, ուրեմն, թէ՛ անոնք, որ իրենց հայրենիքին կը ծառայեն, եւ թէ՛ անոնք, որ չարիք կը հասցնեն անոր, հաւասարապէս բարեպաշտ են: Այդ պարագային, ի՞նչ օգուտ ունի հայրենասիրութիւն բարագելը:

— Երբ խնդիրը վերաբերի մարդուն սեփական հայրենիքին, այդ պարագային ատելութիւնը գործ չունի, սիրտը կ'ուզէ պաշտել ստիպողաբար:

— Եթէ տրամաբանութիւնը ասելի հեռուները տանիս, ի վերջոյ կը յանգիս յայտարարելու, թէ՛ քանի որ Աստուած մեր մէջ կը յայտնուի, մեր ետք պէտք է պաշտուի ամէն բանէ առաջ, որովհետեւ մեր բնազդը բնականօրէն կը պահանջէ գայն:

— Բոլոր այդ ըսածներդ չոյցած տրամաբանութիւն են, — պատասխանեց Սանտիպ, — չե՞ս կրնար ընդունիլ, որ զգացում ըսուած բան մը կայ:

— Իրա՛ւ կ'ըսեմ, Սանտիպ, — պատասխանեց ամուսինս, — զգացումներս կը նախատուին, երբ կը փորձես անարդարութիւնը իբր պարտականութիւն ներկայացնել, եւ անիրաւութիւնը՝ բարոյական իտէալ մը: Տրամաբանութեան շնորհիւ չէ՛, օրինակի համար, որ անկարող եմ գողնալու. այլ որովհետեւ յարգանքի զգացում ունիմ հանդէպ ինքզինքիս եւ հանդէպ իտէալի մը:

Ներսէս կը կատողէի: Ա՛լ չկրցայ գոպել ինքզինքս.

— Բոլոր երկիրներու պատմութիւնը, — գոչեցի, — Փրանսայի պատմութիւնը, ինչպէս Անգլիոյ, Գերմանիոյ պատմութիւնները, ինչպէս եւ Ռուսիոյ պատմութիւնը՝ հայրենիքի սիրոյն եղած յափշտակութեանց պատմութիւնները չե՞ն միթէ:

— Իրե՛նց կ'իյնայ այդ յափշտակութեանց պատասխանատուութիւնը: Պատմութիւններն չէ աւարտած դեռ:

— Ինչ որ ալ ըլլայ, — պատասխանեց Սանտիպ, — ինչա՞ւ մե՞նք ալ անոնց օրինակին չհետեւինք: Նախ՝ մեր հայրենիքին սնտուկները գողօններով լեցնենք, յետոյ դարերով, եթէ հարկ ըլլայ, ինչպէս որ այդ երկիրները կ'ընեն, մենք ալ մեր գողութեանց պատասխանատու կ'ըլլանք. բայց, կը հարցնեմ քեզի. ա՞րք կը տեսնես պատմութեան մէջ այդ «պատասխանատուութիւնը»:

— Երբ Հոռոմ իր մեղքը կը քաւէր, ոչ ոք տեղեկութիւն ուներ: Իր քարգաւաճումը անսահման կը քաւէր: Բայց չե՞ս տեսներ, որ ժողովուրդներուն կռնակի քաղաքակալ պարկերը կը պատահին մէջի դաւաճանութիւններէն եւ ստուքիւններէն եւ իրենց ծանրութեան տակ կը ջախջախեն անոնց ողնայարը:

Այլէ առաջ երբեք առիթը ունեցած չէի ամուսինիս եւ ինք պարկաւաններուն միջեւ վիճարանութեան մը ներկայ գտնուելու: Ինծի հետ վիճարանած ատեն կը գգայի, որ սիրելուն՝ նեղր չէր դնէր զիս: Այդ օրը, առաջին անգամ ըլլալով, ճանչցայ վիճարանութեան մէջ իր ունեցած նարտարութիւնը:

Սակայն եւ այնպէս՝ սիրտս մերժեց հաւանիլ իր բռնած դիրքին: Կը ջանայի զինքը համագող պատասխան մը գտնել, թէ կը սխալէր: Բայց պատասխանը չէր գար: Երբ վիճարանութեան մը մէջ արդարութեան անունը տրուի՝ մարդ դժուարութիւն կը կրէ բռնուլ, թէ կարգ մը բաներ այնքան լաւ են, որ օգտակար չեն կրնար ըլլալ:

Յանկարծ Սանտիպ ինծի դատնալով՝

— Դուն ի՞նչ կ'ըսես այս բաներուն, — հարցուց:

— Այդ տեսակ նորին գաղափարութիւններով չեմ հետաքրքրուիր: Պարգապէս գցացածս պիտի բռնմ ձեզի: Մարդ եմ: Յանկութիւններ ունիմ: Լաւագոյն բաները կը բազմամ հայրենիքիս համար: Եւ եթէ հարկ ըլլար՝ պիտի խլէի՝, վարպետութեամբ պիտի գողնայի գաղտնիք: Բարկութեան ատակ եմ: Պիտի բարկանայի հայրենիքիս սիրոյն: Եթէ պետք ըլլար՝ պիտի գարնէի՝ ու սպաննէի՝ անոր վրէժը լուծելու համար: Կախարդուելու պահանջը կը զգամ եւ այդ կախարդանքը հայրենիքէս կը խնդրեմ, որ տայ ինծի տեսանելի ձեւի մը տակ: Պետք է, որ ինծի հայրալիքէս քանի մը բացայայտ խորհրդանշաններ, որոնք հմայք մը նետեն մտքիս վրայ: Պիտի ուզէի հայրենիքիս հետ անձի մը պէս վարուիլ, մա՛յր կոչել գայն, աստուածուհի՛, Տուրկա՛. եւ որուն սիրոյն՝ հողը պիտի կարմրեցնէի գոհերու արիւնով: Մա՛րդ եմ. աստուածային չեմ:

Սանտիպ տեղէն ցատկելով՝ ձեռքերը բարձրացուցած «Կեցցէ՛ք» գոչեց:

Բայց անմիջապէս ուղղելով՝

— Պահտէ՛ Մաթարա՛մ, — պոռաց:

Ամուսնոյս դէմքին վրայէն ստուեր մը անցաւ: Ինծի դառնալով՝ խիստ քաղցր ձայնով մը ըսաւ.

— Ես ալ աստուածային չեմ, մարդ եմ: Եւ ատո՛ր համար չեմ ուզեր քաղաւ, որ մէջս գտնուող գէշութիւնը ատնանայ՝ որեւէ՛ ձեւի տակ պատկերելով հայրենիքս. երբե՛ք, երբե՛ք:

Սանտիպ գոչեց.

— Նայէ՛, Նիխիլ, ինչպէ՛ս նշարտութիւնը մարմին ու արիւն կ'առնէ կնոջ մը սրտին մէջ: Կինը գիտէ անփայտ ըլլալ. իր բռնութիւնը կայր փոքորիկի մը կը նմանի, սարսափելի է ու գեղեցիկ: Այդ մարդուն բռնութիւնը սգեղ է, որովհետեւ անոր կուրծքին տակ այդ բռնութիւնը բանականութեան եւ խորհուրդին կրծող որդիքը կը սնուցանէ: Կ'ըսեմ քեզի, Նիխիլ, մեր կիները պիտի փրկեն հայրենիքը: Փափկամկատ խղճահարութեանց ժամանակը

չէ հիմա: Պարտաւոր ենք բիրտ ըլլալ՝ առանց երկբայանքի, առանց տրամաբանելու: Պէտք է, որ մեզմեզինք: Պէտք է, որ մեր կիներուն կարմիր ճանդան տանք՝ որպէսզի անով մեր մեղքերը օծեն ու սրբագործեն: Յիշէ, քէ ինչ կ'ըսէ բանաստեղծը.

*Եկու՛ր, մե՛ղք, մեծապայծա՛ն մեղք,
Թող քու կարմիր շամբոյրներդ մեր արեան մէջ հեղուն իրենց բոցին
հրաբորբոք ծիրանին:*

*Հնչեցո՛ւր փոքր անդիմադրելի չարիքին,
Ու հիւսէ՛ մեր ճակատներուն՝ ցեծուն անարդարութեան պսակը,
Ո՛ր գիցուհի պղծութեան,
Պղծէ՛, անամաչ, մեր կուրծքերը՝ վարկաբեկութեան սեւ տիղմով:*

— Անկցի՛ այն առաքիներօրէնը, որ կարող չէ ժպտող դէմքին՝ տանջանք ու աւեր սփռել:

Երբ Սանտիպ, ստփի կեցած ու գլուխը վեր, այսպէս յանկարծակամ կերպով անարգեց բոլոր այն բաները, զորս ամէն ատեն եւ ամէն տեղ, մարդիկ սիրած են իբր ամենաբարձր բաներ, սայտա՛ւ մը անցաւ ոտքէ տիղնչեւ զլուխս:

Բայց ոտքը գետին զարնելով, շարունակեց իր հաղը.

— Կը տեսնեմ, որ դուն կրակին այն ազուր շահն էս, որ տունը կ'այրէ ու իր բոցովը աշխարհ կը լուսաւորէ: Անսանձի քայտօրէնը տուր մեզի՝ կործանման միջնէ խորը երթալու: շնորհ տուր բունաւորուած բաներուն:

Յայտնի չէր, Սանտիպ որո՛ւ ուղած էր այս վերջին կոչը, այն աստուծուհիի՞ն արդեօք, զոր կը պաշտէր *Պանդէ Մաթարա՛մ* ազակակելով: Իր երկրին բոլոր կիներո՛ւն, քէ զանոնք այդ պահուն իր առջեւ ներկայացնող կնոջ: Այդ ձեւով պիտի շարունակէր ապահովաբար, բայց ամուսնինս յանկարծ առօրի կաւ եւ քեթեակի ուսին դպելով՝

— Սանտի՛պ, — ըսաւ, — Չամտրանաք Պապուն հոս է:

Իսկոյն հտիս դարձայ ու տարիճառ ու պատկանելի մարդ մը տեսայ, որ դրան առջեւ կեցած, համաբար ու արժանաշարժ, չէր գիտեր նե՞րս մտնէ, քէ երթայ: Դէմքին մեղմ լոյս մը հպած էր կարծես՝ նման մայրը մտնող արեւու լոյսին:

Ամուսինս ինձի մտեցաւ եւ ցած ձայնով ըսաւ.

— Ուսուցիչն է, որուն մասին քեզի խիստ յաճախ խօսած եմ: Մեծաբէ՛ զինքը:

Յարգանքով ծոցեցայ եւ ծերունիին ոտքին փռչեցիքը առի: Օրհնեց զիս սա խօսեցրով.

— Աստուած միշտ պահէ՛ քեզ, ազգի՛կս:

Այդ պահուն շա՛տ պէտք ունէի այդպիսի օրհնութեան մը:

(«Ճուն եւ աշխարհ»)

Բ. Կ Ռ Ա Ն Ե Ա Ն

Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր



Ինձի կը թուի, թէ յեզաւընէլու ենք դրելու արուեստը: Երա: Միայն խտանալով կարելի է ուժի եւ խորութեան հասնիլ: Եկարագրականը, պատմողականը, առասպելականը — անցած են այլեւս: Ածականը, մակբայը, քայն իսկ — ժուժկալօրէն գործածելու է: Իր ատենին, երբ ասոնք նոր էին դեռ, այս ու այն տաղանդի ստեղծագործութիւնը, — իմաստ ունէին եւ յուզում: Կրկնութիւնը զէպի մահ կը տանի: Պատկերն էր բանաստեղծութեան էութիւնը: Բնութիւնը, իրը, կամ էակը — ինչպէս նկարչութեան մէջ: Այժմ էութիւնն է մեզ հետաքրքրողը: Չեւը, ծաւալը, իրը չեն, այլ աւընչութիւնները, համեմատութիւնները, իրերու ներքին էութիւնը: Վերականգնումը եւ խորհրդանիշը: Գրածնէրս էթէ նորէ՛ն կարենայի զրել:..

Բառը ինքնին արուեստ է: Առանց անականի, մակբայի կամ նախադրութեան օգնութեան: Երբեմն, երջանիկ առիթով մը, ասոնք կրնան Բանին անփոխարինելի ուժ փոխանցել: Այն ատեն բանաստեղծութիւն են: Երբ իրենց միջամտութիւնը նոր տարածութիւն մը կու տայ ստեղծագործութեան: Եւ իրենց բացակայութիւնը անցաւորին եւ տեւականին տարբերութիւնը կը շափէ:

- Այս խորհրդածութիւնները կ'ընեմ Ս. Ղազարի մէջ:
- Կոմիտասի գիծակը:
- Ասիկա ինքնին խորունկ արուեստ է: Կոմիտասը: Հայ հանճարը: Դիմակը — հայկական ողբերգութիւնը:
- Լեւոն Թաղաւորի սուրբ:
- Հայ մանրանկարները, ձեռագրերը: Քէօթա՛խոյ յախճապակի: Միեթարեան Յարզողդի ձանապարհը: Աբբահայր, Ալիշան, Բաղդաստունի, Ղազարիկեան: Նոնիներու գերեզմանատունը: Քիչ մը կրկնուած ու շափազանցուած այցը Լորտ Պայրընի: Հայկական էութիւնը, որ կը պարփակէ Ս. Ղազար: Հոգածութեամբ, երկիրդածութեամբ, պարծանքով: Քիչ անդին, Մուրատ Թափայէլեանի մէջ:— Մկրտիչ Պէշիկթալեանի, Դանիէլ Վարուժանի, Վահրամ Փափազեանի ներկայութիւնը:

Այս դարուն, երբ միջազգայնականութեան, աշխարհաքաղաքացիութեան մասին կը քարոզեն: Լուսնի վրայ կը քալեն, Հրատին կը տեսնան: Պատկանելիութեան զգացումի ուրացում: Անձնող, անհայրենիք, անձը կորսնցուցած: Հաւատք, սէր, հերոսութիւն, իտէալ — բովանդակութենէ պարպրած:

Ես ուժգնորէն (թող ներուի մակրայը) կը դգամ Հայութիւնս: Հիմա Արմատս եւ էութիւնս: Անհնար է ըմբռնել գոյութիւնը, խանգամառուիլ, գեղեցիութիւնը զգալ եւ գեղեցկանալ: Ստեղծագործել: Մահուընէ չվախնալ: Անմահանալ — առանց ինքնութեան:

Չէ ծնած, սպրած, եւ ստեղծագործած ոչ մէկ արուեստագէտ, առանց սուգուելու իր ցեղի ակունքներուն: Առանց երակր պատուելու: Նիւթը անկարելու է: Շրջանակին կերտներ միշտ իր ծագումն է: Էութիւնը: Երկու հակահերու Համբոյրէն ծնունդ առած, որոշ Հողի, որոշ արիւնի, որոշ մշակոյթի Աղղութեան: Գէտը, որուն չուրջ կը մեծնան շրջանակները, բնորոշելով միջազգայինը, Համամարդկայինը, անմահականը: Ամէն Հանճար իր ցեղին արտայայտութիւնն է: Հօրը, խորը, յատկանշականը: Արեւը վրան մայր շմտնող կայսրութիւնը անցեալ է հիմա: Կը տեսէ Շէյքսպիրը:

Անսահման ջրերու մէջ Փոքր Կղզին: Լեւոն թաղաւորի սուրբ: Մլօքէի աւետարանը: Կոմիտասի գիմակը: Մադաղաթները, յախճապակին: Վարուժանի:

Երջանկութիւնը Հայ լինելուն:

ԴԷՊԻ ՖԼՈՐԱՆՍ

Հոսմէական բնակարը: Տպաւորութիւններ: Հողը եւ աստուածային շունը: Բանաստեղծութիւն ինքնին: Փոքրը, վաւար, պիղծը, — մեծը, Հերոսը, ստեղծագործ արուեստագէտը: Սահմանը վերացական է: Չափի ինդիք է: Հողը եւ Արարչութիւնը: Հողը ինքը արդէն ունի իր մէջ ստեղծագործութեան աւելն ու հունտը: Եւ գեղեցկութիւնը: Խաղալ բառերու Հետ, մարմին եւ Հողի, նիւթ եւ ողի, ձեւ եւ բովանդակութիւն: Բաժանումը վերացական է եւ պայմանադրական: Անբաժանելի է Երեւոյթը: Արուեստի գործը:

Ինչ որ կը խանգավառէ զիս հիմա, մարդու ստեղծագործական թափն է: Ինչքան գեղեցկութիւն: Պատերազմներ, Հրդեհ, Երկրաշարժ, Հեղեղ, ռճիք եւ աւեր — ինչքան գեղեցկութիւն: Սկիզբէն ի վեր, քարայրներէն, մազաղաթներէն, կրանիթէն մինչեւ հոս: Տեւարար, առանց դադարելու: Կրրկնութեան, ձանձրոյթի ոչ մէկ զգացում: Գեղեցկութիւնը Հոն է: Միշտ տարրեր, միշտ այլադան, միշտ անհատին եւ իր ցեղինը — բայց նոր, միայնու, վայելք:

Կնոջս Հետ կը խոսինք տպաւորութիւններու, կեանքի, ժամանակի, տեւական բաներու մասին:

Անորեան զիս քէ: Կը Հետաքրքրէ: Պատահարները, փոխյարաբերութիւնները կը զրաղեցնեն զիս, առանց խորունկ աղեցցութիւններ ձգելու: Տեւականը կը Հետաքրքրէ զիս: Արուեստը: Ժամանակը, որուն զիտակցութիւնը կը խռովէ զիս միշտ: Այս է պատճառը, որ առօրեայ խօսակցութիւններ, յատկանշական զէպքեր ու զէմքեր չեմ նոթեր ու չեն տեսեր յիշողութեանս մէջ: Գիտեմ գրողներ, որ պահը պահին նոթեր կ'առնեն, ապա կը դրեն: Եւ սքանչելի է այդ: Կեանքի խորհուրդները կը խտանան անոնց մէջ: Բայց ես տարբեր եմ: Բացառութիւնը, ներքին տարածութիւնը, վերացականացումը, էութիւնը միայն կ'առնեմ ինչ: Անելի կը վերլուծեմ, կը թափանցեմ, քան կը պատմեմ: Եւ իմ Հերոսներս շատ չեն խօսիր: Մարդու պայքարը իր դէմ եւ իր մէջ: Երաժշտութիւնը կը սիրեմ, նկարչութիւնը, բանաստեղծութիւնը: Ասոնք թրթուացում, գոյն, ողեղինացում են: Այնքան ի-

բարու նման, աբրնշակից եւ միախառնուած: Գոյութեան գերագոյն իմաստ: Ընդհանրապէս, որ տիեզերական է: Հաճոյքի բարձրագոյն կերպը: Մոծան: Անէմանք: Գոյնի զմայ: Չմայնուլ մա՛հն: Ըլլալ: Ասանց միջոցի, ժամանակի, պայմանի: Անսկիզբ, անվախճոն: Պարզապէս ներկայ: Ինքը գոյութիւնը, որ կայուն է, անսահման, լրիւ, ո՛չ կը մեծնայ, ոչ կը պակսի: Է՛: Հոսանուտը պատրանք է, ժամանակը, միջոցը, շարժումը: Միակ իրականութիւնը գիտակցութիւնն է: Կը զգամ: Կամ: Մարդկային ուղեղին յատուկ զգայարանք մը: Այլապէս ոչինչ կ'աւելնայ, ոչինչ կը կորսուի: Հոն է՛ր, հոն ես, հոն պիտի բլլաս, մարդկային հասկացողութեամբ: Մինչ կեանքը մէկ է, միշտ ներկայ: Գիտակցութիւնն է շփոթ ստեղծողը: Ժամանակը, միջոցը, մա՛ր գիտակցութեան սահմանափակումներն են: Ինչ որ կեանք կը կուէնք, գիտակցութիւնն է: Երբեմն, ամպրոպի մը մէջ, ես կը ձերբազատուիմ գիտակցութեան կապանքերէն եւ անմահ եմ: Եմ: Կամ: Կը զգամ: Կ'արբեմս հաճոյքով: Երբեմն, ամպրոպի մը ընթացքին:

Աւ ահա կրկին, թեղի կը դառնամ, Հայաստան: Ասանց թեղի գոյութիւնը անհնար կը թուի ինծի: Կը զգամ, որ բոլոր ժամանակը յատակն եւ դուն: Եւ ոչ գիտակցութեանս, ենթադրական կանխ մէջ: Դուն կը վարես զիս: Ար առանց թեղի պիտի չըլլայի այն՝ ինչ որ եմ: Պիտի չզգայի այնպէս, ինչպէս կը զգամ: Ար բոլոր ցանկութիւններս, ձգտումներս թեղի կը սեւեռին: Տեսած իսկ չեմ թեղ: Թերեւս այդ իսկ պատճառով, աւելի հզօր է կախարհանքը:

Կ'ուզիմ վերադառնալ ճամբան, ուրկէ անցած եմ: Նախահայրերս ե՛րբ ձեռքին հայրենի հողը, ինչո՛ւ, ի՛նչ ճամբաներէ անցան, հասան Այնթապ: Թ՛ի էին: Տառապանքը, հալածանքը, կարօտը, կարօտը: Ինչպէ՞ս է, որ չժեռայ ես: Կորսնցուցի լեզուս, շտեմայ թեղ, դարձայ արտորական: Օտար լեզուներ սորվեցայ, օտար հողերու վրայ ապրեցայ, հպատակ դարձայ: Երբեք արձատր չեմ տեսցի: Ապրեցայ չիւր, ժամանակաւոր կերպով: Յոյսով, հաւատքով:

Կը զգամ, որ տարիներուն հետ աւելի կը մօտենամ թեղի, աւելի խորը կը զգամ թեղ: Կը վախնամ, որ թեղ չտեսած մեկնիմ: Ափսոսանք մը միայն, որովհետեւ դուն մա՛հն ալ հզօր ես, անկէ ալ անդին, տեւած ես, պիտի տեսես:

Արդեօք հետորութիւնն կ'ընեմ, որմէ կը սոսկամ: Հայութիւնս կը գինովցնէ զիս: Եթէ ընտրութեան մը առջեւ դրուէի, ոչ մէկ տառամտում, ոչ մէկ նախնորութիւն: Ինծի համար լինելու միակ կերպը: Ես եմ Արդէնտի Բ., Մեծն Տիգրան, Նարեկացի, Կոմիտասի դիմակ, Գէորդ Չաւուշ, Դանիէլ Վարուժան: Բանը անապատին մէջ: Զուարթնոց, Արարատ: Զիս կը գտնես Իրանտա, Փրանսա, Ռափիննա, Փլորանս: Վերին Եղիպտոս, դպտի վանքի որմանկարներուն մէջ: Երուսաղէմ: Պոլիս: Քահանայ, Ֆետայի, ռուսցիէ: Աղ ու հաց:

Օդը մշուշոտ է եւ մինչ շողկառօք կը սողոսկի դէպի Փլորանս, չես կրնար տեսնել չըջակայ նկարչազեղ բլուրները: Այժմ արդէն կը զգանք, որ սխալ ամիսը ընտրած ենք Իտալիա այցելելու: Ես կը կարծէի, որ եւրոպական աշունը նման է Հիւսիսային Ամերիկայի աշնան, պաղ՝ բայց աղամանդի նման պայծառ: Հոս, միշտ մատախապատ եւ ճշիւ: Եսարթ մը մնացինք Փլորանս, հազիւ տեղոյն արեւ մը երբեմն:

Փլորանս, գեղարուեստի տեսակէտէն բարդ քաղաք մըն է: Արբան գի-

տե՛ս, ամէնէն շատ թանդարաններ (տւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ արուեստի գործեր) ունի: Աւելցուցէ՛ք անհատու՛մ եկեղեցիները, որոնք զլուխ-գործոցներ կը պարփակեն: Ամէն բան անհնար է տեսնել, ուստի՝ կը կազմես ծրարներդ: Կ'այցելենք գլխաւոր թանդարաններն ու եկեղեցիները (առտու-իրիկուն վաղելով), ապա՝ մանաւանդ այն վայրերը, զորս շիրջայ տեսնել առաջին այցելութեանս: Զերկնելու համար զբաններս, պիտի ծանրանամ վերջիններուն վրայ:

Հագիւ պանդուկ տեղաւորուած, — Կիրակի է, — Կ'արտորանք Իլ Տուսա մոյի, Մայր Տաճարի հրապարակը: Պրունելէսքիի գմբէթը եւ ձիողոյժի Զանգակատունը: Երկար կը հիանանք: Կրկին նոյն ակտոսանքը. մեղք որ միջոցը շատ նեղ է այս հրաշալիքը իր ամբողջութեան մէջ տեսնելու եւ հիանալու:

Յաջորդ կայանը՝ Փիացցա տէլլա Սինեորիա: Կը նստինք բացօթեայ ճաշարանը: Անժամահան գինին եւ սպակէթթին: Հին Պալատը Արնոլֆոյժի հոյակապ տաշարակը, Լոնիան, աւաղանը, արձանները, մթնոլորտը:

Ամերիկայէն Ֆլորանս: Լոս Անճելլոս, նոր քաղաք մը եւ Ֆլորանս: Հակադրութիւնը սարսափելի է: Այս քաղաքը զգալիօրէն կը ծերանայ: Իր նեղ փողոցները, սաւաշատակը, մաշող շէնքերը: Անան գորշ լոյսին մէջ, տխուր է մինչեւ իսկ: Եւ սակայն, նկարչական, անհատականութիւն մը, մթնոլորտ մը: Ամէն ինչ պատմութիւն է, յուշ, վերապրող անցեալ: Ես երբեք չեմ հաւատացած, որ անցեալը կը մեռնի: Հոս է, միշտ ներկայ: Կը տեսնես, կը լսես, կը զգաս:

Եւ աւելին: Ինչպէս զրեցի Դոլետոյժի մասին, արեւելեան արապեսք փեղկերու նման են այս քաղաքները: Իուրսէն յաճախ սքողուած, ներսը չըջնալ գեղեցկութիւններ կը սարստան: Գրեթէ ամէն շէնքի մէջ: Տանթէի տունը: Միքելանճելոյժի տունը: Տա Վինչի, Մաքիավելլի, Սափոնարոյա խարոյկի բոցերուն մէջ, այս հրապարակին վրայ: Մետիչիները, ամէն տեղ, ամէն կառոյցի, ամէն ստեղծագործութեան: Կարմիր երգիքներ, որոնց վրայ կը բարձրանան Պրունելէսքիի Տուժոն (գմբէթը), ձիողոյժի Զանգակատունը եւ Արնոլֆոյժի Աշտարակը: Արնօ գետը՝ կամուրջներով: Լեռները:

Անհնար է ինքզինք չկրկնել: Փորձութիւնը անգիմադրելի է: Անհնար է չհամաձայնել Լայպիճի հետ. «Լաւագոյնը բոլոր կարելի աշխարհներուն»: Նպատակ — չեմ գիտեր: Ինձի համար գեղեցկութիւնը ամէն ինչ է: Պատմութեան մէջ ամէնէն շատ հարստութիւն, ճիշդ, աշխատանք եւ զոհողութիւն թափուած է գեղեցիկի կառուցման եւ ստեղծագործութեան համար: Մարդ էակին, — զուցէ նաեւ կենդանիներուն, — կենցաղին անբաժանելի մասն է գեղեցկութեան զգալարանքը. զգեստաւորումի, կահաւորումի, շինութեան, կերուխումի, խնջոյքի, ամէն կարգի արտայայտութեան (խօսք, շարժումներ, պար, արուեստ):

Եւ սխալ է մտածել, որ քաղաքակրթութեան ընթացքին մէջ, ոճերը, աւերը, աղէտը կը յաղթանակեն: Ի վերջոյ, մնացած է գեղեցկութիւնը: Բանաւորած, հրդեհուած, փճացուած, բայց միշտ նորագուած, նորաստեղծուած, միշտ մնալուն: Եթէ այսօր, անսպասելի աղէտի մը հետեւանքով, կենար մարդկային կեանքը, — ինչքան գեղեցկութիւն պիտի մնար աշխարհի վրայ: Գրեթէ անկարելի է երեւակայել, թէ այդքան պատերազմներու, քանդումի, բնական ուղէտներու հակառակ, այսքան ստեղծագործութիւն կրցած է փրկել եւ ամբարել մեր քաղաքակրթութիւնը:

Ուֆֆիցիի մէջ, ձիողոյցի «Աստուածածինը գաւիմ վրայ»։ Սրահը նուիրուած է իտալական նախնականներուն։ Հարկ է ժիշտ ի մտի ունենալ, որ արուեստի մէջ նորութիւնը ինքնին անկախ երեւոյթ մը չէ, այլ աստիճանական բնաշրջման մը պակուսք։ Ձիողոյցի նոյն նիւթի նկարը դեռ բնագաղտական աւանդութեան մէջ է։ Աստուածածնի զգեստի կերպաւորումը, անթարթ նայուածքը, եւայլն։ Բայց, մարդկայնութեան զգացում մը արդէն թափանցած է արտայայտութեան մէջ։ Սիմոնէ Մարթինիի «Աւետում»ը, զեռ գոթական է, բայց զգայնութեան ինչ հարստութիւն եւ շնորհ։ Ընդդէմ կը թօթափէ հինը բոլորովին եւ նկարչական արուեստը կը դնէ նոր հունի մէջ։ Դասականէն, միջնադարէն եւ բնագաղտականէն դէպի նոր ժամանակներ։

Ընդդէմ ծնած է Ծլորանսի շրջանը։ Իր պատանութեան եւ երիտասարդութեան մասին շատ քիչ ծանօթութիւն ունինք։ Առաջին անգամ կը լըսենք իր նկարչական գործունէութեան մասին Աստիէի մէջ։ Մեծ սուրբին նուիրուած հոյակապ տանար մը բարձրացուած էր իր ծննդավայրին մէջ։ Ներքին պատերուն որմնանկարներ նկարեցին ձագոսո Դորիդգի եւ ձիողոյցի վարպետը՝ Ձիողոյցի։ Ահա հոս է, որ կը սկսի ձիողոյցի նկարչական ասպարէզը։ Երիտասարդ նկարիչը արդէն կը զատուի իր նախորդներէն եւ կը թեւադրէ նոր դարաշրջանի մը գալուտը։ Հետագային իր որմնանկարները կը շարունակէ Փատովայի, ապա՝ Ծլորանսի Սանթա Կրոչէ եկեղեցիին մէջ։

Իտալական թերակղզին խոր խորումներէ կ'անցնէր։ Կրօնական տակմայիլով եւ անոր ազդեցութեան ենթակայ նկարչութիւնը, անհարգատ եւ անհասանելի էին զանգուածներուն։ Մարդկայինը կը զոհուէր վերնայինին, արդեւէ հանդիսանալով նոր շարժումներու։ Եւ ահա, ճիշդ տակնին, աշխարհ կու գար սիրոյ, խոնարհներու, թշուառներու նոր քարոզիչ մը։ սուրբ Ֆրանսիս, Աստիէն։ Այս սուրբը քրիստոնէութիւնը երկնքէն ետ երկիր կ'իջեցնէր եւ կը դարձնէր մասը առօրեայ կեանքի։ Ամէն հաւանականութիւն կայ, որ ձիողոյցը խոր կերպով ազդուած ըլլայ սուրբին գաղափարներէն, մասնաւոր՝ որ պիտի նկարէր բազմաթիւ որմնանկարներ սուրբ Ֆրանսիսի կեանքին նուիրուած։

Ընդդէմ կորուած կեանքը գտաւ արուեստին համար։ Միջնադարեան յուսաբարձումներէն, վերացականէն, միստիքէն եւ բնագաղտական դաժան ժողայրէջներէն դարձ դէպի կեանք։ Սուրբ Ֆրանսիսի պարզութիւնն ու սէրը։ Փրոֆ. Մուլէր հիացումով խօսելէ հաջ ձիողոյցի մասին, կ'եզրուկացնէ, որ նկարիչ զիխաւոր մտահոգութիւնը զպարզապէս մակերեսի սեքնրասիոնի սանմաններուն մէջ մնալ էր»։ Անշուշտ խօսքը որմնանկարի մասին է։ Պիտի ուզէի բարեփոխել Հեղինակաւոր փրոֆեսորին յայտարարութիւնը եւ բնել։ Ընդդէմ մտահոգուած էր նկարչական միջոցով (pictorial space) եւ իրրեւ այդպիսին առաջին արդիական նկարիչը։ Ընդդէմ հազիւ թէ տեքրութիւ պիտակին յարմարի, որովհետեւ նկարչութիւնը երկու տարածութեանէն կը մացնէ երեք տարածութեան մէջ, ստեղծելով ծաւալի (փլաստիք) ձեւը։ Ենթադրելով, ծառերը բնականէն փոքր կը նկարէ՝ յծանրաբեռներու համար նկարչական միջոցը եւ կեզրոնանայու բուն նիւթին, գործողութեան, որ նկարին առաջնամասին է եւ կը գրաւէ մակերեսը։ Կը ձգտի մանրամասնութեան զննչումին՝ ի շահ պարզութեան, յատկ գիծերու, կշռոյթի, կոթողականութեան (մանիւմանքալիզմ)։ Յօրինուածքները պայծառ են եւ հզօր։ Ընդդէմ տոգորուած էր հաւասարակշռութեան խորունկ զգացումով եւ կազմակերպուած մտահոգացող մը։ Գոյնները նուրբ են, երանգներով հարուստ։ Որմնանկարի համար կը գործածուէր ջրաներկը, որ շունի իւզաներկի փայլն

ու զօրութիւնք: Բուրքն վեր, ժարկային արածն է, յուզումը, զգացումը, բանաստեղծական տիրութիւնը, որուն մասնակից են իր էակները: Բրապաշտ է, բայց եւ զգայուն: Հանդիսաւոր, կարգ ու կառոյցի բծախնդիր, բայց գեւրազանցօրէն արուեստագէտ: Սուրբ Տրանսիսի պարզութիւնն ու սէրը, արտայայտուած յայն, խոր ու մնայուն զեղադիտական միջոցներով: Շէնքերը, ծառերը փոքր են, երբեմն ձեւագեղծուած, որովհետեւ նկարչական մակերեսը կը վերապահէ բուն նիւթին, զերակատարներուն, զործողութեան: Մաւաւր կը ստեղծէ, բայց կը սահմանափակէ միջոցի խորութիւնը, որուն մէջէն կերպարանքները՝ դուրս կու գան իրենց փլատտիք ձեւերով: Չեն յատրու, այլ կը նային ու կը տեսնեն:

ՈւՖֆիցիի «Աստուածածինը ցահին վրայ» ուղղակի կ'իշխէ սրահին եւ կը կախարչէ թեզ: Զգողականութիւն մը, որ տեսական է: Այդ նշածեւ աչքերը, վեհափառ կոնշականութիւնը, կերպաներու ծալքերը, որ այս անգամ մարմնի ծաւալներ կը ծածկեն, աջի եւ ձախի հրեշտակներն ու սուրբերը (աւելի փոքր, քան Աստուածածինը) յառած Աստուածածօր եւ իր գրկի ապագայ Մեն Քարոզիչին, ոսկի խորքի վրայ թրթաացող գոյները, պայծառ յօրինուածքը: Նշածեւ աչքերուն պիտի հանդիպէս յաճախ, իր աշակերտներուն եւ հետեւորդներուն մօտ:

Ճիողոց կը քանդէ «բնդունուած ձեւը», «տիպը», կը ստեղծէ երրորդ տարածութիւնը, յօրինուածքի նոր կարեկիւնութիւններ, գրթական գծի շնորհալի սահունութիւնը, կոթողական ոճը, խորհրդանիշն ու վերապականը կեանքի կը փոխակերպէ: Ինք եւս, կոթող մը դեղարուեստի տարածութեան մէջ:

Անուններ կան, որ կը շլացնեն: Հաստատուած հուշակներ: Ամէն ժարդ պիտէ անոնց անունները. Լէոնարատ, Ռաֆայէլլօ, Միքելանճէլօ, եւ այլն:

Մասաչիոն արուեստի ուսանողներէն դուրս, դեռ ժողովրդականացած չէ: Կը նկատուի Նիդր դարու մեծ յեղաշրջողը: Կարծեմ թսած եմ անգամ մը. ես տկարութիւն մը ունիմ անոնց հանդէպ, որ տիրող ձեւերուն դէմ կ'ընդվզին եւ նորութեան սաղմը ունին իրենց մէջ: Իրենց ժամանակէն առաջ կը տեսնեն կամ կը զգան: Մասաչիոն ունէր այդ հզօր անհասականութիւնը եւ տաղանդը: Նոյնը Փառլօ Ուչելլոն:

Ուստի՝ կ'ուղղութիւնք Սանթա Մարիա տէլ Գարմինէ կեկեցիցին, որուն Պրանզաչի մատուռի պատերուն կը գտնուին Մասաչիոյի որմնանկարները: Եթէ չեմ սխալիր, վերը, ձախին՝ «Իրախտէն վտարուվը», Այլ եւ Եւան կը հնազանդին վերջ ծփացող հրեշտակի հրամանին: Այլ որմնանկարներ, եւ իր դիւն-գործոցը նկատուող «Տուրքի վճարուվը»:

Սովորական այցելու մը հազիւ թէ նկատէր: Այլ եւ Եւան նկարչական հուշայ նուաճում մըն է: Մասաչիօ կարծես ճիողոցի ուղղակի շարունակողն է եւ շարժումը կատարելագործողը: Մարչակագմութիւնը, ժարմիններու յատուկ փլաստիք արտաւորումը՝ գիարոզողութի միջոցով, մակերեսներու պարզացումը եւ ամէնէն վեր՝ արտայայտութեան ուժը: Խոսովքի, աստուպանքի, արամին ապրումը եւ անոր դրսեւորումը: Ասիկա նկարչութիւն մըն է, որ չի խարխափիր, գիտէ իր ճամբան եւ կ'աւելտէ Վերածնունդը՝ Սեռաւ, դեռ հազիւ քսանութ տարեկան:

Փառլօ Ուչելլօ Մասաչիոյէն հազիւ չորս տարու փոքր էր: Մէկ մտասեւեռում ունէր. հեռանկար: Կը կարծէր նոր եւ դժայլիկ աշխարհ մը գտած

րլլալ: Կ'ուսումնասիրէր, կր պրպտէր, կր փորձէր, կր խորանար: Բանաձեւեց Հեռանկարի օրէնքները: Իրերը կը փոքրանային քանի Հեռանային ժխոցին մէջ եւ կը մեծնային ու կը ձեւագեղձունէին շատ մօտենալով զխտողին (forshortening): Մարմիններուն (մարդկային կամ անասնական) կու տար քորր կարելի դիբբերը, դաննք ենթարկելու Հեռանկարի ազդեցութիւններու, համեմատութիւններու փոփոխման եւ գծուարին կացութիւններու:

Սանթա Մարիա Նովիլայի որմնակարները, որմնակարներու ստորին մասերը եղծանուած են ՆՊՈՒ աղչտին, երբ ջուբերը սղողեցին Ճյորանոր: ՁԵՆԻԵՂԵՂԸ անդրերկրային կերպարանքներու եւ խոով հոսկեան վեճակի արտայայտութիւն մին է: Հեռանկարի նահանջը զծերը զերէրական ընդթ մը կու տան: Իսկ իր ՎՍԱՅ Բամանայի նակատամարտը (երեք նկար, մէկը՝ Լույր, միւր՝ Լոնտոն, եւ երրորդը՝ Ուֆֆելցի, Ճյորանո) երկրաչափական ձեւերու եւ կառոյցի, Հեռանկարի եւ տեղական դոյներու՝ անկախ բնականի մտահոգութենէ, պայմանադրական ու վերացական, կը պարունակէ յանգուզն նորութիւններ: Ինչպէս պիտի ընէր Կոնէն դարեր ետք:

Ուշիւրոյն անկախ, միաժամանակ, Մատոյինո եւ Մասաչիտ կը Հեռանայնէին իրենց պրպտումները Հեռանկարի մարզին մէջ:

Ռորհդաձութիւն մը: Ճյորանոյ յատուկ երեւոյթ: Քիչ բացառութեամբ, եկեղեցիներու ճակատները կը ներկայացնեն ճարտարապետական ոճը, զիւտերը, նիւթի եւ յղացման գեղեցկութիւնը: Մնացեալ մտկերները աղիւսէ են, առանց ճարտարապետական կամ զեղարուեստական յարդարութի: Մարմար ճակատը միայն, եկեղեցիին արտաքին կառոյցը մաս չի կազմեր ճարտարապետական յղացման եւ միութեան: Խորթ երեւոյթ մը հայու համար մանաւանդ: Մեր եկեղեցիներուն արտաքին եւ ներքին միջոցներուն միջեւ միշտ առնչութիւն մը կայ եւ երկու միջոցներն ալ կը նկատուին զեղարուեստական եւ կառուցողական միաւոր:

Այսօր տժգոյն արեւ մը: Պտոյտ մը Առնոյի ափերուն: Պոնդէ Վիբբոյի վրայ կը տնտնանք, ոսկի, գոհար, Չէլլինիի արուեստը եւ թողած աւանդութիւնը: Անա իր արձանը: Կինս կարգ մը նուէրներ կը զնէ: Չմայլելի գործեր կան, բայց, ինչպէս միշտ, գեղեցկութիւնը թանկարժէք է:

Կը նստինք հրապարակը եւ «էսպրէսո» կ'ապսպրենք: Տպաւորութիւններ կ'ողողեն մեզ: Գեղեցկութիւն ամէն պահ, ամէն օր, շարքներ: Կը խօսինք որոշ երկերու մասին, որոնց տպաւորութիւնը անփնջելի է: Աստուծոյ շունչը: Սատեղձագործ հիւլին: Աստուած եւ սողայել: Գեղեցկութեան այս զգացումը: Գոյութեան անբաժանելի մէկ մասը: Բնական պահանջ մը, առանց որուն անկարելի պիտի ըլլար կեանքը: Օդի, ջուրի, սոննդի նման: Մարդկային ցեղը թերեւս ամէնէն շատ զրամ եւ ճիգ վատնած է ստեղծագործութեան համար, քան այլ նպատակի: Անգրազանտնք պահ մը — զեղազիտական զբացում մեր ստորեայ կեանքին իսկ մէջ: Սկսած բարբարոսներէն մինչեւ ամենաբազմազգութեանները: Մեր արզուզարդը, զլեւտը, կարասին, բնակավայրը, ամաններն ու գործիքները: Մեր շարժումները, արտայայտութեան եղանակը: Ամէն տեղ, ամէն պահ գեղեցկութեան տեսչը: Երբեմն՝ ինչպիսի գոհոգութեամբ, տառապանքով, սուղ գնով:

Բնութիւնը կը տննչայ տեսակներու տեսականութիւն միայն: Մտունդը, օգր, ջուրը անհրաժեշտ պայմաններն են այս նպատակին: Նոյնպէս սպասութիւնը, ի՞նչն է զերը զեղազիտական բնազդին: Բնութիւնը առանց մի-

աուսի չի շարժիր: Կենդանիներու, բուսական աշխարհի մէջ եւս ներկայ է ընազդը: — Ապրիլը համոյք գարձնել: Էակները իրարու դրաւիլ գարձնել եւ միտցման մղել, որպէսզի սելնդադորձեն: Կենեքի անցաւոր հանդամանքը պատրանքին ընդմէջէն տեւականութեան զպացումի վերածել: Յաղթել մահուան եւ վախճանի գաղափարին: Չգալ արարիչ եւ անմահ: Քեզմէ ետք, ստեղծադորձութեան մէջ ապրիլ, ժամանակին դիմաց: Ուրքան սէր պէտք է զգալ այսքան զեղեցկութիւն կերտելու համար: Որքան սիրել կեանքը, մահուան հակառակ: Տիրապետել սիեզերքին: Աստուածանալ: Քանզի ժամանակը, միջոցը, վախճանը, որոնք մարդկային մտքի վերացական ու պայմանադրական ընձրտումներն են:

Ու կը դառնամ քիչ մը անձնական: Ես ծնած եմ հեռուոր Անթապ: Հազիւ կը յիշեմ քաղաքը, բայց վայրը իրրեւ գաղափար հօգը է: Թուրքիա, քարտէսին վրայ, աշխարհին համար: Կ'ընդվզեցնէ զիս, կատաղութեան աստիճան: Մայրս՝ հեռուոր, անցոյ, բայց միշտ ներկայ իրրեւ ատանձին էակ եւ իրրեւ՝ ես, էութիւնս համակ: Հայրս շեմ յիշեր. մեռած է, ես մէկ տարու: Տառապանքը կը զգամ յաճախ: Մայրս, թրքախօս, զպրոց շտեմած, աշխարհ չայցելած: Երիտասարդ այրի, ութ զուակ, աղքատութիւն: Պատմած է ինձի: Ու կ'ըսեմ, որքան երկոր ճամբայ քալած եմ: Թրքախօս ծնած, գաւառացի, երկրէ երկիր, աղքատութեան մէջ: Երազներ, երազներ եւ յուսախարութիւն: Որքան ճամբայ: Հանրային գործիչ, կրթական մարզ, գեղարուեստի սիրահար:

Նստած եմ Իտալիա: Կը նստանձիւմ: Ըլլալ հողիւ վրայ, ազատ: Հնարաւոր է ըմբռնել երանութիւնը: Ստորադասութեան ոչ մէկ զգացում: Ընդհակառակն: Չուարթոնցը, ստեղծախաւոր աշտարակը երկինք տանող: Բայց զրկանքը, սեփական հողի պակասը: Արժաններդ ո՞ւր են: Բոյսին նման հոսիքուն հետ թաւալիլ, մինչեւ որ խոնաւութեան հասնիս եւ առժամապէս խրեւ արժաններդ հողին աւելին: Առժամապէս:

Կ'ըսեմ, պէտք է հաւաքել արժանները եւ մեկնել Հայաստան: Կանգնել հողիւ վրայ, թաղաւորի, աշխարհակալի, սերմ բուսցնող մշակի նման: Չգալ էութիւնդ, կատարեալ, ամբողջական: Գտնել բազմաշարժար անձը: Ապրիլ երազը: Կորսուած զրախար: Արիւնտամ հողին, որ յացաւ եւ ստեղծադորձեց: Մեռաւ, յարութիւն առաւ, մեռաւ, կրկին կանգնեցաւ: Երբեք հողին չծախեց: Ազատութեան համար կոտորեց: Գեղեցկութեան տենչաց, ստեղծագործեց: Այդ ձեւով միայն կրնար սոկալ, ապրիլ, անձանալ:

Պէտք է Հայաստան վերադառնալ: Իսրեւր ետք, գտնել էութիւնդ, նրաւճել տեսիլը:

(Շար. 7)

Բ. ԿՈՒՆԵԱՆ



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆ

ՏԱՍՆԵՂՈՐՍ ՏԱՐԻ ԵՏՔ

Ինչպէս յիշած էինք «Բաղնիքի ժր.» ասրուած վերջին թիւին մէջ, «Աւսկիտական գրա-
կանութիւն» ամսագրի Հոկտեմբերի Համարի էջերուն Հայաստանի թմաշատներէն Վազգէն
Մնացականեան նիւթ գործուցած է «Աւստիք Խոսեակեանի Գամակները» անուն գիրքը, որ
Հրատարակուած էր Գաւիթէ, 1938ին:

Ունինք ուրիշն 1868ին Հրատարակուած գիրք մը եւ այդ գիրքին բովանդակութիւնը
կողմող նամակները Հրատարակութեան տուած մարդոց զէմ 1973ին գրուած հրատարակա-
դրական յօդուած մը:

Տանըջորս ասրի ետք:

Նա՞ր Հայաստան Հասու արդեօք «Աւստիք Խոսեակեանի Գամակները», կամ Վազգէն
Մնացականեան 1973ի՞ն միւր չհարաւորութիւն աննցու կարգալու գալի:

Ձեռք կարծեր:

Իր Հրատարակութեան ասրին (1959) Հայաստան Հասու այս Հատորը, որուն մասին
ի շարս այլոց նաեւ Հրաշխայ Քոչար, ահարկելով անշուշտ իրենց մերկացուցած եւ այդպէս
ներկայացուցած Թաւակեանէն ասրեր Թաւակեանի մը գոյութիւնը Հաստատող նամակա-
նիին բովանդակութենէն, խուճաղակար քանի մը էջ զրեց, ընկան է, ոչ թէ Համայնաժողովու-
թիւնը Հարուածող նամակագրին, այլ նամակները Հրատարակութեան տուած անձնաւորու-
թեանց զէմ:

Հրաշխայ Քոչարի պարագային Հասկնալի էր ամէն բան, նոր էր գիրքը, եւ որինս-
կան՝ յօդուած գրելու մղումը: Պարագան նոյնը չէ Վազգէն Մնացականեանի, որ շե գրեար
ինչ Հեռանկարներէ գրուած՝ տանըջորս ասրի ետք մեռք կ'սանէ Հատորը, եւ մոռնալով
կամ տակնուվրայ ընելով անոր բովանդակութիւնը՝ անընդհատ նիզակի կը ձօնէ Հրատարա-
կիչներուն, ի՞՞՞՞՞՞ Գաւիթէի Գամակները զէմ, իր մաքին կրտսերուած կոմունիստական մութը մա-
տուցանելով միայն անուններէ կուշտ իր ընթերցողներուն:

Մենք վաղուց մտացած էինք Թաւակեանի յիշեալ նամակները, բայց խաբուած ու
նոց կառոյցը վերահաստատելու Համար՝ Հարկադրուեցանք կրկին բանալ գիրքը:

Հետագայ էջերը կը ձգտին լայնի սակ աննէլ իրականութիւնները, ինչպէս եւ իրական-
ութիւնները խնշաթիւրող կամայականութիւններն ու այս ուշացած գրուելին թաքուն շար-
ժանիքը...

ԻՍԱՀԱԿԵԱՆԱԿԱՆ

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ



Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Ր Ա Ր

Այսինքն Իսահակեանի նամակները հեղինակին ողջուցը չհրատարակելու եւ մահէն ետք միայն գտնուող լոյս ընծայած բլլալու դաշնակցական անհատներուն մղումը լուսարանող խորհրդահայ քննադատին խորախորհուրդ մեկնաբանութենէն:

«Ուրեմն այդ նամակները հրատարակել են Իսահակեանի մահից յետոյ (այն էլ ամբիջապէս) ոչ թէ նրան «չվնասելու» մղումով, այլ մերկացման վախից, մէկ էլ այն անգիբում ուղղամտութիւնից, որով օժտուած էր մեծ քանաստեղծի խօսքը»:

Իրականութիւնը, այսինքն՝ մարդոց պարկեշտութիւնն ու ազնուութիւնը այս անպատասխանատուութեամբ կրնան մեկնաբանել միայն սահմանին այն կողմը ապրող մարդերը, անոնք, որոնց կազմութիւնը զուգադիպեցաւ հողեկան ու իմացական ամէն հաւասարակշռութիւն խախտող դժնդակ պայմաններու մէջ, ստալինեան երկարատեւ գիշերներուն: Մենք հոս ի՞նչ գուրգուրանք կր տածենք իւրաքանչիւր հայու նկատմամբ եւ ինչ լուսութիւններու կր դատապարտենք մենք մեզ սեւէ մէկը նուաստութիւններէ ու վասնդներէ դերձ պահելու համար, մինչդեռ իրենք ահաւոր դիւրութեամբ կ'ըսեն, որ կը լուենք ոչ թէ շինասելու մղումով, այլ «մերկացման վախից»:

Ի՞նչ մեքիպացում, ի՞նչ վախ: Մերկացուելիքները գաղափարական, քաղաքական ու մարտկառային իրենց յանձնատուութիւններուն աւրնչութեամբ իրենք այդքան անկայուն եղան, արտասանած իրենց խօսքերուն ու որդեգրած կեցուածքներուն միջեւ իրենք այդքան խոտորեցան, որ ահաբեկէին «մերկացման վախից»:

Եթէ խնդրոյ ատարկայ նամակները «չվնասելու» մղումով պահ դրուած չբլլային եւ հրատարակուէին Իսահակեանի ողջուցը՝ իրապէ՞ս չէին վրնասեր Իսահակեանին, որ Մնացականեան մասի փաթեթոց կր դարձնէ ենթականերուն ազնուական այդ մղումը:

Կը վնասէին, հարկա՛ւ: Եւ կր վնասէին երկու ուղղութեամբ, թէ՛ բուրձնեկներուն հասցէին արձանագրած բոլորովին անբանաստեղծական հայհոյանքներուն համար, թէ՛ Դաշնակցութեան հանդէպ իր հողիին յամառող գեղուն համակրանքներուն պատճառով:

Ահաւասիկ այդ նամակներէն կազմուած պատիկ ծաղկաքաղ մը, պարզ հնդաբանեայ մը բուրձնեկներուն մասին:

— Իմ կարծիքով՝ ոչ Իթթիհատը, ոչ ցարիզը, ոչ Գերմանիան ու Անտանտը աւելի հիմքով չկործանեցին մեր տունը, քնչքան բուշուիզմը, այս ցարգանական շարժումը, որ մուկ գարած թուրքերին հասցրեց մինչեւ թագու:

— Բուշուիզմը մեզ մեղադրում են ոտմանտիզմի մէջ. բայց իրենք եղան անմատիւմար ոտմանտիզմերը: Այս տեսա մարդկութեան մէջ իրագործել տոգիւղիզմը, իր գէշ գեւով՝ կամուրջիզմը, վայր ընտրելով իսլամ եւ մոնղոլ երկիրներ... տղորմելի. վայրենի գազաններ...:

— Ինձ թուում է հիմա, որ բուշուիզմը մնալու է, եւ մեք հրա վայտնանք մեր աշխրոյ շենք տեսնելու...:

— Ես հայրենիք, ազգ, լեզու, Հայաստան անբողոքատելի չտալով տւելի եմ սիրում, քան բախուտըն ու միջագայլին իւրիպեան եւ ծամաշարհային յեղափոխութեան քլլոփը:

— Լսեր եմ, որ Գաշնակցական ընկերների մէջ խօսք է եղել, թէ ես բուշուիզմ եմ: Երբե՛ք, շիտաւտաս: Բուշուիզմը եզաւ հայութեան գերեզմանը, սկսած 1918 թ.:

«Համայնագար ծայրագոյն նեղմտութեան, այլամերժութեան, զկամ մեղի հետ կամ մեղի դէմ» նշանախօսքին հետեւանքով կատարուած «դէմաքու ծաւալուն հունձքին բոլորովին անձանօթ պէտք է բլլայ մարդ, կամ կողմնակալութեան կիրքով կուրցած, որպէսզի համարձակի պնդել, որ աստեք, այս զգազանական շարժումը, զամենատիւմար ոտմանտիզմերը», «Համայնագարային յեղափոխութեան քլլոփը» եւ «Հայութեան գերեզմանը» եզոդ բուշուիզմը կրնային հանդիստ ձգել Թաւահեաներ:

Նոյն նամակներէն ուրիշ նկարանեայ մը, Թաւահեանի համարումներէն այս անգամ, բուշուիզմերուն համար դարձեալ մաւազու:

— Ես շատ եմ քննադատել Գաշնակցութիւնը, եւ շատ խիստ՝ ըստ իմ տաք, անգուտղ տեմպերմենտի, բայց հիմա տեսնում եմ, որ Գաշնակցութիւնը իր սխալներով հանդերձ օւղիզ գիծ է բռնած:

— Արտաստեմանի դաշնակցականները պիտի հաւատարիմ մնան, եւ պայքարեն, քննադատեն, մա՛նաւանգ Մոսկուա նստած սրիկաներին՝ աւագակ Ռադիկներին ու Զեմովիներին եւ ընկ. որոնց շնորհիւ այսօր կովկասում հոգեմտման իսլամի գեռքն է:

— Գաշնակցութիւնը երկրի մէջ թող մի կերպ համակերպի բուշուիզմների հետ, իսկ դոսի գաղութների Գաշնակցութիւնը մնայ օպոզիցիոնի մէջ, քննադատէ բուշուիզմը (արգար եւ իրաւացի կերպով). մշտական յարարութեան մէջ լինի ուս օպոզիցիոնի հետ պայքարի համար:

— Ուրախ եմ, որ երկրում մերոնք հաշտուել են տիրազների հետ, գտնէ մարքերը կ'ազատեն. իսկ դուրսը մնան օպոզիցիոն, քննադատեն, պահանջեն Բրեստ-Լիտուսկի—Կարսի դաշնագրի լուծումը:

— ...Այսպէսով համաձայն չեմ մեր ընկերների «Անկախ, Միացեալ Հայաստան» յորբորումին, եւ մինչեւ մաս կը մնամ Գաշնակցութեան հաւատարիմ, որովհետեւ նա համապատասխան է իմ ազգային տեսչերին, եակատակ լինելով թէեւ ձեր բուշուիզմը օրուայ պոլիտիկին:

Այս բաները բոլանդակոդ նամակները ստացած դաշնակցական անհատները քաջ գիտէին, որ Գաշնակցութեան հաւատարմութեան խօսքի արտասանած եւ անոր օպոզիցիոն կուրք օւղղած Թաւահեանին չէր խնայեր բուշուիզմը, ա՛յն բուշուիզմը, որ նման արամադութիւններու ու կեցուածքներու:

բու հանդէպ իր ունեցած անպատճառ հեռուոր կապակցութեան համար արեան ծո-
վեր առաջացող ողջ Հայաստանի ասրածքին, գաժանարէն որածելով Հազար-
բարտը զանձնից մեղաւորներ :

Ճշմարտութիւնը այս է եւ կուսակցական կիրքով ու նախանշանակեալ
ապերախտութեամբ շարագրուած թանձրամտութիւնները շէն կրնար հերքել
հազար անգամ հաստատուած ճշմարտութիւնը :

Իսահակեանի մասին բուհականութեան ունեցած ծանօթութիւններուն եւ
բուհականութեան մասին իսահակեանի կազմած կարծիքներուն անզբաղանա-
լով, եւ գիրար խորապէս ճանչցած ըլլալու հաւաստիքներ սարքելով, Վազ-
դէն Մնացականեան կը գրէ .

«Այժմ երկու կարեւոր հարցի պատասխանը խիստ կարեւոր է դառ-
նում : Առաջին . Սովետական Հայաստանի իշխանութիւնը գիտէ՞ր արդեօք,
թէ ինչ կեանքներ ունի իսահակեանի բազմակամ կեանագրութիւնը : Երկ-
րորդ . իսահակեանին յայտնի՞ էր այդ , թէ՞ միամտաբար կարծել է , թէ բու-
հականութիւնը իրեն ճանաչում են որպէս բանաստեղծի : Հայաստանի իշխանու-
թիւնը գիտէր ամէն ինչ , իսահակեանին էլ դա յայտնի էր» :

Գիտէին , հարկաւ , բայց ոչ ամէն ինչ : Իսահակեան ո՛չ ամէն ինչ հրա-
տարակած էր եւ ոչ ալ հրատարակածներուն մէջ ամէն ինչ բռնած : Իր խոս-
տովանութեամբ՝ «Նախ քան կարող եմ գրել , բայց վախեցնում եմ գրգռել
այդ դեմքերին եւ վրէժը թափել տալ այնտեղ մնացողներին վրայ : Մարդ չգի-
տէ , թէ ինչպէ՞ս վարուի այդ թալապների հետ» :

Անկախ չգրուածներէն եւ այս նամակներուն մէջ արտայայտուած կար-
ծիքներուն անտեղեակ ըլլալու փաստէն , բուհականութեան մեղաւորութեան
թիւններէ հեռու չպահեց իսահակեանը եւ նուստտութիւններէ դերձ չկացու-
ցեց իր հոգին :

Առաջին անգամ 1926ին Հայաստանի մեկնեցաւ իսահակեան եւ «Յուկէս
տարի տանջուելուց յետոյ թոյլտուութիւն» ստացաւ արտասահման անցնե-
լու : Այդ թուականին (1930) Փարիզէն գրուած նամակի մը մէջ կ'ըսէ .

«Զգիտե՛մ՝ ի՞նչ պիտի անեմ : Հայաստանից մեկնելուց ինձնից խօսք ա-
ռան վերադառնալու համար : Խօսք տուի : Վերադառնալ ուզում եմ եւ չեմ
ուզում : Զե՛մ ուզում խօսքս դրժել , սա ծանր կը գայ տեղում ապրող ինտելի-
գենցիային , վատ կ'անդրադառնայ , բայց զե՛մ եւ ընկնել նորից բռնութեան
տակ , գազազուել , իրան ուտել , գալարուել իր վրայ եւ լռել — այդ էլ չեմ
ուզում , բայց մնալ այստեղ , այս գգուելի Փարիզում , սա եւս ամենադուրժելի
է , եւ յետոյ ինչո՞վ ապրել , ի՞նչ միջոցներով պահել բնտանիքս եւ գրակա-
նութիւն անել (ե՛րբ կապերը կտրուած են , եւ ինքնապատուութիւն է նորից
դիմել հին կապերին) , ի հարկէ խօսքը ձեր մասին չէ , դաշնակցական ընկեր-
ներիս , այլ ուրիշ — բարձուական կապերը» :

Իր Հայաստան ապրած առաջին երեքուկէս տարիները (1926-1930) խա-
ղաղ շեղան ուրեմն , անցան «բռնութեան տակ» եւ ինք ստիպուեցաւ «զազոզ-
ուել , իրան ուտել , գալարուել իր վրայ եւ լռել» :

Նման օրերու համար իսահակեան վերադարձաւ Հայաստան ,
Զինք «բռնութեան տակ» առած ըլլալու իրողութեան համար կը յո-
խորտան բուհականութիւնը :

Եւ սակայն՝ կրնա՞ր այս գժոխքին մէջ գրականութիւն ընել :
«Գնամ-չգնամ»-ի երկրորդ տարբերակը օրերուն , իսահակեան գիտէր , որ հոն ,
իր բառերով՝ «սեռանիլի շատ քան կայ» , գիտէ՞ր , բայց , դե՛հ , որովհետեւ

ուրիշ էլք չէր մնացած իրեն, եւ յետոյ, իր կարծիքով՝ «ես գնում եմ հաւա- տարիմ իմ Եսիս և մեծամասնականները ինձ յարգում եմ հենց դրա համար»:

Մեծամասնականները վերջ ուրուագծուած տանջալից իրադարձու- թիւններու աքցանին մէջ յարգեցի՛ն իր կողմէ դիտարկուած իր Եւք, ըրին այնպէս, որ հարկադրուեցաւ. «գազազուել, իրան ուտել, գալարուել իր վրայ եւ լռել»:

Իր աստիճան երթիւնէն ետք, Աեհաթ Իսահակեան վեց տարի ապրե- ցաւ Եւրոպա եւ տնտեսական կայուն շահութեանը չկարենալով ապահովել իրեն, յիշեց «վերադառնալու համար իրմէ առնուած փողը, վեց տարի ետք վերջնական յիշեց, որ վերադարձի խոստումին գրծումը «ճանր կը գայ տե- ղում ապրող ինտելիգենցիային, վատ կ'անդրադառնայ» եւ, 1936ին, որչեց վերջնականապէս մեկնիլ Հայաստան, այսինքն՝ որնկնել նորից բռնութեան տակ»:

Այդ նոյն տարին, սկսած էին արդէն բոլշեւիկեան դժոխքին ամենաթէժ օրերը եւ Իսահակեան զերծ չմնաց մարդը իշխակի վերածող անարկու ստի- պումներէն: Հոս, ի հարկէ, չէր կրնար այլեւս լռել, որ «ես չեմ կարող բու- ռոյապէս ինձ քաղել ու խայտառակել, ես հանգուցեալ Յովն. Թումանեանի խմբից չաւնեմ, բաւական քարս էլ մարդ եմ», ինչպէս չէր կրնար յայտա- բարել, որ «իմ մէջ դեռ շատ երկաթ կայ, որ գնում եմ իմ առաջադրած նպա- տակին, եւ ոչ ոք չի կարող ծռել ինձ»: Զինք Հայաստան հրաւիրող, իր «ճ- սոյ» յարգող, դրահանութիւնը մեծարող բոլշեւիկները ո՛չ «Քարաւորութիւն մզնեցին իրեն, ո՛չ «Երկաթ», ոչ ալ յոռելու բարոյական կորով:

Հայաստան հասնելէն (20 Օգոստոս) անմիջապէս ետք, «Սովետական Հայաստան» օրաթերթի 1936 Նոյեմբեր 26 թիւին մէջ ընթերցողը կարգաց նորադարձ Իսահակեանին քաղաքական սա հաւատամքը.

«Ստալինեան Սահմանադրութիւնը քաղաքանք է համաշխարհային մարտնչող պրոլետարիատի համար եւ ուժգին հարուած բոլոր երկրների բուրժուաներին եւ ֆաշիստներին: Դրանով աւելի խորանում է եւ հաստատու- ւում լեւինեան-ստալինեան ազգային քաղաքականութիւնը»:

Քարմայնելու համար ընթերցողին յիշողութիւնը, «կողմ նախադասու- թեանք մը բռնեք, որ «Ստալինեան Սահմանադրութիւնը» կոչուածը այն սահ- մանադրութիւնն էր, որ ի միջի այլոց վերստին կը հաստատէր եւ անփոփո- խելի եւ անփերաքննելի կը հռչակէր Մոսկուայի եւ կարսի գաշնազրեբով Հայաստանին պարտադրուած պայմանները, վհատեցուցիչ կացութեան մը մասնելովով բոլշեւիկներուն կողմէ թուրքին ու թաթարին բաշխուած հայրե- նական մեր հողերուն բախար:

Եթէ բոլշեւիկները զոյգն յարգանք մը ունեցած ըլլային Իսահակեանին հանդէպ, քնական է, նման յայտարարութիւններու տակ ստորագրելու նը- ւաստութեան չէին ենթարկէր զինք, կամ եթէ «Երկաթ» ձգած ըլլային մէջը, այսքան չէր ծռեր ինք, չէր բռեր իր համոզումին ճիշդ հակառակը, ա՛յն հա- մոզումին, բայտ որում՝ «Ա՛խ, ափսոս կարսն ու վանը ու Մուշը: Անիծուած բոլշեւիկները փշացրին մեր հարցը»:

Ու պատճառաբանութիւնը այդ կորակացութեան. «Իմ կարծիքով հայութեանը այնքան չհարուածեց ո՛չ Մուլքան Համի- դը, ո՛չ Գերմանիան, ո՛չ Իթքիհանն ու Միլլիմ, ո՛չ Յարիզմը, ո՛չ Անտանուրը, ո՛չ մեծ պատերազմը, արքան, զուցէ ակամայից, բոլշեւիկները. եթէ բոլշեւիկ- ւը չգար, ռուսները հիմա ամուր նստած էին Մուշ ու Երզնկա, եւ մեմ էլ

մեր տանը, եւ հայոց հարցն էլ իր միակ տրամաբանական ելք-լուծումը ստացել էր. վերջապէս, փաստաւ էր. սոցիալիզմը մարդկութեան գեղ բարիւն շտրուած, մեր տունը բանդեց» :

Արտասահմանի մէջ այսպէս կը մտածէր Իսահակեան, իր «Գնամ-չգնամ»-ի երկրորդական մտասանջութեան ծովուն, խոր կասկածներ ապրած շրջանին նոյնիսկ պայմաններ կը դնէր. «Թէեւ եթէ չվախեամ, գնամ, կարող եմ գուցէ մի քիչ օգուտ բերել. Բանի որ բաշխելի շրջանները յարգում են ինձ: Դուրսը նրանց միտքն է ինձ իրենց քայլի: Գրում եմ, թէ Ղարսը յետ անէմ եւ զարդարեմքէ հալածանքները... Բայց ի զուր բաներ են. մի կողմից՝ շոյում են, միւս կողմից վնասում: Եզրայրներս տունը, որ իմ տունն էր միաժամանակ, ուղղակի քանդեցին. իմ ողջ գրադարանս գրաւեցին, եւայլն, եւայլն» :

Հոս Ղարսը յետ անելու պահանջը դնելու շափ ուժեղ կը զգար ինքզինք, մինչդեռ Հայաստանի Հողին վրայ կարսը վերստանալու վերջին յոյսը դերեզմանող Սահմանադրութեան գոյթը հիւսել տուին իրեն բուհիկ շրջանակները, որ «յարգում են ինձ» :

Հուս գիտնալով Հանդերձ բուհիկ շրջանակներու յարգանքի թաքուն իմաստը (զգուցէ նրանց միտքն է ինձ իրենց քայլի») կը թուի, թէ իրեն ուղղրած հրաւէրը որոշ անց գրաւած է մաքին մէջ եւ յաճախ կը խօսի այդ մասին. «Եւ նրանք գրում են — եկ, մենք սիրում ենք քեզ, թէ հենքն են սիրում քեզ եւ թէ կոմունիստ»: Կոմսոմոլի սէրէն տարի մը ետք նորէն նոյն զեղումը. «Հայաստանի իշխանութիւնը առանց որեւէ պայման դնելու իմ առայ. առանց մի որեւէ թուղթ ստորագրել տալու, ազատ մուտք է տալիս, եւ դիրութիւններ, եւ միայն յարգանք աւ գնահատում, ուրիշ ոչինչ» :

Հրաւէր ուզած աստեւ, ճիշդ է, Հայաստանի իշխանութիւնը թուղթ ստորագրել չտուաւ Իսահակեանին, բայց հրաւէրը ընդունել տալէ ետք ճշեց թուղթ, որ ստորագրել չտայ անոր :

Ստալինեան Սահմանադրութեան փոփոխանները ընկն երկու ամիս առաջ, աշխիճ՝ երկրորդ անգամ Հայաստանի Հողին վրայ ոտք դնելէն ուղիղ մէկ ամիս ետք (Սեպտեմբեր), Ստալինեան Սահմանադրութեան եւ ստալինեան այլ բաներուն դէմ մղած իրենց խուլ պայքարին համար ոչնչացուած կամ հրապարակէն զուտ էին Բակունցը, Թոթովեցը, Դրաստամատ Սիմոնեանը, Վանանդեցին, Մահարին, Նորենցը, Ալազանը եւ միւսները: Անոնց վերագրուած մահացու մեղքերով ամբաստանուած էր եւ ինք, որ ստացած սաստեղուն իբր անմիջական արձազանդ՝ Գրողներու Միութեան ներկայացուցչու ընդարձակ նամակ մը, որ կը պատկերացնէ ոգրերգութեան մը անջեւ նոր ողբերգութեան մը եւթարկուած հողիէ մը անաւոր կացութիւնը.

«Անշուշտ շատ սխալ կարող եմ գործած լինել, բայց գրանք վերագրելի են այն հանգամանքին, որ ես հազար քիլոմետրով հեռու եմ եղել մեր իրականութիւնից եւ հետեւաբար չէի կարող իրագրել լինել :

«Ինձ շատ վիշտ պատճառեց նաեւ մի քանի գրողների ձերբակալութիւնները, որոնց մէջ ունէի անճանկան բնկերներ, բայց երբ վերադարձայ Երևան եւ հնար եղածի շափ ծափօքացայ իրերի եւ իրագործութիւնների հետ. տեսայ, որ մեր կառավարութիւնը — որին անպայման վստահում ենք եւ ժողովուրդը ուրիշ կերպ չէին կարող վարել նրանց հետ: Որովհետեւ նրանք չեղանք են ուղիղ, տրամաբանական նախապահից եւ ընթացել են մի զատապարտելի նախապահով, որ միայն վնաս է բերում մեր բազմաշարժար ժողովրդին» :

Եւրոպայէն Հայրենիք նոր վերադարձած ժարդու մը այս ինքնախաբարտուժմը, ինչպէս նաեւ դժբախտ իր գրչակիցները ճշդից, արամարանական ճանապարհից» շեղած համարելու երկրորդ դժբախտութիւնը ոչ ոքի մազթելի կացութիւն է եւ ենթական մեղադրելու ամէն փորձ հեռու է մեզմէ:

Միտյն թէ...

Միտյն թէ՛ Վաղզէն Մնացականեանները այս ամէնքը Իսահակեանին եղած կամ Իսահակեանէն ընդունուած օրհնութիւններ չհամարեն, այնքան անզգամ չհամարեն Իսահակեանը, եւ բոլոր՝ ընթերցողը, առաջինին մասին երկրորդին բանու համար, որ

«Հայրենիքում Իսահակեանի շատ շուտով իտրապէս ծամուցեց, որ բոլշեիկն ու Հայրենիքը մի ամբողջութիւն են կողմում եւ ինքն էլ դուրս չէ այդ ամբողջութիւնից, որ բոլշեիկն ու ժողովուրդը իրար հակառակ ուժեր չեն, այլ բախառուք մի միասնութիւն, որին եկել է իրանուելու մտն ինքը: Ասում եմ իտրապէս, որովհետեւ արագներում էլ քանստեղծի մտորումներում երբեմն-երբեմն փայլատակում էր այն համոզումներ, թէ բոլշեիկները «մեզից պակաս ծայրեւեակներն չեն»:

Իսահակեան Հայրենիքի մէջ շատ շուտով ու խորապէս համոզուեցաւ մինչեւ օրս տակաւին խնդրական Մնացականեանի ոտքած ԱՄՖՈՂԶՈՒԹիւն-ՄԻՒԱՆՈՒԹիւն առաստիչներուն արդեօք, թէ խորապէս ապրեցաւ շրջուած ամբողջութիւն մը, ստալինեան ամբողջական դժոխքը:

Օգոստոսին՝ Հայաստան, Սեպտեմբերին՝ գրչակիցներու ձեռքակալութիւն, Հոկտեմբերին՝ քաւարանային դրութիւն, Նոյեմբերին՝ Ստալինեան Սահմանադրութեան դուրք, Դեկտեմբերին՝ մեղայադիր...

Բայց միայն 1936ին դժնդակ շեղու Իսահակեանի կացութիւնը, այլ նաեւ անկէ ետք եւ տարիներ շարունակ:

«Նայիրի» շարաթաթերթին մէջ (1969, թիւ 25), Նայիրի Չարեան կը պատմէ, որ «1934 թուականին, երբ կլեւում ինձ ընդունեց Ա. Ի. Միկոյեանը, եւ նրա մօտ բազմակողմանի փաստարկումներով պաշտպանեցի Չարենցին, Իսահակեանին եւ ուրիշներին»:

«Նրա մօտ», Միկոյեանի՝... Ուրիշ խնդիր է, անցնինք:

Իսահակեան կը անդեկանայ Չարեանի պաշտպանողականին եւ անոր ուղղած մէկ նամակին մէջ կ'ըսէ.

«Խորապէս շնորհակալ եմ քեզ ընկերական ազնիւ վերաբերմունքի համար, որ մեր Երեսնի ճգնիմ իրականութեան մէջ քացառիկ երեւոյթ է»:

Երեսնի ճգնիմ իրականութեան ճգնիմները շուտով վերջ շրջին ճգնիմում թեան իրենց արշաւին: Տարի մը ետք, 1939ին, Նայիրի Չարեան կը պատմէ Մոսկուայի մէջ ապրած այս անպամ սա՛ փորձառութիւնը.

«Թերթում կարգացի «Մասունցի Դաւիթ» էպոսի 1000ամեակի կառավարական կոմիտէի ցուցակը, սրտեղ իմ անունը կար, սակայն քացակայում էր Իսահակեանի անունը: Եթէ Իսահակեանին չէին դարձրել յարելանական կոմիտէի անդամ, նշանակում էր, թէ նրա վիճակը ծանր էր (բաղաճական անուամով): Իմ այդ կասկածները հաստատեցին Երեսնից նոր եկած ընկերները»:

Այդ նոյն տարին էր, որ Իսահակեան գրեց «Մեծ Ստալինին» խորագրով ստանաւորը, որուն առաջին եւ վերջին տուները ունին սա բովանդակութիւնը.

Բարձրացրիլ ես դու պատմութեան սուրմ անեղ
 Երկրի վրայ՝ ճնխմելով ծանրաբեռ -
 Ստեղծագործ խօսքի հզօր եւ անշեղ
 Ողջ աշխարհի սրտում կրակ է վառել :

Եւ տանում ես յաղթանակից յաղթանակ
 Հայրենիքը մեր անեղբւ՛ւք, աննկուն -
 Քեզ անսպաս կամք քո կորով, երկար կեանք,
 Ո՛վ մեծ գործի մեծ առաջնորդ իմաստուն :

*Այդ որէն սկսեայ մինչեւ մերձ ի մահ իր տարիքը, Իսահակեան ուղ-
 րեցաւ «ՄԵԾ Ստալինի» բարձրացուցած անհոյ սուրին տակ, ունկնդրեց այս
 ոտանուորին մէջ զատեղծագործն եւ ուրիշի մը մէջ «մեծագործ» զարժան՝ ա-
 նոր ճշգրտ ու անշեղ՝ խօսքը, ուրա՛*

«Կունցնեց խոթիս՝ սոցիալիզմի դրօշի տակ փառապանմ»,

Սկսաւ կատուցել

«Կամուկիզմը խոթ եիմքերով, խարիսխներով աներեր»,

Ստալինի հաշտոյի մարգարէացա՛ւ

«Մեր սրտերում քն անունը յաւերժ պիտի շողջողայ» :

Այդ ամէնուն համար «մեծագործին» կրկին ու կրկին մարթելով՝

«Առողջութիւն, ուժ ու կորով, փառք յախտեան անթաաւա՛ւ» :

*Այս վերջին մէջբերումները առնուած են Ստալինի 70ամեակին առի-
 թով Իսահակեանի կողմէ խմբագրուած «Հայ ժողովրդի նամակը Խոսիք Վիս-
 սաբիովիչ Ստալինին» խորհրդի կողմ ծանոթ տեսքումէն :*

*Մէկտեղեցինք այս բոլորը՝ կրկին յիշեցնելու համար, որ Հայաստան
 հաստատուած օրէն մինչեւ իր վախճանը՝ այս եղաւ Իսահակեանի վիճակ-
 ւած բախտը, պատրանաթափութիւններու, յուսալիկութիւններու եւ նուազ-
 տութիւններու յաջորդական շղթայ մը, որուն նախանշակը ապրած էր ա-
 ռաջին աջեկութեան ատեն եւ աւաւորութիւնը զգաց աւելի ուշ, եւ իր սե-
 փական՝ մորթին վրայ, եւ ծայրադրի սաստիկութեամբ... :*

*Վազգէն Մնացականեան կը խօսի այնպէս, որ կարծես նման բաներ
 ընաւ չեն պատահած, Իսահակեան ակնառես չէ եղած հայ ժողովուրդի ի-
 բաւունքներուն պերկամեծութիւն, ստալինեան միւս սրածուծներուն, իր զբա-
 կան ընկերներուն կամայական ոչնչացման, իր հողին աւերակի վերածած
 վերաբերումներուն, եւ կղան ըլլար գոհ ու երջանիկ մարդ մը, վերջ նկա-
 րադրուած անցուղարձները արդար, ժողովուրդին համար օրհնութիւն, հայ-
 ընկերքին համար օրհնաբեր համարող անձ մը :*

*«Իսահակեանը, — կը հուրջնէ Մնացականեան, — իմնալէ՞ս կարագ էր
 վախենալ բաշխիկներին, երբ նրանց չէր տեսել, իսկ լսածը ծառ ու շիտակ
 լուրեր են եղել, ծառը՝ շատ, շիտակը՝ քիչ : Եւ, վերջապէս, եթէ, իրօք,
 վախը մեծ է եղել, ապա դա քաւակամ պիտի լինէր նայրենիք չվերազառնալ,
 իսկ եթէ վնտել է զինչ էլ ուզում է լինի գնալ Հայաստան», կը նշանակէ յաղ-
 քահարել է այդ վախը» :*

Քիչ առաջ մատնանշիցինք, թէ ինչ հրամայականներու ենթարկուելով եւ ինչ մտատանջութիւններէ ետք Իսահակեան ճամբայ կ'ու գէպի հայրենիք, ինչպէս յաղթահարեց Վոլոյթը, որուն մեծաբանակր, ինչպէս տեսանք, պիտի սկսէր շուտով ու խորտակէր նաեւ տնոր ազդային, մարդկային եւ գրական ողջ կառոյցը:

Կարգ մը իրազարձութիւններու լոյսին տակ՝ Իսահակեան կոտորած էր վախազդեցիկ որոշ ճշմարտութիւններ, բայց չէր կրնար նախատեսել այդ իրազարձութիւններուն այն դաժան հետեւանքները, որոնք պիտի ցնցէին ամբողջ առաւելական կայսրութիւնը, Հոկտեմբերեան յեղափոխութիւնը պատկած յեղափոխականներն ուլ հետը: 24 Փետրուար 1924ին գրուած նամակի մը մէջ ինք կ'ըսէ.

«Եթէ գնամ Ռուսիա, արդեօք հանգիստ պիտի թողնե՞մ ինձ նրանք, թէ պիտի լրտեսեն ու երբեմն էլ լակոտ բոլշեւիկները ծագրեն, քանի որ Լեմին ասած էրէշը ռուս երիտասարդութիւնը փշարեց ամբարաւանութեամբ, լրբութեամբ, մախալութեամբ (ստահակ): Առայժմ չեմ գնայ. գուցէ միւս տարի, 1925, թերեւ շատ քան փոխուի»:

Պատահականի կողմէ կատարուած այդ արտահանաշունչները իրենց մէջ կը կրէին այն պայթուցիկ սերմերը, որոնք չէին կրնար չպայթիլ ու պայթեցան ստալինականութիւն անունին տակ: Նոյն տուեալներուն վրայ հիմնուելով է, որ մարդիկ կ'ըսեն, որ ստալինիզմը բնական հետեւանքը եղաւ լենինիզմի: «Ստալինը չէր, — կ'ըսէ «Ճիկար» օրաթերթի 3 Մարտ 1973ի թիւին մէջ ժան Պրոտոնու Քաչն, — որ ստեղծեց ստալինականութիւնը, ստալինականութիւնն էր, որ ստեղծեց Ստալինը, եւ որ, անշուշտ, զայն ձեւակերպեց ի պատկերի իւրում»:

Ստալինականութիւնը, այսինքն՝ համայնափարութիւնը: Ո՛չ, այսքան հետուները չէր կրնար երթալ եւ խորունկները թափանցել Իսահակեանի միտքը, բայց հետու օր մը խորապէս ապրեցաւ Լենինի ոտնոյտած բարձրունքները հետեւանքները:

Ի դէպ, Իսահակեան քանի մը անգամ կարծիք յայտնած է Լենինի մասին եւ արտայայտուած է այնպիսի լեզուով մը, որուն հագիւ թէ կարելի էր լայ հանդիպել Լենինի եւ լենինիզմի ամենաթունոզ հակառակորդին մօտ անգամ: Ահա թէ ինչպէս.

«... Եւ դեռ Լենինին հաշակում են հանճար: Ոնրագործ աւանգուրիստներ են՝ նոյնիսկ հակառակ իրենց մարքսիզմին»:

Ուրիշ տեղ մը.
«Բոլշեւիզմը բոլոր սոցիալիստիկ տեսութիւնների հակառակ մի քրտակամ մտայնութիւն է, որը պիտի անցնի, թերեւ երկար տեսլով, որովհետեւ ռուս ժողովուրդը յոգնել է կոխներհեց, բայց մնալու ապրանք չէ. պէտք է, որ նրա շեփերը Լենինի պէս սատկին, պէտք է գեղ քաշենք»:

Նոյն կարծիքին շարքորդ գրահարութիւնը.
«Երևի, միևնույն օր վերջին բոլշեւիկ-կոմիսար շունը չսատկի Լենինի պէս, որ չեմք տեսնելու: Փշանոււմ է նրանց շնչի տակ ամէն բան, մանաւանդ երիտասարդութիւնը...»:

Նորից կը գրանջ կրկնելու, որ այս քիչ մը շատ կոպիտ թուող բնորոշումներն ու ստատկման զո՛յգ-զո՛յգ բաղձանքները գրուած են հասուն տարիքի մը, Հոկտեմբերեան յեղափոխութեան հօր մահուան նախօրէին ու վաղորդային, անոր «փշարած» փճացածներուն ուղղակի հարուածներէն հետո:

գտնուած միջոցին: Աւելի սեռած փոսխտէն եւ ժողով գրացած անուժելի վերաւորանքներէն ետք, Իսահակեան, եթէ ազատ բոլոր անշուշտ, պիտի լուսեր ու գրէր աւելի գաթան ճշմարտութիւններ, բայց այլեւս չթակարոջին մէջ էր եւ պիտի գործադրէր միայն թակարոջ տիկտատութիւն կամբ, ա՛յ՛ տախան, որ ընկեմ Ստալինին շտայած ուխաններուն աորիթեր՝ իր գրչին տակ ժարդկային տմէն բարեժամութենէ մերկացուած Լենինին յաւթին աալով՝ Նխաքանչ բացազանչութեամբ պիտի բանաստեղծէ՛ր:

Հաուա բազուիր մեծագոր՝ հաննարաշատ Լենինի,
Խփաց դոշը բուշեիկեան — կասեց հունճը արիւնի:

Լենինի, Ստալինի, աոնց գործակիցներուն ու ժառանգորդներուն կապակցութեամբ Իսահակեանի անկապակից արտայայտութիւնները հոս քով քովի չեն գրուիր անշուշտ Իսահակեանի բնաւորութեան յարմարողական գիծը պարզելու մտքով, ալլ էր ժառանչուն աւելորդ անդամ մը եւս անսանկի դարձնելու համար անպատ կազմուած դէմքերը կազմաւորուող այն հեղձուցիչ մթնոլորտը, որուն իրականութիւնը պատմութեան ամօթներէն մէկը եղաւ, Հարկադրական ամօթի մը ժառանգորդը դարձնելով նաեւ իր մէջէն ու ժողին անցնող բոլոր ժարդերը:

Օր մը առաջ հրէջ որակուածը (Լենին) այսօր հանճարացնող եւ առտու հանճար հոշակուածը (Ստալին) իրիկունը հրէջացնող պայմանները ժարդկային պայմաններ չեն եւ այդ պայմաններէն անգամ Իսահակեանը բախտաւոր մարդ մը չեղաւ քնաւ...

Նամակներէն մէջըրուած պարբերութիւններուն մէջ պայծառօրէն պարզուեցաւ, որ Իսահակեան որեւէ համարում ու Հաւատ շունչը նոր կարգադրիներուն ու կարգերուն հանդէպ:

Մարքսիզմը խորթ էր իր բժրոնութեան (Վարաբը գրոշանոց փիլիսոփայ է, շատ նախ):

Կատէր Լենինը (Վենից տասմ հրէշը):

Կը հայհոյէր բուշեիկիներուն (Քոլորմիլի, վայրենի զագաններ):

Կարտայայտուէր քնդէմ բանուորին (Վախանճոտ վիժուածք):

Հաւատք շունչը սոցիալիզմին ու պրոլետարիատին հանդէպ (Քրատարի բաներ են):

Ասոնց կապած ազգային եւ համամարդկային (Վեամաշխարհային յեղափոխութեան Բլոքը) որեւէ պատրանք շունչը, քնդհակառակն, ցարական Ռուսիա կ'երազէր յաճախ, մեր փրկութիւնը կը յուսար իմպերիալիստական Ռուսիայէն:

Ահաւասիկ բուշեիզմի եւ ցարիզմի մասին միաժամանակ արտայայտուող իր մտքերէն երրորդ հնդարտենայ մը:

— Բոլոր նշաններից այնպէս է երևում, որ բուշեիկները մտադիր չեն քուրքերի ենտ զէշանալու եւ եթէ մեր ունեցածը չտան, քուրքերի խլածից մի քիզ հոգ խլելու չեն: Եւ պարզ է ինձ: Եւ հենց այս համար արժէ, որ բուշեիզմը ընկնի եւ իմպերիալիզմ-ցարիզմ գայ...

— Մեր փրկութիւնը Ռուսիայից է, բայց աւելի ցարակամ, քան բուշեիկեան:

— Մեզ հարկաւոր է իմպերիալիստական Ռուսիա եւ այդպէս էլ լինելու է:

— Մեր փրկութիւնը բոլշեւիզմի անկման մէջ է, ազգայնական Բուստոյ մէջ, որ հարուածէ թուրքերին. բայց այդ ազգայնական Բուստան ե՞րբ է գալու եւ մի՞թէ գալի՞ք ունի:

— Բոլշեւիզմի տեւողութիւնը շատ է զգայնացնում ինձ: Նրա դիմա-
նալը չեմ կարող բացատրել, թէեւ հակառակ է իմ լօսած եւ կայդացած սոցիա-
լոգիկ տեսութիւններին: Մի՞նչեւ ե՞րբ պիտի մնայ: Ափսոս չէ՞ր ցարիզմը:

Այս տրամադրութիւններն ու մտածումները սուր բնոյթ մը ունէին Բուստակեանի մէջ եւ կը թուի, թէ իր այդ տեսակէտներով 1924ին լուրջ բախումներ ունեցած է բոլշեւիկեան առաքելութեամբ իրեն ներկայացող Եղիշ Զարինցի հետ, որ անմիջապէս, Վենետիկ դռնուած միջոցին, «էլեզիա», գրուած Վենետիկում» խորագրուած բանաստեղծութեան մը մէջ պատմեց իրենց Հանդիպումները, բախումները, բախումներուն տուն աւաղ հարցերը եւ եզրակացուց.

Եւ լսի՛ր, լսի՛ր. լսի՛ր, վարպե՛տ, —
Ի գուր ես հինը դու երագում
Եւ գո՛ւր է սիրտդ հարթել
Անմխիթաբ այդ սին երագով:
Ի գուր է սիրտը քո գագագում
Երկրի հանդէպ մեր վերածնուող.
Ո՛չ մեր քրկիրն է շուսյաւ Հոսմ
Եւ ո՛չ էլ ինձդ — հար մի Նագուն:
Ի գուր ստին այդ, մքին գերի՛
Դու անիծում ես ուժը մեր նոր. —
Դու այդ ուժի՛ց ես փախել ելնող
Եւ ո՛չ թէ, ո՛չ թէ արժաներից:
Եւ գաս եթէ դու երկիրը մեր
Եւ նոյնը, նոյնը, նոյնը մնաս —
Մեր արեւը չի՛ գուրգուրէ
Քու այդ երգերը մահամնայ:
Քեզ կ'ընդունէ այդ աշխարհը հին,
Որ դեռ ծամում է մամուռ ու ցեց,
Բայց այդ արեւը ամենային
Դժուար թէ սիրտդ տաքացնէ:
Կը մնաս դու սխուր ու ծեր,
Այդ նոյն ամերը քո ցուրտ հոգում,
Եւ յուսահատ ու որք կը լինես,
Ինչպէս հեռու այս Վենետիկում...

Արտասահմանի մէջ այսպէս էր Բուստակեան, միշտ «հինը երագում» եւ «գագագում երկրի հանդէպ մեր վերածնուող», ու «անիծում ուժը մեր նոր»: Ու կ'ըսուէր իրեն, որ եթէ այդպէս մնաս,

Եւ գաս եթէ դու երկիրը մեր
Եւ նոյնը, նոյնը, նոյնը եթէ մնաս, —

Եւ այլն:
Եւ Բուստակեան զնայ «երկիրը մեր» եւ նոյնը, նոյնը, նոյնը լմնաց,

չէր կրնար ծնալ նոյնը, նոյնը, նոյնը, այդպէս ըլլալու համար պէտք էր իրեն մենեախական պայմաններ, մինչ մեր երկրին մէջ պարտաւոր էր մտնել բուլիսիկեան հունը, հունը, հունը, ուր տեսանք, թէ ինչպէս խուժէ խուժ գարնուեցաւ իր անհասականութեան բունը, բունը, բունը...

Հայրենիք վերագրանալու հարցին առիթով, Վազգէն Մնացականեան քանի մը անգամ կ'անդրադառնայ Իսահակեանի աստատումներուն, երկրնորանքներուն, վեր ու վար անուժ-դեմոստրուին եւ կը կարծէ, թէ Իսահակեան այդ կոնոսով «իւր սիրտը բեռնաքափում էր այն ամէնից, ինչ տարիներով կուտակուելի եւ թոյլ չէր տալիս, որ ինքը հայրենիքի հետ լինի մասն օրովէ մտածող (հազափական առումով)»: Եւ այսպէս, այդ բոլորը ի նպատակ Իսահակեանի եւ Սովետական Հայաստանի հանդէպ անոր որդեգրած դիրքին մեկնարանելով, կ'եզրակացնէ.

«Այսօրվան յետոյ, կարծում եմ, պարզ պէտք է լինի. թէ ինչն էր ստիտիպել Իսահակեանին վերագրուող հայրենիք, Սովետական Հայաստան: Այդ «ինչ»ը մի ամբողջ աշխարհ է, հայրենասիրական, բարոյական»:

Բայց այդ գոգարանած «ինչ» բռածը պարզապէ՛ս ոչինչ չէր է, որ ո՛չ հայրենասիրական խորք ունի, ոչ ալ բարոյական եւ հիմնովին առ ոչինչ կը զարմնէ Սովետական Հայաստանին հանդէպ Իսահակեանին սովետակա՛ն հայրենասիրութիւն ժը ճարելու ճիշդը:

Նախ՝ հայրենասիրական ինքնեկ մղումով մը ճամբայ շեշաւ Իսահակեան, Խորհրդային Հայաստան հաստատուելու մտածումը սկսաւ տեղ գրաւել մաքին մէջ բուլիսիկեան ստացած հրաւերներէն յետոյ, («բուլիսիկները ինձ կանչում են»), ու ճամբայ կ'աւ այդ հրաւերէն երեք-չորս տարի ետք, 1926ին:

Կը նշանակէ, որ ինքնարուիէն բխած արժանիքին պակասէն անդին, նոյնիսկ ստացած հրաւերին առիթով շարունակեց ցրտութիւններ ցուցարբերել, դիւրութեամբ շտաւաւ եղէպի Սովետական Հայաստան տանող ճշմարտութիւնը: Եւ տարիներ շարունակ զնամ-չզնամի երկրնորանք մը ապրեցաւ: Այդ տարիներուն, կ'ըսուի մեզի, Իսահակեան տխուհուհու պայքար մը մղեց ինքն իրեն դէմ, բեռնաթափելու համար սիրտը հայրենիքի հետ ըլլալու արդեւիչ անցեայէն, մինչդեռ իր՝ եմբակային ըսածներէն դատած՝ հաշիւներ կան միայն մէկտեղ եւ հայրենասիրական ճամբայի հասկացողութեան անյարբիր սակարկութիւններ: Հակառակը հաստատելու նդնող Վազգէն Մնացականեան որքան ալ պատէ պատ գարնուի, իրականութենէն բան չի փոխուի: Ապրելու տեղ մը, է՛լք մը կը փնտռէր Իսահակեան եւ երբ արտասահմանի մէջ պակասեցաւ իրեն այդ հնարատրութիւնը, այն ատեն միայն թայրերը ուղղեց դէպի հայրենիք:

Կրկնեմք. տուեալ պայմաններուն, վերաբերումներուն ու անցուղարձաններուն մէջ՝ Իսահակեանի հայրենասիրութիւնը վերջին ելքի խնդիր է աւելի, քան՝ հակառակորդական իրողութիւն: Պայմանական է էսպէս:

Ինք կը գրէ.

«Ուզում եմ մօտ ժամանակներու Փարիզ գնալ, փորձելու համար, թէ կարո՞ղ եմ այնտեղ հաստատուել, որովհետեւ ուրիշ յարմար վայր չկայ»:

Ուրեմն՝ կայ յարմար վայրի մը փնտրուողը, որուն կը հետեւի նաեւ իր եզրակացութիւնը:

«Եթէ Փարիզ չկարողացայ հաստատուել, ուրիշ տեղ չի մնում, եթէ ոչ՝ Քոլմեյ կիմս, ու երեխաւ ու գնաց Հայաստան»:

Ուրիշ նամակի մը մէջ.

«Գնում եմ միայնակ եւ կը վերադառնամ մի կարճ 6-8 ամսից յետոյ, եւ այն ժամանակ կ'որոշուի ինձ համար. քէ կալու գ եմ ընդմիջտ մնալ Հաստատում, քէ ոչ»:

Ընդմիջտ կրնայ մնալ Հայաստան երբ ի վիճակի ըլլայ Հաստատելու, թէ «Կարելի» է ամփոփուել այնտեղ, սուս ու հաց ունենալ, կարելի» է աշխատել ու աւարտել գրաւածքներս, ամէնից առաջ «Սոսոս Կարօ»:

Եւ այսպէս, հիմէ՛ «Գտայ, որ կարող եմ ինձ լաւ զգալ բարոյապէս եւ նիւթապէս, ապա նորից կը գամ Եւրոպա, ռանցած-չունցածս, եւ ընտանիքս հետս՝ նորից վերադառնալու հայրենիք»:

Եւ, վեցերորդ ու վերջին պատճառ՝

«Եթէ միջոցներից գրկուեմ, ստիպուած եմ հայրենիք վերադառնալ, որ չի ժպտում ինձ. քէեւ շատ կարօտցիլ եմ. միայն ի՛նչ պիտի անեմ այնտեղ, այն ընդհանուր խելագարութեան մէջ»:

Եթէ, եթէ, եթէ, եթէ ու եթէ:

Այսպէս կը ներկայանայ Իսա՛ակեանի շատ փառաբանուած Հայրենասիրութեան վերջին փուլը, եթէ՛նէրու վրայ հիմնուած թէ՛ական բան մը.

«Եթէ Փարիզ չկարողացայ հաստատուել»,

«Եթէ կարելի ըլլայ ամփոփուել այնտեղ, սուս ու հաց ունենալ»,

«Եթէ գտայ, որ կարող եմ ինձ լաւ զգալ բարոյապէս եւ նիւթապէս»,

«Եթէ միջոցներից գրկուեմ, ստիպուած եմ»...

Բայց այսպիսի պայմաններով մարդիկ կ'երթան իրենց անձանթ որեւէ երկիր, այս պայմաններով Հայրենիք չեն երթար, նման պայմաններով հայրենիք վերադարձած մարդոց Հայրենասիրութիւնը չի կրնար ազնուական խմորով կազմուած ըլլալ, Հայ մարդուն իմացումին մէջ տրիչ խորք ունի Հայրենասիրութիւնը, ամէնէն առաջ անզուսպ զոհարարութիւն է անիկա եւ ոչ թէ բնակարան, հաց ու հանգիստ պայմանադրող կենցաղը:

Եթէ արտասահմանի մէջ նման ապահովութիւններ տրուէին իրեն, ունենար գտնաւորական ռեսուրսներ», Իսա՛ակեան Հայրենիք չէր վերադառնար, ու տակաւ ենթադրութիւն չէ, մէջակէն է իր խոստովանութիւնը, «Եթէ միջոցներից գրկուեմ, ստիպուած եմ հայրենիք վերադառնալ»:

Այս է իր ճշմարտութիւնը:

Ուրիշ խօսքով՝ Հայրենասիրութիւնը իր վերջին կարտան է եւ ոչ թէ առաջին ու լափիւրջող կրակը: Հայրենասիրութեան այս ձեւն է, որ կը ճզնի իտէլականացնել Վազգէն Մուսղակեանն, հրաւերով սկսած, սակարկուած, անտեսական շարժառիթներով ընտրուած այս կենցաղաբար, մինչդեռ Հայրենասիրութիւնը ճշմարիտ կ'ըլլայ, հզօր ու օրինակելի ա՛յն ատեն միայն, երբ կը բռնկի բնականօրէն, ինչպէ՛ս զիտենք պատմութիւնէն եւ զոհարարութեան սանձակոտոր արամազրութիւններով գէպի Հայրենի կրակները վազող ընտիրներուն պարզած պատկերներէն:

Մնացականեանի այս պնդումները բնաւ պատուարեր չեն իր հերոսին, որ ընտր ճակատագրի ճանապարհէն հաստատուելէն երեք տարի հաջ, 1923ին, անոր ճակատագրական հետեւանքներէն յուսարեկ, կ'երազէր «մարդավարի» Հայրենիք մը:

«Ա՛խ, հայրենիք ունենայի՞նք մարդավարի, երբայի՞նք, մի քանի օր սուրբէ՛նք, մեռնէ՛նք մեր մանկութեան խաղ արած տեղերում»:

Մովեանական Հայաստանի գիմաց դուր է սովետական Հայրենասէր մը

փնտել Իսահակեանի մէջ: Սովետականները անոր հոգիին պղտորեցին նոյն-
իսկ անխառն Հայրենասիրութիւնը: Ազաջոյց՝ իր զնամ-չպնամները, ձգձը-
զումները, սակարկութիւնները, ընտրութիւն կատարելու ստիպողական ու
երկարատեւ տուայտանքը...

Առանց նկատի ունենալու առարկայական այս փաստերը եւ առարկա-
յական փաստերուն Հայթայթած տուեալներով ստույգելի ներքին աստիճանա-
շափերը, Վազգէն Մնացականեան կը գրէ.

«Իսահակեանի կռիւը՝ յամառ, տեւական ու ծանր, եզիլ է պատնէշի
այս կամ այն կողմում գտնուելու երկրնորանքը: Յազթեց այս կողմը, այ-
սիմքն՝ մեծ քաղաքացիս ու քանաստեղծը»:

Ասոնք ձրի եզրակացութիւններ են: «Սովետական գրականութիւն» ամ-
սալրի միտումնաւ ընթերցողին անտեղեկութիւնը շարաշահող Հերթական
կրակոցներ: «Այս կողմից մարդիկը երբեք չեն կրնար Իսահակեանի առի-
թով գրող մը մեծարած ըլլալու արժանիքով հպարտանալ, տեսնէ ինչ նր-
ւաստութիւններու ենթակեցին դինք, ոչ այ Իսահակեանի Հայրենիք վերա-
դարձած ըլլալու փաստը Իսահակեանի Հաշտին Հայրենասիրական եւ զարա-
փարական Հարցերու կապել, վերադարձի իր շարժառիթները նման բաներու
հետ ազերս շուենին:

Վազգէն Մնացականեան անդրադառնալէ ետք Իսահակեանի իբր թէ
ըստ ինքեան արժէք ներկայացնող վերադարձի վճիռին, կը քննէ նաեւ անոր
նախկին մտերիմներուն այդ առիթով ցուցաբերած վերաբերումը.

«Երբ այդ վճիռը դառնում է վերջնական, նաւասարգեանը եւ խումբը
գայրանում են եւ դիմում քանաստեղծին վարկարեկող միջոցներին: Սկսում է
բարոյական մի տեղոր, որին մեծ հայրենասէրը պատասխանում է կամային
արհամարհանքով»:

Նաւասարգեանին եւ խումբին թիւով այսքան նամակ գրած եւ այսքան
խոստովանութիւններ ըրած մարդուն, մարդկային է, որ նաւասարգեանն ու
խումբը յայտնէին կարգ մը մտածումներ, հաղորդէին համայնափար միջա-
վայրին, Իսահակեանն պիտի ըսէր իւր ընդհանուր խելագարութեան մէջ՝
կարճ շրջանի մը ապրած իրենց մեծ փորձառութիւնները: Ի պատասխան ա-
նոնց, 1924ին նաւասարգեանին գրուած նամակի մը մէջ, Իսահակեան կը
գրէ.

«Գրում ես, թէ գուցէ զգնալս փոշմանեմ: Ինչո՞ւ, ես հիացած չեմ,
որ փոշմանեմ. ես գնում եմ ժամանակաւոր մի տարով, մեծակ. ընտանիքս
վենետիկ քողեկով. գնում եմ տեսելու կարօտցածս երկիրը, ժողովուրդը,
մերոնց եւ հին ընկերներս. եւ յսմ փող ու գուռնան, ինչ որ սրտիս մտտիկ
են, եւ ոչ թէ գնում եմ սովետական կարգերով եիանամ»:

«Սովետական կարգերով» հիացած չըլլալու այս տրամադրութիւնը
ընթերցողին չէ յայտնուած նաւասարգեանի եւ խումբին մասին խմբագրուած
մեղադրանքներուն ատեն եւ չէ յայտնուած անշուշտ այն մաքով, որ դիւ-
րանայ զմեծ հայրենասէրը պատնէշին այս կողմը տեղաւորելու յօդուածագ-
րին աշխատանքը:

Պարզ է, որ նաւասարգեան իր մտաւախութիւնները յայտնած է Իսա-
հակեանին եւ նաեւ, աւելի ուշ, երբ վերջինը որոշած է իրազորեկ վերադառ-
նալու իր մտածումը, կը թուի, թէ նոյն միտքը յայտնող յօդուածով մը եւս
արտայայտուած է այդ մասին: Այդ ենթադրութիւնը կը թելադրեն Իսահակ-
եանի հետեւեալ տողերը.

«Հիմա, զարմանում եմ, որ դու վրդովում ես եւ զանազան հարցեր ես տալիս ինձ: Եւ գուր աղմուկ ես բարձրացնում իմ շուրթը, այս մտմեմտիս... և ում օգուտ եւ ի՞նչ նպատակ»:

Եւ նոյն նամակին մէջ նաւասարդեանի մտաւախութեան ի հակադրեցութիւն՝ իր բերկաթնին մասին.

«Այս էլ իմացիր, որ իմ մէջ դեռ շա՛տ երկաթ կայ, որ գնում եմ իմ ստաղադրած նպատակին եւ ոչ ոք չի կարող ծռել ինձ»:

Այսպէս բաներ զրեց Իսահակեան եւ սպա ճամբայ ելաւ: Ի՛նչ տեսաւ Հոն սակայն, տեսա՞ւ կարօտցած երկիրը, զժողովուրդը, մերոնց եւ Հին ընկերները, չե՞ց փող ու գուռնան, թէ պնդանուր խելագարութեան» սկանառեան հզաւ միայն, եւ փող ու գուռնայի կարոտալի հոռեւերուն փոխարէն սկանջալուր եզաւ ճանձրայի մարքսիստական ֆորմուլները:

Պատասխանը պարզ է. իրականացաւ նաւասարդեանի մտաւախութիւնը, Իսահակեան «փոշմանեց»: Երեքուկէս աստի Հոն մնալէ ետք վերագարձաւ ու ինք յայտարարեց իր փոշմանելը, «Նախէս տարի տանգուիւոյ յետոյ Բոյլտուարիւն ստացայ արտասանման գալու» զրեց նոյն նաւասարդեանին, եւ դժուարացաւ վերստին զգնալ եւ նորից ընկնել թմուրեան տակ, զազազուել, իրան ուտել, գալարուել իր վրայ եւ լռել»:

Ընդհանրապէս Իսահակեանի հայրենասիրութեան եւ վարպետութեան առասպելին մասին մեր կարծիքը կը բաժնուի ընդհանուրէն, բայց հարցը այդ չէ՛ հիմա, այլ ա՛յն, որ Խորհրդային Հայաստանով եւ անկէ եկած յաջորդական հրաւերներով անմիջապէս շխանդամտուելու անոր մատնած վիճակը, երկրնորանքները, պայմանական կեցուածքները, սակարկութիւնները պատճառ ունին դա՛րձեալ համայնախորութիւնը, կեցուածքը զայն ընդհանուր խելագարութեան մէջ՝ զործած խելագորներուն, որոնք, այն օրերուն մանսանդ, հայրենիքը դարձուցին հայրենիքի զաղափարական բովանդակութեան հետ շարժողուող սահմակեցուցիչ ճամբար մը: Այդ իրականութիւնը չէր կրնար ներշնչել Իսահակեանը, ու սխալ է, ու վիրաւորական է դնել զայն այդ իրականութեան դէմ յանդիման ու լռել, ու ընդզծել, որ «Խառնակեանը, ինչպէս շատերը նրանից առաջ ու յետոյ, ոչ թէ պարզապէս ընդունեց այդ նոր հակատաղիքը, այլ զինուորագրուեց զրան»:

Իսահակեան ո՛չ ընդունեց այդ «նոր ճակատագիրը», այսինքն՝ համայնախորութիւնը, ոչ ալ «զինուորագրուեց զրան»: Վերի փաստերուն զօրութեամբ՝ այդ երկու զաման իրականութիւններուն՝ արտասահմանի անսպասելիութեան եւ «հայրենիքի նոր ճակատագրին» ահարորութեան միջեւ ընտրութիւն մը կատարեց պարզապէս, ա՛յն համոզումով, որ անկախ «նոր ճակատագրէն» կայ յաւիտենական հայրենիքը, ուր կը կարծէր անուշազն գանեջ «եայրենի միջավայր, հարազատներ, հիմ ընկերներ, մանկութեամբ անուշ վայրեր (Թէն կէտը կորած, ու անբաժն)» ընտանի վարք ու բարք, երգեր, սովորոյթներ, այդքան»:

Իր ընտրութիւնը կատարած ատեն այսպէս կը մտածէր Իսահակեան, թէն «գիտէր, որ կայ հայրենիքին «նոր ճակատագիրը», այսինքն ա՛յն, որ «Լիւիս կողմից տեսնելի շատ բան կայ — աղքատութիւն, տիկտառաւրա, շղթայակապ մամուլ, ձանձրալի մարքսիստական ֆորմուլներ, վրդովեցուցիչ ռուս-քրեական մթնոլորտ, բարեկամութիւն»:

Այս էր ա՛յն օրերուն Հայաստանի «նոր ճակատագիրը», եւ Իսահակեան չէր կրնար գիտակցարար զինուորագրուել «զրան», զինք զրան զինուորագրեց տիկտառաւրան...»

Սակայն կրկնութեան մէջ չի յնանք: Դառնանք Իսահակեանին Հանդէպ
Նաւասարդեանին եւ խումբին կոտորած գորտոյական տեւորմին:

Անհարկուած շտեպարին մէջ կան միայն երկու գերակատարներ, Նա-
ւասարդեանը եւ թնայնք թերթը: Իսահակեանի թառերով՝ «Թնայնք» թեր-
թը, որ իրագրի է ամէն բանին, ծայն չի հանում, հինա դու ես ուզում խո-
չընդատ կանգնել ատարս: Ձայն Հանող մը եւ ձայն չՀանող մը: «Թնայնք»
միւս գէմերը ըսած են սակայն ուրիշ բան, որուն առջեւէն գարձեալ լուս
կ'անցնի Մնացականեան, որպէսզի, անշուշտ, կարենայ բարձրաձայն սարքել
գորտոյական տեւորմը:

Հայաստան վերադառնալու իր որոշումին կապակցութեամբ, Իսահակ-
եան Դարբինեանին գրուած նամակի մը մէջ կը գրէ.

«Ենթերցող հարցրի Փարիզ. մեր ընկերներին, թոյլարն էլ խորհուրդ տը-
ւիմ գնալու, եւ շատ ուրախացանք:

Իսահակեանի գրչին տակ «մեր ընկերները» աւելի որոշ կը դառնան՝
այս անգամ Նաւասարդեանին գրուած նամակին մէջ.

«Փարիզ մնացի ամիս ու կէս. ամէն օր, զրեքէ, մեր ընկերների հետ
էի: Ամէնքն էլ՝ Ս. Վրացեան, Թուրէմ, Ջսմալեան, Ե. Նաթալի, Վ. Փա-
փազեան, Բժ. Տէր Դաւթեան, հատիսեան... ամէնքն էլ ամկեղծ, ընկերա-
կան խորհուրդ տալին վերադառնալու, կապուելու երկրի եւ ժողովրդի հետ:
Ըն նախանձեցիմ, որ կարող եմ գնալ, երանի տուիմ, եւ խրախուսեցիմ:

1925ին, Վահան Նաւասարդեան ընդամենը նորայայտ Հրապարակագիր
մըն էր, Դաշնակցական «Թնայնք» մէջ ներկայացուցչական տիպար մը չէր:
Այդ օրերուն, ներկայացուցչական տիպարները յեղափոխական, կուսակցա-
կան, քաղաքական ծաւալուն մաստակի տէր Իսահակեանի յիշատակած Թու-
րէններն էին, Վրացեաններն ու միւսները:

Արդ՝ երբ Հայաստան վերադարձող Իսահակեանի պատմութեան մէջ
կը յիշուի Նաւասարդեանի «տեւորմը» եւ կ'անտեսուի Հակաեանին վերադար-
ձի «անկեղծ», ընկերական խորհուրդը», ուրիշ բան չի մնար թեղի, եթէ ոչ
դարձեալ հղբակացիւն, որ իրողութիւններու ամբողջութիւնը նկատի առնող
եւ ապա միայն վճիռ արձակող արդար մարդու մը գիմաց չենք գտնուէր:

Մնաց որ, Իսահակեանէն աւելի ո՛չ ոք Իսահակեանին գէժ չէ եղած
Հայրենիք վերադառնալու Հարցին մէջ: Ամբողջ երեք-չորս տարի պնամ-չպը-
նամ Հոյովեց, չգնամը գերակշռեց մտքին մէջ ու մնաց. «Էմն համար ճանա-
պարհը միշտ քաց է: Ամէն տարի պաշտօնապէս դիմում անում եմ: Ըս քաշ
եմ տալիս միշտ»:

«Ի՞նչու անում եմ: Ըս քաշ եմ տալիս»: Դիմում անո՞ւմ եմ...»

Այսպէս քաշ տուաւ միշտ, ամբողջ երեք-չորս տարի, ու չգնաց, մը-
նաց: Ուրիշ խօսքով՝ եթէ Նաւասարդեան մէջ անգամ գորտոյական տեւորմի
ձեռնարկեց Իսահակեանի գէժ, Իսահակեան Հարբերէ աւելի անգամներ ու
աարիներ շարունակ նոյն տեւորը գործագրեց Հայրենասիրական իր սեփա-
կան զգացումին գէժ: Ըսել կ'ուզենք՝ քննելին Նաւասարդեանի Հրապարա-
կագրական յարձակումը չէ այնքան, որքան Հայրենիք վերադառնալու Հա-
մար թոյլ տուած Իսահակեանի ձգձգումներէն պարզուող Հայրենասիրական
որակը, որուն քանի մը թոռուցիկ տղերով անդրադարձանք քիչ առաջ:

Փարիզ բնակութիւն հաստատած վերոյիշեալ գէժերը այն օրերուն կը
ներկայացնէին Դաշնակցութեան վերին մարմինը. եւ Իսահակեանի վերադար-
ձը քաշալներով անոնց վերաբերումը գրեթէ պաշտօնական կեցութեան մը ար-

ժէքը ունի, ունեցած է նաև Իսահակեանի համար: Իսահակեանի մեկնումէն վեց ամիս առաջ տեղի ունեցած է այդ հանդիպումը եւ, ինչպէս կը գրացուի, եղած է խիստ ընկերական. «Փարիզ մնացի ամիս եւ կէս. ամէն օր, գրեթէ մեր ընկերները հետ էի»: Դաշնակցական իր բնկերներուն հետ մինչև վերջ պահեց Իսահակեան իր կապերը, մինչև 6 Սեպտեմբեր 1926 («Օգոստոս 20ին կը մեկնեմ Հայաստան»):

Այս իրականութիւնները արդեւ չեն սակայն, որ անիրական բաներ խմբադրելու վաղիցն Մնացականեանի հոանդը նուազի քիչ մը ու չհասնի անցեալին հետ ունէն կոպ ու կամուրջ աչրած ու խորտակած Իսահակեան մը ներկայացնելու անհեթեթութեան: Իսահակեանի պատկերացումներուն մէջ մենք տեսնք թէ՛ Իսահակեանը եւ թէ՛ իր բազմանշնորան ու որոշումներուն նկատմամբ Դաշնակցական ղեկներուն բարեացակամ կեցուածքը:

Ու նամակները նորէն ու զանոնք հրատարակութեան տուած մարդոց մղումները յուսարանող Մնացականեանի մեկնարանութիւնները դարձեալ.

«Նաև Իսահակեանի կենդանութեան օրօք նրոնք կարող էին նամակներ հրատարակել: Բայց նպատակը դա չէր. այլ իրենց մեկնարանութիւնները, եմբարութիւնները, կասկած-համոզումները, նենգութիւններն ու կեղծիքները, որոնք ամբողջական թնաւորութեան յատկութիւններ են, բնարարութիւն, որ Իսահակեանի ծանօթ էր շատ վաղուց եւ գիտէր. թէ ինչի էր ընդունակ:

«Ուրեմն այդ նամակները հրատարակել եւ Իսահակեանի մահից յետոյ (այն էլ անմիջապէս) ոչ թէ նրան «չվնասելու» մղումով, այլ մերկացման վախից, մէկ էլ այն անգիշում ռազմատարութիւնից, որով օժտուած էր մեծ բանաստեղծի իօսքը: Ու եթէ այս ամբողջ պատմութեան մէջ իսկ մի սյան, որ կարելի է տեսլ ափսոս, այն էլ մի էակն անգամ, այդա դա Իսահակեանի չլինելու իրադարձութիւնն է:

Այս երկրորդ պարբերութիւնը երկրորդ անգամ ուշադրութեան կը յանձնենք՝ ըսելու համար, որ Դաշնակցութեան ձեռնարկածն փոխելու պատճառով Իսահակեանին մողական ուժեր հայթայթելու, կամ՝ Իսահակեանի անունով Դաշնակցութիւնը հարուածելու փորձը Մնացականեանի առաջին փորձը չէ: Իր «Փամաւակի հետ» տեսնել կրող հասարակ մէջ՝ ան զետեղած է 1906ին գրուած «Երրորդային հումանիզմի մասին» խորագրեալ յօդուած մը, ուր, ի՛ր խոստովանութեամբ, քննարկած կ'է Իսահակեանին նուիրուած բաժնիք, վերի անձամբարանները յիշեցնող վարի եղբայրացութեան հաշույն.

«Մեքն անհրաժեշտ համարեցինք մի քիչ անկիւն խօսել Աւետիք Իսահակեանի հումանիզմի քարոզ նակատագրի մասին, որովհետեւ հինգ դէպի նաբը, մարտութիւնից զէպի ճշմարտութիւնը կատարած նրա վնասկան քայլը այնպիսի ուժեղ հարուած հասցրել է դաշնակցական գաղափարախօսութեանը, որ նրա մեռելու ղգինները մինչև այսօր էլ փորձել են կատարում իրենց կենդանութիւնը հաստատել անմահութեան ղէմ արձակուած կրկններով»:

1906ին դարձի եկած Իսահակեանի Դաշնակցութեան տուած ուժեղ հարուածը եթէ իրապէս այդքան ուժեղ եղած ըլլար, Մնացականեան անուշտ 1906ին պէտք չէր պար Դաշնակցութեան ղեկ այսքան զգազելու, իսկ եթէ 1906ին ճշմարտութեան համապատասխանող համոզումով մը հանած ըլլար իր եղբայրացութիւնը, առաջ տարի ետք անհրաժեշտ պիտի չզգար ընթերցողին առջեւ կրկին փոխելու կուտակական, իր բարձունքներուն, բարձրամեայ պիտակները:

Միեւնոյն յօդուածին մէջ կը պարզուի, որ Իսահակեանի հումանիզմը առողջ հոգեբու վրայ չէ փթթած եւ Իսահակեանի հարուածած «մտորութիւնից դէպի ճշմարտութիւնը կատարած նրա վճռական քայլը», իր կարգին, կանգիպած է բուական մեծ խոչընդոտներու :

«Կուսակցութեան 22րդ համագումարի որոշումների, նոր ծրագրի բարոյական սկզբունքների լոյսի տակ, — կ'ստէ Մնացականեան, — երբ բնութեան եմք առնու՛մ սովետական պոետիայի անցած ուղին, յատկապէս մինչեւ 1954 թուականը, տեսնու՛մ եմք, որ անհատի պաշտամու՛նքը զգալի վնասներ է ետացրել նաեւ խորհրդային հումանիզմին» :

Միայն պոետիայի՞ն :

Միայն հումանիզմի՞ն :

Քիչ առաջ սովետականո՛վ պայմանաւորուած Իսահակեանի հումանիզմը դովարանող եւ հիմա սովետական հումանիզմին կրած զդարձ վնասները թուող Մնացականեանի մտքի կարծութեան շփոսե՞ց անհատի պաշտամու՛նքը...

Իր մոլորութիւններէն հրաժարող Իսահակեանի հայրենազարձը նշող 1936 թուականին եւ 1954ին միջեւ ինկող ժամանակահատուածը ստալինականութեան բռն սկիզբին եւ խելագարութեան ժամանակաշրջանը եղաւ եւ Իսահակեան հայրենիքի մէջ ապրած իր քսանմէկ տարիներուն ուղիղ տասնութը (1936-1954) ապրեցու մին: Եւ անգամ Վազգէն Մնացականեանի կողմէ «հակամարդկային» որակուած անձի պաշտամունքի այդ շրջանին :

Մնացականեանի յիշեալ դիրքին մէջ՝ «հակամարդկային» են եզրայի՛ր վնասներդուծի կարգին կան նաեւ Իսահակեանի հոն ապրած տարիներուն բնութագրի՛րը բացայայտող «հակասպատուած» բաներ եւ «պայթուցիկ» ուրիշ նիւթեր, կա՛ն :

«Եթէ ուզու՛մ եմք յստակ պատկերացում կազմել այսօրուան հոգեւոր ու մտաւոր կեանքի վեհութեան մասին, վերլոյնեմք, թէ երէկ մեր ժողովրդի փառաւոր, նաեւ ողբերգական պատմութեան ինչպիսի էջեր էին ակնապարտուած նացիոնալիզմի, ազգային սեպարատիստեան եւ էլի ուրիշ «պայթուցիկ» միութիւն: Այդ ամէնի վնասագործումը մեծ զանգեր է խլել մեր կումունիստական կուսակցութիւնից, ժողովրդից ու նրա տաղանդաւոր մտաւորականութիւնից» :

Նոյն հասարկի մէջ տեղաւորուած ուրիշ դրութեան մը մէջ, եւ ուրիշ բանաստեղծի մը առիթով, միեւնոյն բանութեան «հակամարդկային» հետեւանքներուն մասին դարձեալ :

«Ինչո՞ւ վերջին տարիներին այդքան անբաժան եմ դարձել բանաստեղծի ու սիրտը: Առաջներում չկա՞ր, ինչ է, այդ մտերմութիւնը: Կար, ի հարկէ, քայց ոչ այդքան ուժեղ: Դա այն տարիներն էին, երբ կարգին կառայել չէր լինում, եւ անգամ մտքի մէջ խօսելն էր դարձել անհնարին» :

Վազգէն Մնացականեանի կատարած այս արտահայտչաւորները նոյն բանի անխառն կը դարձնեն Իսահակեանը բուլղարիկեան գրախառուոր միասնութիւններու հետ ներդաշնակելու իր բանդագուշանքը, ինչպէս նաեւ հայրենիքի մէջ անոր սակզծագործական եռանդ, ողբերութիւն, ներշնչու՛մ վերագրելու իր հզնութիւնները: «Դա այն տարիներն էին, երբ կարգին», եւ այլն: Իսահակեան իր կեանքին վերջին քսան տարիները ապրեցաւ այդ տարիներուն, երբ «հակասպատուած» էր ամէն ինչ, ամէն ինչի հետ նաեւ իր անցեալն ու հոգին եւ «պայթուցիկ» նիւթերով այնքան յազեցած էր ահաբեկչական

մթնոլորտ, որ կարգիմ հռոտչի չէր լինում, եւ անգամ մտի մէջ խօսելի էր դարձել անհնարին» :

Ամէնուն պէս, խորհրդային հանուր-ընդհանուր ընակչութեան պէս՝ Խոսակեան միշտ «տկանապատուած» մնաց հայրենիքի մէջ, ու հետո շմաց պայթուցիկներէն, ու զերծ շմաց «հակամարդկային» հուժկու հարուածներէն, եւ հակամարդկայինէն քնաւ չի տարբերի այն ողին, որ Մնացականներու յողուածներուն մէջ կ'անտեսէ սողում-գոմորեան այլ կացութեան մէջ ակամայ ինկած մարդու մը ողբերգութիւնը եւ հայրենիք վերուարձած ըլլալու շոր փոստը կը շահագործէ անոր յետուն տարիներու անցեալին դէմ :

Մենք վտանգ ենք, որ եթէ «հակամարդկային» ապստոյլ կլիմաներուն մէջ կազմուած շրջտը վազդէն Մնացականեանի անձը՝ դիւրութեամբ պիտի կարենար դադար, որ «հակամարդկային» զուգարհպած Խոսակեանի հայրենադարձութիւնը ձեռնտու նիւթ մը չէ համայնավարութեան համար եւ Դանակցութիւնը դատափետելու իր անմիա յանձնառութիւնը կատարած ստեն՝ պիտի զգուշանար իր շարչարուած հերոսին յիշատակը մակերեսայնութեամբ շարչարուող հոանդուն մակերեսայնութիւններ ցուցադրելու մոլեգնութիւնէն . . .

Վերադառնանք սակայն Մնացականեանի եղբերակին . . . ափսո՞ս . . .

«Ափսոս . . . Բայց ոչ երանի նրանց, որ հետու հեռուար ինչ-որ անկիւնում ծուարած սպառնում են հայ ժողովրդի նոր պատմութեանը» :

Իսահակեանին՝ ափսոս, մեզի՝ վայ, բայց անպայման երանի երանելի այս մտքերը խորագրող երանելի Մնացականեանին, որ մտաւնչող իր անհեթեթութեան ատընթեր դուշակութիւններով ալ կը գրադի՝ անվրէպ գուշակելով մտադրութիւնը անոնց, որոնք «հեռուար ինչ-որ անկիւնում ծուարած սպառնում են հայ ժողովրդի նոր պատմութեանը» :

Ապանուծ են որո՞նք, «Հանգուցեալ պարոն»-ներ, որոնց դէմ կը մոլեղնէր Վազդէն Մնացականեան, թէ անոնց գործը շարունակող յեանորդները :

Կը թուէր, թէ Խոսակեանէն նամակներ օտոցած եւ զանոնք հրատարակութեան տուած Նաւասարդեանին, Դարբինեանին, Վարդգէս Ահարոնեանին, տասնութ, վեց եւ հինգ տարի առաջ մեռած այս մարդոց հասցէին կ'ուղղէր Մնացականեան իր վայրոյթը, զրպարտութիւններն ու հայհոյանքները, մինչդեռ կը հասկցուի, որ հողին տակ հանցողներուն չէ հասցէագրած իր խօսքը, այլ հողին վրայ «ծուարած»ներուն :

«Մուարած»ներուն, ի հարկէ :

Հայաստանի մամուլին ու զրականութեան հետեւող այսօրուան ընթերցողները պէ՛տք է նկատած ըլլան, որ Դանակցութեան դէմ նոր պայքար մը չգլխալարեցողութեան է մեր հայրենիքին մէջ եւ գրեթէ ամէն մարդ՝ հրատարակագիրներ, վիպագիրներ ու քննադատներ ամենայն աշխուժութեամբ կը կատարեն իրենց բաշխուած պաշտօնները :

Ա՛յդ է :

Այդ հանգամանքով կը բացատրուի նաեւ տասնըջորս տարի առաջ հրատարակուած, խօսուած ու գրեթէ մոռցուած Խոսակեանի նամակները նոր միայն քննութեան նիւթ դարձնելու Վազդէն Մնացականեանի պարագան :

Պաշտօն կատարելու մոլեռանդ փութկոտութեամբ, կամ՝ հարկադիր առաջարկներուն խոնարհարար ընդառաջելու ծառայամտութեամբ :

Երկուքին ալ ընդունակ է ան :

Առաջինը գործադրելու տան, կ'ըսեն, ա՛յնքան առաջ գացած է եր-

բեմն, որ մինչև անգամ պատճառ դարձած է ազնիւ մարդոց (Վ. Թերզիպաշեան) աջութիւն, իսկ երկրորդը կը կատարէ միշտ այս ձեւով, փաստերը շարժանցելով, զեղշելով, հաշտին չեկածը երեսակայութեամբ դարձանելով եւ անմտբար լեզուի մը վատահելու նախնական մասնութեամբ :

Իր պաշտօնները այսպէս կատարած է ան միշտ, միշտ աննախնակի կացութիւններու մասնելով ինքզինքը : Այս անգամ աւելի քան երբեւիցէ, որովհետեւ Իսահակեանին երկու անձերը նոյնացնելու եւ «նոյնացածին» ու բոլորեակին միջև զուգահեռական մը քաշելու իր վերջին պաշտօնը ստէնէն սպերտիստն էր ցայտօր կատարած իր յանձնառութիւններուն մէջ :

Այդ պատճառով է, որ նամակներուն առջև պաշարիւնը պահելու բրտնադրօտիկ ճիշդութեւ կը դիմէ եւ ընթերցողին ուշադրութիւնը ցրուելու մտքով իր բէ կը քաղաղերծէ զանոնք հրատարակութեան առումը մարդոց բուն նըպատակը, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ «իրենց մեկնարանութիւնները», եւսայն :

Ի՞նչ մեկնարանութիւններ, ի՞նչ բան : Իսահակեանի նամակները մեկնարանութեան կարիք աւելին միթէ, որ նպատակ զանաւային անոնց մեկնարանութիւնները :

Իր առաջադրանքին ազդելը այդ չէ սակայն, այլ նոյնինքն Իսահակեանի նամակներն են, անոնց դոյութիւնը, դոյութեան փաստը :

Անոնց շարժութեան համար ով գիտէ ի՞նչ դին պիտի վճարէին Մնացականեանները, որպէսզի աւելի գիւրին ըլլար «Ուստա Կարօ»ներէն, «Էպոս»ներէն, համբարան մարդկանց հանդէպ ունեցած սպրտմեներէն իրենց դատարկած Իսահակեանին հոգին լեցնել անոր արհամարհած կոմսոմոններով, «գազանական շարժումներով», «ոչինչ ազերբով» ու հանել զայն իր անցեալին դէմ, ի խնդիր «միջազգային իլլիւզիաներու», «համաշխարհային յեղափոխութեան բլրփին», յանուն այդ ցնորքներուն հայրենի երկրին մէջ եւ երկրին միւս նուիրական եղերքներուն անունով կատարուած պղծութիւններուն սրբապարծման... :

Իսահակեանի նամակները կը զրկէ համայնափարները Իսահակեանը այդ նպատակներուն համար շահագործելու հնարաւորութենէն, եւ արդէն այդ է իրենց կատարութեան պատճառը :

Գ. Ս.

ՅԱԶՈՐՊՈՎ

Ա. Իսահակեանի «Ուստա Կարօ» վէպին, «Սամայ Միեր» պոեմին, հոմերական «Էպոս»ին, «Հայաստանին» բանաստեղծութեան և կցորդ խնդիրներու մասին :

ՊԵՏՐՈՍ ԱՎԱԶԱՅՏՈՅԵԱՆ

ԲԱՐՍԵՂ
ԿԱՆԱԶԵԱՆ

(1885 — 1967)



Երբ 1967ի Մայիսին Բարսեղ Կանաչեան շրջեցաւ ստուտպալից բայց ստեղծագործ կեանքէ մը ետք, ճարտիչ յետոյ ժողովրդականութեան ամենարարձր գաղափրները, ըլլալէ յետոյ Կոմիտասի ամենատաղանդաւոր սանը, ան իր ետին կը ձգէր կրկնակ բաց մը.— առաջին բացը, որ կարելի է ընդունիլ ժամանակաւոր — հակառակ անոր, որ այդ ժամանակը կ'երկարի ու անվերջանալի կը դառնայ — այդ առաջին բացը ուրեմն, «Փոստան» երգչախումբի քայքայման պատճառով զոյացած բացն է, քայքայում մը, որ սկսած էր Հեղինակին ժառնէն իսկ առաջ. երկրորդը, զոր կարելի չէ շանուանել անդարձմանելի, զոյացաւ ստեղծագործ Կանաչեանի անհետացումին եւ անդարձ մեկնումին պատճառաւ: Արգարեւ, Կանաչեան չունեցաւ ո՛չ իր սանը՝ իրբեւ խմբավար-ղեկավար (պատճառները բազմաթիւ են եւ դանազան), ոչ ալ իր յաջորդը՝ իրբեւ ստեղծագործ-երգչական: Այս զոյգ բացերը արդարացուցին մեր փեղարուեստական կեանքը հայկական սոսիալ-գոյսամակայն, քնիկ-ժողովրդական երգչային արուեստէն եւ անոր տարեկան երգչանդէսներէն մեզ գրկեցին: Ու այսօր, լիբանանահայութիւնը կը գուարճանայ սնամէջ ու խաբուսիկ Հագրատային «Փարուն գարուններով, հպարտանալով նոյնիսկ անոնցմով, անձնատուր՝ իր ինքնազոճ մոլորումին, կոյր ու անպիտակից, մինչ այդ քաղաքէներէն ծնած «Փարունները կը խնդան մեր արդէն իսկ սլանախանձիկի առօրեան եւ կ'նղծն հայուն ճաշակն ու խրսխուրթիւնը, ու կ'այլախոյանկեն մեր երբեմնի խորունկ քնքշութիւնը:

Կանաչեան բազմավաստակ երաժիշտ մը եղած է — ուսուցիչ եւ երաժշտական դաստիարակ, խմբավար ու Հեղինակ: Մակայն իրեն անժառութեան պատուանդան շնորհողը կը հանդիսանայ իր ստեղծագործական վաստակը:

Կարելի է շատ հակիրճ կերպով անցնել անոր առաջին յորինումներուն վրայէն. անոնք եղած են ո՛չ Հայրենաշունչ եւ ոչ ալ երգչախմբային կամ մայրախին, այլ անմիջական-պարագայական կտորներ՝ ակամայ իտալական ոճով: Փանֆարի համար գրուած: 1908ի Օսմանեան Սաւճանադրութենէն ետք, 23ամեայ երիտասարդ Կանաչեան Պոլիս կը հասնի եւ կը կազմէ Պոսոյ քառյակն նուագախումբը՝ «Բնար»: Պոսոյ մէջ է նաեւ, որ ան կը ստանայ

երաժշտական իր առաջին հայաչունջ գաստիարկությունը, դառնալով սան մեծն Կոմիտասի: Ան Կոմիտասի հետ կր պարապի երեք տարի, ջանալով սերտ սորեն մտերմանալ — հայկական մոթիֆներու խմբերգային թագմածայնութեան արուեստին: Այս շփումէն ետք — զոր կարելի է անուանել երկու արգամանդներու շփումը — բուրբորին կը կերպարանափոխուի Կանաչեանի արուեստը, խորապէս հայանալով ու տնտատականանալով:

Պէտք չէ կարծել սակայն, որ Կանաչեանի գլուխ-գործոցներու ջրփոթումը սկսած է Կոմիտասի հետ իր երեք տարուան ուսանողութեան շրջանէն անմիջապէս ետք: Կանաչեան ազգային երաժշտութենէն ներս կը մտնէ՝ Պուրոյ մէջ վաղուց ի վեր երգուած ազգային-հայրենակարօտ երգերը եւ քայլերդները դաշնաւորելով: Այսպէս, ան կը հետեւէր իրմէ կէտ զար առաջ գործող Կարա-Մուրզայի օրինակին: Կոմիտասի եւ Կարա-Մուրզայի նման Կանաչեանն ալ այն հաւատքը կը դոյսցնէ, որ հայ զեղջուկ-գիւղական ու սոհ-միկ-աւանդական երաժշտութիւնը պէտք է մնայ երգային, ձայնային, առանց երաժշտական գործիքներու միջամտութեան, որովհետեւ, կը յայտարարէ Կանաչեան,

«Հայ երաժշտութեան մէջ զգացում եւ միտք մարդկային ձայնով միայն կրնան տրուիլ. երազակամ առումով գործիքները կը խափանեն հայկական մեկնարանութեան հարազատութիւնը»:

Ոտքը անշուշտ չի վերաբերիր մեր աշուղական նուազակցութեան եւ պարբերային ժողովրդական խմբանուագներուն, որոնց բնականաբար կ'ընկերանան հայկական ժողովրդական գործիքները: Անարկությունը ուղղուած է միայն մեր սոհ-միկ եւ աւանդական մեղեդիներուն:

Մարդկային ձայնը եւ այդ ձայներով կերտուած հարազատ ամբողջութիւններ. — 1922էն սկսեալ մինչեւ իր մահը՝ ահա այն մեկնակէտը, որմէ Կանաչեան երբեք չհեռացաւ, վերջնականապէս որդեգրելով — իր ստեղծագործութիւններուն իրրեւ առանցք — երգային ու ձայնային կերպարը:

- 1) Մեներգը, զաշնակի ընկերակցութեամբ, եւ
- 2) Երկսեւ երգչախումբը, ա քարէլլա, այրինքն՝ զուտ ձայնային-երգչախումբային, առանց երաժշտական գործիքներու միջամտութեան:

Ինչպէս բոլոր արուեստագէտներուն, այնպէս ալ Կանաչեանի կեանքին մէջ կան անկրեւադարձ-թուականներ, որոնք իրական հանդրուանները կը կազմեն հեղինակի ստեղծագործական կեանքին: 1947ը կը հանդիսանայ այդ թուականներէն մէկը:

Արդարեւ, մինչեւ 1947, հակառակ իր 40 տարիներու անխոնջ աշխատանքին եւ 25 տարիներու վրայ երկարաձգուող իր գլուխ-գործոցներու գոյութեան, մենք չունինք Կանաչեանէն ապուած, հրատարակուած եւ վերջնական մե ստացած ստեղծագործութիւններու հատոր: Այսինքն՝ մինչեւ 1947 թուականը Կանաչեանի հեղինակութիւնները ձեռագիր միտնակի մէջ կը գտնուին՝ զանազան տեսակներու մէջ ամփոփուած: Այսուամենայնիւ գոյութիւն ունին 1919-20ին Պուրոյ մէջ լոյս տեսած «Հայ գաւառն» անունը կրող երեք պրոկները. անոնք հրատարակուեցան Կոմիտասի սաներու հիմնադրամով՝ Հայկ Սեմերճեանի գլխաւորութեամբ: Հոն մէկտեղուած են առաւելաբար դաշնաւորումներ (harmonisation) հայրենակարօտ եւ ազգային սիրուած երգերու, ինչպիսիքներէն են «Մեր հայրենիք»ը, «Լուսին չկար»ը, «Անա ելալ լուսին արծաթ»ը, «Բամբ որտան»ը: Այս զաշնաւորումները կատարուած են Կոմիտասի սաներուն կողմէ, ինչպէս Վարդան Մարդիսեան, Սրուանձտեանց,

Կանաչեան : Բացառաբար, սակայն, հոն կը հանդիպինք զուտ ստեղծագործութիւններու, որոնք կը կրեն Կանաչեանի ստորագրութիւնը. երկու մեղեդիներ («Օրօք» եւ «Մով աչեր») ու մէկ երդչախմբային կտոր («Յառաջ Աստուծակ») կամաւորական քայլերդր) : Այս երկու մեներդները հետագային պիտի կրէին մասնակի կամ ամբողջական փոփոխութիւններ հեղինակին կողմէ . այսպէս, «Օրօք»ը քառամասնի վերածուեցաւ 1926ին եւ «Մով աչեր»ը իր նախնական շարահարաւթենէն փոխակերպուեցաւ Հարութա եւ առինքնող կտորի մը, 1937ին :

Ուրեմն, մինչեւ 1920ական թուականները Կանաչեանի ստեղծագործական գործունէութիւնը համեմատաբար երկրորդական դժի վրայ կու գայ : Այս շրջանին ան իր գլխաւոր գրադումը ըրած է հայ երգի սատարման ծառայելը՝ սարքելով նուազահասակներ եւ երդչախմբահասակներ . այս հանդիսութիւններուն ընթացքին անոր հոգին կը թրթոր վերածնած հայութեան մը հեռանկարով եւ վերակերտուած Հայաստանի մը մտապատկերով : Զարմանալի չէ տրեմն, որ նախ եւ առաջ հայ արուեստագէտին ուշադրութեան անմիջական առարկան ըլլային ողջ հայութեան խանդավառութեան եւ վերազարթիւնութիւնի գինդութեան արդիւնքը եղող ազգային-հայրենաբաղձ երգերը, որոնց խմբերգային դաշնաւորումով Կանաչեան եւ իր ընկերները կ'ընծայէին հայ երիտասարդներուն միասին երգելու եւ երգով՝ միասին ըլլալու, միասին զգալու, մտքի մարդ ըլլալու երազը : Չուտ անհատական ստեղծագործութեան Կանաչեան կը սկսի 1922ին, նոյն այդ թուականին տալով իր անմահ «Դալիս»ն : Այնուհետեւ կէտ դար շարունակ Կանաչեան պիտի հանդիսանար Սփիւռքի ամենասիրելի արուեստագէտը՝ ճամբորտ հայ երգով եւ երգեցողութեամբ սփոփելով հայութեան վերաւոր տիրաւը :

Անդադառնանք այժմ 1937 թուականին կարեւորութեան :

1936ին, Պէյրութի մէջ կը տօնուի վարպետին երաժշտական գործունէութեան 40ամեայ յորելնանը . ահա այս առիթով է, որ կը կազմուի Կանաչեանի Յորելնական Կեդրոնական Յանձնախումբը, այն՝ որ մէկ տարի ետք, 1937ին, պիտի ձեռնարկէր մինչ այդ «Գուսան» երդչախումբի համար գրուած եւ Կիպրոսի մէջ յորինուած Կանաչեանի գործերուն ամբողջական հրատարակութիւնը՝ մեներգները եւ մանկական երգերը ներառեալ, այսօրին՝ 25 տարուան վրայ երկարած դուրսը երկը — 1922ի «Դալիս»էն մինչեւ 1937ի «Շուշոյն» : Կանաչեանի գործերուն ամբողջական հրատարակութիւնը — ահա հիմնական աշխատանքը, որուն իրրեւ արդիւնք Կանաչեան պիտի ընկալուէր իրրեւ հեղինակ. այս երկի հրատարակութեամբ Կանաչեանի հեղինակութիւնները կը դառնային վերջնական սեփականութիւնը գալիք երգչախումբերուն եւ երաժիշտներուն, «Գուսան»էն եւ ժամանակաւոր երգչախումբերէն քակցութիւններէն անդին . միայն այս ձեռով Կանաչեանի գլուխ-գործոցները կըցան դուրս զալ իրենց նեղ, շրջանային-տեղական ծիրէն եւ դարձան համայն հայութեան, Հայաստանը ներառեալ, ուրախութեան աղբիւրը, միանգամայն ազատուելով ընդմիշտ կորուստի մատնուելու վտանգէն : Որովհետեւ Կանաչեանի թանկարժէք գործը իր ձեռագիր վիճակին մէջ՝ պիտի ունենար միայն համայնքային արժէք, իսկ աւելի ուշ՝ հնագիտական արժէք՝ ապագայ երաժիշտներուն համար, անոնց սփոռումը ըլլալով անկարելի կամ շատ դժուար ձեռագիր վիճակի մէջ : Հրատարակուելէ ետք միայն անոնք յայտնաբերուեցան իրրեւ անկորելի հայկական գուսանական երաժշտութեան գոհարներ՝ «Գուսան»ի տարեկան հանդէսներէն անդին՝ ուսումնասիրող եւ երգարուեստի քննութեան եւ կատարման գործերով պրադոլ երաժիշտներու եւ երաժշտա-

զգտներու համար: 1947ին՝ Կանաչահանի Յորթլինական Կեդրոնական Յանձնախումբի կատարած այս Հրատարակչական գործը կարելի է նկատել տմեկանակարճութեամբ գործերէն մէկը Միջին Արեւելքի մեր իրականութեան, մշակութային կեանքին մէջ:

Այսուհանդերձ, վերոյիշեալ Հրատարակութիւնները չեն ընդգրկեր Կանաչահանի մինչեւ 1947 թուականը գոյութիւն ունեցող բոլոր ձեռագիրները:

Պէտք է նշել նաեւ մեներգներուն ընդհանուր քննութեան անցնելէ առաջ, հորիկ է հակիրճ հերպով ներկայացնել Կանաչահանէն երկու տարբեր ձեռագիրներ, որոնք այժմ կը գտնուին Երևանի Պետական Քննադատարար եւ որոնք տակաւին չեն հրատարակուած: Անոնցմէ առաջինը Կանաչահանի կրօնական բնօրինակ կրող միակ գործն է, տեսակ մը եկեղեցական հագներգութիւն (rhapsodie), հայկական պատարագի իր մէկ նոր տարադրն տակ՝ երգէհոնի ընկերակցութեամբ: Այս գործը, որ միայն մէկ ունկնդրութեան արժանացած է հանրութեան կողմէ, 1943ին, Պէտք է մէջ, կը բաղկանայ, ընդհանուր առմամբ, երեք մասերէ. ան աւելի անհատական դասաւորումի եւ դանաւորումի գործ մըն է, քան ինքնայատուկ ստեղծագործութիւն մը. Կանաչահան կատարած է համարում մը, առնելով Կոմիտասեան եւ Եկմայեան պատարագներէն ամբողջութիւն ներկայացնող հատուածներ, ինչպէս նաեւ քանի մը շարականներ՝ այս բոլորէն կազմելով Յիսուսի ծնունդէն մինչեւ յարութիւնը ներկայող օրինակներէն մը: Բազմաձայնուած են բոլոր միաձայն երգերը եւ ընդհանուր կշռութեամբ երգերը ալ կատարուած են հոն, օրինակ, ընդհանուր գործին նախըզանք ծառայող «Օրինեցէ՛ գովեցէ՛ք»ը զուտ Կանաչահանի գրչէն ելած կտոր մըն է: Այս պարագային մեղեդին Կանաչահանի գրչին տակ շարքապահանգած է, արիւմտականացած եւ իր խորհուրդէն մասամբ մը պարպուած: Այն կշռութեամբ եւ արեւմտականացումը, որ կը ցուցարարուի հոն, շեշտուած են երգչահանի դաշնակներով (accords), որով Կանաչահան արդիականացուցած է զայն, այսինքն՝ ներդաշնակութեան (harmonie) սաղիով զարգացուցած է երկը եւ ոչ թէ քաղմերգագրութեան (contrepoint), այսինքն՝ երաժշտական բնութեան ներքին զարգացման համարով, որ հնարքեան խտտապարոյշ ոճին պիտի համապատասխանէր:

Երկրորդ ձեռագիրը կը ներկայացնէ Կանաչահանի երեք արարնոց «Արեղայ» օֆերան, գրուած 1938ի ամառը՝ Լեւոն Շանթի «Լին Աստուածներ»էն պատրաստուած թատերադրոյի վրայ: Կանաչահան ինքն իր ձեռքով զայն պատրաստած է՝ բոլոր արամը կեդրոնացնելով Արեղայի անձին վրայ: Այս բեմերգութիւնը, իր ամբողջութեան մէջ, ներկայացուած է Պէտք է մէջ կրան թէպէր մէջ՝ 1939ին:

Կանաչահանի այս ներկայացուած գործը, զուտ ստեղծագործական տեսակէտէ՝ մասնաւորապէս նկարագրի մը շունչի թէ՛ կերպի, թէ՛ արամաթիկական, թէ՛ հայկականութեան տեսակէտէ. մասամբ յաջողած մասերով աւելի փորձ մըն է անիկա, քան վարպետութեան կատարուած անբասիր ամբողջութիւն մը: Սակայն Կանաչահան շկարողացաւ վերատեսութեան նիթարկել զայն՝ իր տեսողութեան անհետացման պատճառաւ, ուստի՝ երկը չի համապատասխանէր հեղինակին վերջնական փափաքին, հետեւաբար անկարելի է վերջնական կարծիք մը տարազել այս ուղղութեամբ:

Մինչ այդ, Կանաչահան իր արուեստին լոյսը թափած էր արդէն անմահ

«Իալիօսներու եւ «Լօյ Արթներու ակօսներուն մէջ, որոնց վրայ կ'ուզենք մասնաւորաբար ծանրանալ հաս :

«Իալիօսն, գրուած 1922ին, Եղիպտոսի մէջ, իր կազմած երդլախումբին համար, Կանաչեանի ստեղծագործական ոճը վերջնականապէս բնորոշող առաջին կտորն է : Հոն արդէն վերջնականապէս կազմուած է ստեղծագործ Կանաչեանի ոճային կերպարը.— անիկա ոչ-կրօնական-օրհնակական խտտապարոյր սճն է (style sévère), որ առաւելապէս բազմերգագրութեան (contrepoint) բարդ օրհնքներով կը դրսևորուի, ո՛չ ալ օփերաներու յատուկ պաթոնական-փայերդական ոճը (style théâtral). Կանաչեանինը կտորիէ է անսվարան անուանել շնորհալի ոճ (style galant), Հեղափոխաց բնականութեամբ յազեցած ոճ : Թիւրիմացութիւն շտեղծելու համար հոս պէտք է շնչուիլ, որ բնաւ պէտք չէ բացասական կամ դրական իմաստաւորումներ կցել այս ոճաւորումներուն : այսպէս, օրինակ, պէտք չէ կարծել, որ բոլոր երաժշտական դրու-գործոցները անպայմանօրէն խտտապարոյր սճաւորում ունինք ուր որ ոճերով ալ կարելի է անմահ կտորներ տալ : Նոյնն է պարագան գունեշտին, զոր ողբերգութեան հետ պէտք չէ բաղդատել եւ ստորազնահանել :

Չմոռաննք նաեւ որիչ պարագայ մը : Կանաչեանի մեկնակէտը եղած է հայկական տոնմիկ միաձայն մեղեդին, իսկ նպատակակէտը՝ այդ մեղեդիին շնորհիլ քառամայն երդլախմբաւորում :

Արդ՝ հայկական բնիկ-աւանդական բներդ մը ոճ չ'ունենար, ալլ կ'ունենայ իր իւրայատուկ ազգային-ժողովրդական բնութիւնը, նկարագրերը, բուրմունքը : Ժողովուրդ մը ոճ չի ստեղծեր : ան իր հոգին կը դնէ թ'ը կտորճէն ելած մեղեդիին մէջ : անհաս-ստեղծագործն է, որ ունի օրեւէ ատաղճի մը ոճ շնորհելու հանգամանքը, որովհետեւ ան ձեւ, կառոյց, կշռոյթ, կազմա-կարգութիւն պիտի ներմուծէ այս անտաշ, միայնակ ժողովրդական երաժշտական բնիկներուն մէջ : Հեղինակը պարտաւոր է ներհակ ուշադրութեամբ ըմբռնել իրեն մեկնակէտ եւ խարխիս ծառայող բներդները, ատանց ստացուելիք կառոյցը անհատական քմահաճոյքի սնօրինութեան զոհը դարձնելու : Արդարեւ, կառուցուելիք ձայնային ճարտարապետութիւնը ունենալու է իր սկզբնական մոթիֆի ոգին, անոր ընզուէն խօսելու է, թէեւ աւելի բարդ եւ կազմակերպուած՝ բազմերգուած ձեւով : Ահա հո'ս կը կոչանայ Հեղինակի մը կարողութիւնը : անհա հո'ս է Կանաչեանի յաջողութեան դադանիքը : Կանաչեանի միտքը այն կողմնացոյցը եղած է, որ կրցած է կերտել իր մասխամիկ կոթողները Մուշի կամ Վանի շրջանի զօրեղ, բիւրեղ եւ քեւեղակամութիւն (polarité, tropisme) ունեցող քանի մը երաժշտական կենսաբոլիֆներէն : Հնչու է հետեւաբար ըմբռնել, թէ Կանաչեան ինչո՞ւ խուսափած է օփերայի յատուկ դիւրին զեղումներէ եւ արտակարգօրէն փաթեթիկ յորձանքներէ : ինչպէս նաեւ զոտ իմացականութեան խօսող եւ վերացականութեան վայել խտտապարոյր բազմերգութեան ցանցերէն : Կանաչեան փափաքած է իր կտորներուն շնորհել կառոյցի մատչելիութիւն, պարզութիւն, կոկիկութիւն, մեւաւորումի եւ դասաւորումի յստակութիւն : ասոնք իր բոլոր կտորներուն ընդհանուր յատկանիշները բլլալով՝ անոնց կու տան դասական ժուճկալուծութեան մը ճառագայթումը : Ահա այս ստեղծանքով է, որ Կանաչեան մեծ հարգաւորութեամբ յաջողեցաւ բազմամայնիլ հայկական լեռնաշխարհի ու դասուող բներդները, որոնցմէ ինքնաբերաբար կը շողարձակէ իւրայատուկ իր տճին բովանդակ կղակութիւնը :

Դարձնենք այժմ «Դալիօ»ն պարունակող պրակին կողքին ներսի երեսը: Հոն, Կանաչեան զետեղած է կտորին մէջ օգտագործուած տոհմիկ բներգները: Այս փոքրիկ կողքային ծանօթագրութեան կը հանդիպինք գրեթէ բոլոր երգչախմբային կտորներուն սկիզբը (բացի «Նամօր»էն եւ քանի մը փոքրիկ կտորներէ, որոնց բներգները եւ երգային առաջները զուտ իր հեղինակութիւններն են): Այս կողքին ներս գտնուած առաջնային ներածականը ո՛չ միայն կը դիւրացնէ հեղինակութեան ընդհանուր ընթերցումը, այլեւ բնութագրումն ժողովուրդէն քաղուած ըլլալը կը յայտնէ: Այսպէս, օրինակ, այս սկզբնական երկտողէն կը սարգուի, որ «Դալիօ»ի բներգային առաջնը կազմող երեք երգերը քաղուած են 1922ին, Աղեքսանդրիոյ մէջ, վանեցիի մը թերնէն: Այս թեմաները արդէն իսկ օգտագործելի պիտակի մէջ գտնուած ըրլալու են, որուած ըլլալով անոնց բիւրեղ եւ սնխաթար բնոյթը:

Կանաչեան անոնց նմանութեամբ կը յորինէ երկու ուրիշներ եւս, այսպէսով գոյացնելով «Դալիօ»ին երգագրութեան առաջնը: Բուն ստեղծագործական աշխատանքը կը սկսի այս հինգ մեղեդիներու իսկական ճանաչողութեամբ, երբ ան կը ձեռնարկէ անոնց կենդանի ընդհուրուածներուն, շուրհուսմաներուն ու տրամաթիկ կազմակերպութեան:

Այս երեք ժողովրդական մոթիֆները եւ անոնց նմանութեամբ ստեղծուած երկու միւս բլիշները ունին իրենց իւրայատուկ բնոյթը, նրբերանդները, գոյները, համեմունքը, բարձունքները. «Դալիօ»ին մէջ Կանաչեան շարքերգներ (suites) չի հիւսեր անոնցմով, այսինքն՝ իրարմէ անկախ, ամբողջական բայց ճակատող մասեր իրար կցելով միմեծի երգաչափ մը չի կազմեր. բոլոր մեղեդիները եւ բներգները օրկամական միաձուլումի ենթարկուած են հոն, ինչպէս Կոմիտաս բրած էր արդէն, օրինակ, «Հով արէֆ»ին մէջ իրարու ձուլելով երկու նոյնատիպ մեղեդիներ, առանց սակայն անոնց առլու զարգացումի այն կարեւորութիւնը, որուն կը հանդիպինք «Դալիօ»ի եւ Կանաչեանի միւս խմբերգներուն մէջ:

Եթէ Կանաչեան մեղեդիներու ստեղծագործութիւն չընէր իր երգչախմբային կտորներուն մէջ, անոր երգահանութեան արուեստը սակայն կը բնորոշուի այդ մեղեդիներուն բեղմնաւոր օգտագործմամբ: Երգը «Դալիօ»ին, ինչպէս «Լարդի»ի նետին կամ «Հով Ապր»ին մէջ, փերացական մտքի մը անկենդան զբսեւորումը չէ. հոս երգը տարող, շնչող, շարժող, ֆիզիքական կազմակերպութիւն ունեցող աշխարհի մը ինքնարուխ արտացոլումն է, լաւ ապրելու կենսական ճիգէ մը ժայթքած կենսահիթը, կեանքի, սիրոյ, արբեցողութեան, գեղեցկութեան հեշտանքներէն բխած, գրեթէ բնութագրաչափ հեթանոս բնամղումներու խտացած կայծը: Կանաչեան չէ դպած իմ օգտագործուող բնութագրումն աւանդական սրբութեամբ. զանոնք հարազատութեամբ, խոր հմտութեամբ ու իմաստութեամբ համարած է, բազմաձայնելով եւ ամբողջականացնելով միանգամայն: Կլուցի եւ արտայայտչականութիւն, մեղեդիի ներդրակ տրամաթիկականութիւն, արեւոտ խանդ ու հոգեկան դաշլա՞յլ. բայց այս բոլորը հոն են ներկայս ուժականութեամբ՝ պարփակուած վանի հողէն ջրովիժած այս ձայնային ցայտագրիւններուն մէջ: Կանաչեանի ներիմացումն էր հարկաւոր այս բոլոր խտացումներուն եւ ծալքերուն թափանցելու համար եւ անոնց շնորհելու — կուռ համակցութիւն, հորիզոնական-մեղեդիական երգաչափահարսութիւն եւ ուղղահայեք-քառաձայնային կշռութաւորում:

Այսպէս, «Դալիօ»ն բներգային մշակումի թեքնիքով բարձրացած իւ-

րայատուկ նորութեան առաջին զոհարն է կանաչեանին, ուր ժողովրդական երգը վերածուած է անհամեմատօրէն հարուստ ստեղծագործութեան մը:

Ամփոփենք, եթէ կ'ուզէք, թէ ի՞նչ հանդրուաններէ կ'անցնին կշռութային եւ մեղեդիական բջիջներու այս վերարծարծումն ու վերարժեւորումը՝ կանաչեանի ներմացումին մէջ.

1.— Ան նախ կը զգայ բիւրեղ մեղեդի-բջիջին արտայայտմէջոցները եւ անոնց ազդային բնութիւնը կը կշռագատէ:

2.— Այս հում մեղեդի-բջիջները, իր մտքին մէջ, տարերային իրենց կայուն գոյամիտակէն կը փոխակերպուին կենսաթրթիտ անհասարուածներու եւ կը գոյացնեն արամաթիկ ամբողջականութեան մը երգային հանդրուանները:

3.— Վերջապէս, ստեղծագործողի երեւակայութիւնը կը բեղմնաւորէ եւ միամուտով կ'ենթարկէ այս երգային անհատ-մասնիկները:


Այս բոլորը տեղի կ'ունենան անզգայարար, ստեղծագործութեան տենդի պահուն, կեդրոնացումի գերադոյն վայրկեաններուն, ներքին մղումով, անբանարարելի թափով, որոնց բնթացքին մեղեդին կը բանայ իր բոլոր ծալքերը լոթիւսի մը նման եւ կ'արձակէ հոն զսպումը բուրմունքը: Ճառագայթ մըն է զարերու խորքէն մեղի եկած տոհմիկ մեղեդին, որք, իբրեւ բազմբանդ շառաւիղ, անցնելով արուեստագէտին իմացականութեան պիտակէն՝ կը տարադողուի իր հնչիւնային, ժայնային եւ կշռութային հիմնական դոյներուն: Հեղինակի կողմէն եղած եղանակային յաւելումները եւ զարգացումները կը ձգտին այդ տոհմիկ մեղեդիին իմաստաւորման, ամբողջականութեան ու բազմազանութեան:

Կանաչեան պարզապէս ձեռով կը բացատրէ այս բոլորը.— «Իմ երգերս, — կ'ըսէ ան, — նոր ձև առած են՝ ժողովրդական եղանակը իբրեւ քիմա գործածելով»: Եւ գիտէ՞ք, թէ կանաչեան երբե՞ք Հայաստան չէ եղած եւ մայրենի լոյսին վրայ գեղջուկի բերնէն ժողովրդական երգ չէ լսած. սակայն ի՞նչ փոյթ, քանի երաժշտական ամբողջական հայկականութիւն մը իր մէջ բոլորուած է եւ զեղջուկ երգը կ'ապրի իր իւրաքանչիւր լեզուի ընդմէջէն:

Կանաչեան, իր կարեւոր խմբերգներուն մէջ, որոնք արդէն իսկ դասականացած են, կը հետեւի ընդհանուր յատակադի մը:

Իբրեւ օրինակ վերցնենք համեմատաբար երկարաշունչ իր կտորներէն մէկը՝ «Վարդերի հետ խաղում ես»:

Այս հրաշալի գործը ամբողջութեամբ կառուցուած է մէկ հատիկ կենսաթրթիջային երաժշտական առադմի վրայ. ան Շերակէ շրջանէն պարերգ մըն է:



Հակիրճ կերպով քննենք այս երկին ստեղծագործական հանգրուանները.

1.— Կանաչեան նախ կու տայ թեման իր ամբողջականութեանը մէջ՝ վստահուած արական ձայներու, թեման, այսինքն՝ հիմնական կենսաբոլորը, որուն շուրջ եւ որուն միջոցով պիտի կազմակերպուի եւ բազմաճիւղաւորուի երկին երաժշտական կեանքը՝ իր բոլոր տուեալներով։

2.— Երկրորդ անգամ այս նոյն թեման նոյնութեամբ վստահուած է իրական ձայներուն, որոնց հետ զուգերգութեան կը մտնեն քննարկները, իսկ պատերը, թաւոթաղներու նման, կը շեշտաւորեն յաջորդական շարքերու ատաղին նոթերը՝ իրազօրծելով այսպէս նախնական կառութաւորութիւնը։

3.— Թափորդ հանգրուանը նոր թեմայի մը ներկայացումն է քննարկներու կողմէ. բայց այս նոր թեման կարելի է առաջինին մէկ փոփոխակը հասարել, քանի որ երկուքն ալ նոյն ռիթմիկ կառույցը ունին։—



4.— Այս նոր թեման կը շրջագայի քննարկներէն ուսիւրացնելով՝ միւս ձայներու օգտագործումով, ընդհանուրը ստանալով ճիւղաճիւղ եւ լիութիւն։

5.— Պատերու փոքրիկ անցքէ մը ետք, առաջին բներդը կը վերաբարձարծելի բոլոր ձայներու ընկերակցութեամբ՝ նոր բառերու վրայ։

«Մտիկ արեւ էն դուշին՝ ստը դրել է փուշին,
Երանի Յրամ կ'ըլնի՝ բուշը դրել է քուշին»։

6.— Փափաք ունենալով ուռնացնել եւ փարթամացնել կտորը՝ Կանաչեան կը ստեղծէ երկրորդ նոր թեմա մը՝ իր բնական կրկնութիւններով, մինչեւ որ հասնինք սալօթի բաժնին։ Կանաչեանի երգչախմբային բոլոր կտորներն ալ ունին իրենց սալօթի (միայնակ երգի) բաժինը, բացի «Շուշօսէն» Այս սալան կը զարգանայ փոխասացութեան ձեւով՝ իրական եւ արտական դիւ ձայներու միջեւ եւ, դուգերգէ մը ետք, վերջ կը գտնէ խմբերգով մը։

«Վարդերի հետքը կրնար հոս վերջանալ, բայց Կանաչեան զայն ճիւղաւորած է եւ այսպէսով աւելի արժէքաւորած՝ զարդացնելով կտորը բազմադրութային (contrapunctique) ձեւով. հոս կ'առնուի կ'առողջանայ, բնականուր դիտարկը կը դառնայ աւելի փոփոխային, քան էր առաջին մասին մէջ, բներգը կը կարճնայ եւ յարաճուն կերպով կը շրջագայի շորս ձայներէն մէկէն մեւք՝ ընդհանուր շարժի ենթարկելով այս նոր բաժինը։ «Վարդերի հետքի այս երկրորդ կերպովական մասը երաժշտականօրէն առած մեծարժէք էջ մըն է եւ հայ երաժշտութեան գեղընկ երգարուեստի բաղմամբանութեան բացառիկ եւ յաջողապէս կառուցներէն մէկը կը հանդիսանայ։ Աւելորդ է ըսել, որ կտորը վերջ կը գտնէ վերադառնալով առաջին մասի ընդհանուր փլամաւորութիւն։

(Մնացեալը յաջորդով) ՊԵՏՐՈՍ ԱՆԱՀԱՅՏՈՅԵԱՆ

Մ Ի Շ Ե Լ Կ Ո Ր Տ Է

ՍՈՒՇԵՆԻՑԻՆԻ
Մ.ԱՐՏԱՎՐԱԻԵՐԸ

«ԿՈՒԼԱԿ
ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍԸ»



Ա. ՍՈՒՇԵՆԻՑԻՆ

«Այս գիրքը կը ձօնեմ բոլոր անոնց, որոնց կեանքը պակսեցաւ պատմելու համար: Ու թող ինծի ներքն, որ ամէն բան չեմ տեսած, ամէն բան չեմ յիշած, ամէն բան չեմ գուշակած»:

Օգոստոս 1973, ամառան վերջերը: Լենինկրաւի դադունի սոսիկանութեան գրասենեակին մէջ, Քա. ժէ. 95-ի գործակալները օրերէ ի վեր կը տանջեն մանկամարդ կին մը, էլիզապէթ Վորոնիանը: Գիտեն, թէ ան ունի օրինակը գազանի ձեռագրի մը, որ իբեկ վտակուած է իր բարեկամներէն մէկուն, հոշակաւոր գրագէտի մը կողմէ: Ամիսներէ, տարիներէ ի վեր, սոսիկանները կը փնտռեն այդ ձեռագիրը: Վերջապէս կը հասնին իրենց նպատակին:

Նոյն օրերուն, Մոսկուայի մէջ, Ալեքսանդր Սոլժենիցին, Նոպէլեան գրական մրցանակի պատկաւոր, Խորհրդային

Միութեան մէջ անհնուած եւ արգելուած գրագէտ, իր բնակարանը կը հրաւիրէ արեւմտեան երկու թղթակիցներ, Ալէն Փաքոպ (էլը Մանտէն) եւ Պրէնք Բրէֆօ (էլտըիէյթըու Փրէտ): Գազանի սոսիկանութեան գործակալներէն: Սոլժենիցին անոնց կը յայտնէ, թէ մահուան սպառնալիքներ ստացած է: Գազանի սոսիկանութեան գործակալ մը, երբորդ անձի մը միջոցով, իրեն փոխանցած է վերջնագիր մը: «Արտասանման կորսուէ, ապա թէ ոչ՝ քեզ պիտի սատկեցնեն ճամբարի մը մէջ»: Կը վախնայ իր ազատութեան, կեանքին, ընտանիքին համար:

Բայց, նոյն ատեն, Սոլժենիցին կ'ար-

ձակէ գարձանալի ազգարարութիւն մը. «Մահս պիտի չուրայտցնէ անոնք, որոնք, իմ գրուկան գործունէութիւնս կասեցնելու համար, ահար կ'ապաւինին: Մահէս, անհետացումս կամ ձերբակալութենէս անմիջապէս ետք, իմ գործիս էական մասը — այն՝ զոր չուզեցի երասարակել այս ամբողջ տարիներու ընթացքին — երասարակութեան պիտի տրուի: Ի՞նչ պիտի ընեն զազտնի ռատիկա՞նութեան սպաննը. երբ յետ մահու գիրքերս, ամենէն կարեւորները, ազոզն Ռուսիան»:

Սոլժենիցին նախազգուշութիւններ ձեռք առած է: Այս խորհրդաւոր գործը, որուն մասին կը մերժէ Կալիտաի, գրուած է բարեկամ, ազատով ձեռքերու մէջ: Նոյնիսկ Հատած է Արեւմուտք:

Սոլժենիցինի այս յայտարարութիւնը զգայացունց ազդեցութիւն կը գործէ Հատման աշխարհի մէջ: Պատերազմական յայտարարութիւն մըն է խորհրդային վարչակարգին դէմ: «Հէրեաթիտոս» մտաւորականներու անունով, Նոպչիանս պըսակաւորը, իր բարեկամին՝ խորհրդային ջրածնային ռումբի Հայր Անտրէ Սախարովի օժանդակութեամբ, կոչերու պայքար կը չլքույազերծէ աշխարհի Հանրային կարծիքին առջեւ: Այս մարդոց եւ Քրեմլինի գաղտնի ոստիկանութեան մեջն տարիներէ ի վեր մղուող խուլ պայքարը բացայայտութիւն կը դրսեւորուի:

Նոյն պահուն, Լենինկրատի մէջ, Էրիզայէթ Վորոնիանցայս կը կրի: Գաղտնի ոստիկանութեան կը խոստովանի, թէ իբրեւ ամառ ստացած է Սոլժենիցինի մէկ ձեռագրին կարեւոր մասը եւ կը յայտնէ այն մայրը, ուր զայն պահած է: Ապա, յուսահատ, կը դառնայ տուն եւ ինքզինքը կը կտնայ:

Սեպտեմբեր 6ին, Սոլժենիցին, տակնուվրայ եղած, արեւմտեան մամուլին կ'իմացնէ այս ողբերգութիւնը: Ու կը վերցնէ քողին մէկ անկիւնը: Ձեռագիրը կեդրոնացման ճամբարներու եւ ստալինեան օրերուն գաղտնի ոստիկանութեան կիրարկած մեթոտներուն մասին մանրա-

մասն քրոնիկ մըն է: Մասնաւորաբար, կը պարունակէ անունները ստալինեան սարսափէն փրկուած 227 անձերու, որոնք կ'ապրին Ռորհրդային Միութիւն եւ որոնց վկայութիւնները արձանագրած է: Հիմա, բոլոր այս տեղեկութիւնները կը դանուին գաղտնի ոստիկանութեան ձեռքը: Ի՞նչ ընել:

Աշխարհ այս Հարցումին պատասխանը պիտի ստանար 113 օր ետք: 28 Դեկտեմբերին, Իմքա-փրէս Հրատարակչական փոքր տունը Փարիզի մէջ կը հրատարակէ Սոլժենիցինի ձեռագիրը ռուսերէնով: 606 էջոց Հատոր մը. «Լուլլակ Արշիպեղագոսը»: Ստալինեան սարսափ քրոնիկ մը: Գրական եւ քաղաքական ռումբ մը: Քարգմանութիւններ անմիջապէս կը ծանուցուն Ճրասնայի, Միացեալ Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ, Եւրոպի եւ Իտալիոյ մէջ: Ազատութիւն Ռատիոկայանը, որ կը գործէ ամերիկեան կառավարութեան դրամով, կը սկսի ամբողջ գործին թերթօնային ձայնասփռումին: Ռուսերէն եւ Ռորհրդային Միութեան մէջ խօսուող տանընթեթը լեզուներով:

Ու եղածը սկիզբ մըն է: Հրատարակւած Հատորը կը թուի, թէ իր շարունակութիւնը ունի: Արեւմուտք Հատած է արդէն: Մարդ մը գիտէ. մեթը Ճրից Հէպ, ցիւրիխարնակ փաստարան մը, որուն Սոլժենիցին լիպօրութիւն տուած է Հակելու իր գործերուն Արեւմուտքի մէջ Հրատարակութեան: Բայց — անշուշտ — ան կը մերժէ խօսիլ: Որովհետեւ խորհրդային ամբողջ ոստիկանութիւնը զօրաշարժի ենթարկուած է այս գիրքին եւ անոր Հեղինակին դէմ:

Սոլժենիցին Հին Հալիւ մը կը մաքրէ: Հրետանիի երիտասարդ սպայ, վիրաւորուած, պարզեւատրուած եւ քաջարի արարքներու Համար Համբաւի տիրացած՝ պատերազմի ընթացքին, Սոլժենիցին գերմաններու դէմ կը կոռէր Արեւելեան Փրուսիոյ ճակատին վրայ: Հոն է որ զինուորական Հակայրտեսութեան սպասարկութիւնը եկաւ զինք ձերբակալելու, թշնամիի կրակին տակ:

Իր ոճի՛ բըլը Կը թղթակցէր մանկու-
թեան ընկերոջ մը հետ, որ սպայ էր ու-
րիչ ճակատի մը վրայ: Անոր հետ, Կը
քննադատէր Ստալինը եւ պատերազմը
վարելու անոր եղանակը: Նոյնիսկ Կը
ծաղրէր — Ի՛նչ սրբազոյժութիւն — այն,
որ այն ատեն Կը կոչուէր «ժողովուրդ-
ներու հայրիկը» կամ «հանճարեց առաջ-
նորդը»: Նամակները գրաւուեցան գրա-
քննութեան կողմէ: Նօթատետրերը՝ նոյն-
պէս: Ու ծառայեցին իրենս վկայաթուղթ
Սոյժենիցիներ ղտտուպարտել տալու հա-
մար տուտ տարուան գաշխատանքի ճամ-
բարքի եւ հինգ տարի աքսորի, Կեղրոնա-
կան Աօիա:

Մոսկուա փոխադրուելով, իր պա-
հակները զինքը տարին մեթրոյի բազ-
մութեան մէջէն: Սոյժենիցի մինչեւ իսկ
ճամբայ ցոյց տուաւ անոնց: Ինչո՞ւ չըմ-
բտասացաւ: Ինչո՞ւ չպոռաց: «Որովհե-
տեւ վատ էի, որովհետեւ քոյրքս այ վա-
տնր էիմէ», Կը պատասխանէ Սոյժենի-
ցին: Անկէ ի վեր, որոշած է իր կեանքը
յատկացնել ստալինեան սարսափին զէմ
անխնայ ամբաստանազրի մը պատրաս-
տութեան:

Ստալինի մահէն եւ Նիկիթա խրուչ-
չովի գաղաստալինացումի քաղաքակա-
նութենէն ետք, Սոյժենիցին կարծեց,
թէ ճշմարտութեան ժամը ի վերջոյ հրե-
շած է: Իր առաջին վէպը՝ «Իվան Տե-
նիսովիչի մէկ օրը» պաշտօնապէս լոյս
տեսաւ 1961ին, խրուչչովի օրհնութեամբ:
Իսկայն փառքի տիրացաւ: Ասոր վրայ,
զբաղւալը սկսաւ կազմել «Արշիպիլա-
գաս»ի թղթածրարները, հարցապնդելով
զոհերը, արձանագրելով վկայութիւննե-
րը ու պատրաստելով անվերջանալի ցան-
կերը դահիճներու, որոնք հանգիստ
կեանք մը կը վայելէին այս կամ այն քա-
ղաքին մէջ: Սոյժենիցին կը կարծէր, թէ
յանցաւորները երեւան պիտի հանուին,
պիտի դատուին ու պիտի դատապարտ-
ւին:

խրուչչովի շնորհադրկումէն ետք,
կափարկէր զոչուեցաւ: Սոյժենիցիի
գործերը արգելուեցան: Նկատուեցաւ

Թշնամի Խորհրդային Միութեան: Եատ
ուշ էր. գրապէտը հուշակալոր դարձած
էր արդէն: «Առաջին շրջանակ»ի եւ
«Բալցկիկալարներու տաղաւար»ին շը-
նորհիւ, որոնք հրատարակուեցան Ա-
րեւմուտքի մէջ, Սոյժենիցին 1970ին ար-
ժանացաւ պրակտիկութեան Նոպէլեան
մրցանակին: Իր ձեռագիր գործերը Կը
չըջէին Խորհրդային Միութեան մէջ: Ոս-
տիկանութիւնը ի զուր միջոցներ ղտե-
ղեց անոր տան մէջ, բաղժիցս «գողը»
մտան, բայց չկրցան ձեռք մղել ահաւոր
«Կուլակ Արշիպիլագասը»:

Ինչո՞ւ այս խտուրթիւնը: Որովհե-
տեւ այս անգամ եղածը վէպ մը չէր: Այլ
պատմարանի գործ մը: Հեղինակը ամ-
բաստանութեան տակ կ'առնէր խորհրդա-
յին պետութեան ամբողջ դրութիւնը, ա-
ռաջին օրերէն մինչեւ այսօր: Ո՛չ միայն
Ստալինը, այլ նոյնինքն Լենինը, որ կ'ը-
սէր. «Ռուսական հաղթ պետք է մարել
քոյր վնասակար միջատներէն»: «Այսօր
իսկապէս տարբեր է», հարց կու տայ
Սոյժենիցին: «Ի՞նչ փոխուած է մեր օրե-
րուն»: «Ներքէ այսօր, կը գրէ ան, տօնե-
րէն առաջ (ինչպէս ցտրակոն շրջանին)
հանգանակութիւն մը կատարուի տեղա-
կան բանտին արգելափակեալներուն հա-
մար, ասիկա պիտի ճկատուի հակախոր-
հրդային քրտուտութեան այսօր մը: Ա-
հա քէ ո՞ր աստիճանի գազանացած ենք»:

Սոյժենիցին աւելի առաջ կ'երթայ
սրբազոյժումի մէջ: Կը հաստատէ, թէ
պատերազմէն ետք, Դաշնակցային Գեր-
մանիոյ մէջ, 86.000 նացիներ դատուե-
ցան մարդկութեան զէմ ոճիբի յանցան-
քով: Հրապարակային: Արդ, բառ իրեն,
որքան զիտէ, մինչեւ հիմա խորհրդային
գաղանի ոստիկանութեան միայն տասը
անդամներ դատապարտուեցան: Դորն-
փակ:

«Ապագայ սերունդները մեզ վատ պի-
տի ճկատեն: Մեր երկրին եւ մեր գաւազ-
ներուն հանդէպ մեր պարտականութիւնն
է դռտել մեր դաշիները», կ'ըսէ ան:
Սոյժենիցին շի պահանջը, որ անոնք են-
թարկուին նոյն շարժարաններուն, այլ

ստիպուին Հրապարակով խոստովանելու, թէ «Այս, ես դանիմ մըն էի: Այս, ես մարդասպամ մըն էի»:

«Ռուսիամ ի՞նչ պատգամ կրնայ քաղուլ աշխարհին. եթէ այդ նեխանքը չփրցնենք չնետենք մեր մարմնէն», կ'նշարակացնէ ան:

Հեղինակը այս նեխանքը կը նկարագրէ ՅՈՍ Էջերու երկայնքին, որոնց ընթերցումը յաճախ անհանդուրժելի է: Կը յիշէ տարագրութեան վիթխարի ալիքները, որոնք իբրևո՞ւ յաջորդեցին 1929էն ի վեր. «Նեղեղները», ինչպէս կ'ըսէ ինք:

● 1929-1930, գիւղացիական Հեղեղը: Աւելի քան 15 միլիոն զոհեր, կ'ըսէ ան. այրեր, կիներ, երեխաներ, ամբողջ շրջաններ տարագրուած: Այսօր բոլորովին մոռցուած են: «Ռուսական խղճմտանքը Յոյնիսկ չվիրաւորուեցաւ: Մինչդեռ Ստալինը, դուք եւ ես այս մտազու՛մէն աւելի անաւար օճիր չեմք գործած»:

● 1934-1939 Մոսկուայի դատաւարութիւնները, Կուսակցութեան մաքրագործումը, մտաւորականներու դէմ հարածանքը: Լենինի բոլոր ընկերները, Մոսկինի բոլոր մրցակիցները քանջնջուեցան: Կարմիր բանակը դիտատուեցաւ:

● 1942-1946. ուղղագրիներու Հեղեղը: Խորհրդային բոլոր այն գինուորները, որոնք գերի ինկած ըլլալու օճիրը գործած էին, «գրամատիրութեան կողմէ վարակուած» նկատուեցան եւ արդէսփակուեցան իրեն հայրենիքի դաւաճան: Խորհրդային Միութիւնը աշխարհի միակ երկիրն է, որ «Մոսկինի օսկմադիտական սխալներուն Հետեւանքով», թշնամիին ձեռքը ինկած իր գաւազներուն Հետ այսպէս վարուեցաւ: «Այսօր, կը վախնամ այս մասին խօսելի, բայց յանգամաֆր գուցէ քաղաքական մեր իրաւակալը գիմ էս: Ու Սոլժենիցին կը պատմէ տեղակալ Սեմիոնովի պարագան: 1941ին կամաւոր, սպայի աստիճանով, 1942ին գերի կ'իյնայ գերմաններու ձեռքը: Կը

փախի: Զինքը կը դատեն: Ինչո՞ւ անձնասպան չէ եղած: Ատրճանակ չուճէր: Այլ միայն պարագ պատեան մը: «Ատրկա չբժեղանք մը չէ», կ'ըսեն իրեն: Ու կ'արդէն իրեն: Բայց 1945ին առտամսպէս ազատ կ'արձակեն ու կը գրկեն ճակատ, առաջին գիծերը, Կը մտնէ Պերլին: Կարմիր Աստղի շքանշան կը ստանայ: Կը վերագրանայ երկիր: Իմանալու համար, որ դատաւարտուած է տառը տարուան աշխատանքի ճամբարի եւ Հինգ տարուան աքսորի: Սոլժենիցին դայն կը ճանչնայ բանտի մէջ:

● 1942-1945 աղպարնակչութեանց Հեղեղը, Թաթարներ, կիբկիդներ, Թիւրքմէններ եւ հազարաւոր ուլթայացիներ, որոնք ամբողջ գիւղերով կ'աքսորուին Գերմանիոյ Հետ դաշնակցած ըլլալու ամբաստանութեամբ:

● Տեւական Հեղեղը. այն՝ որ կոտորեց Հոկտեմբերեան Յեղափոխութենէն առաջ գոյութիւն ունեցող զաղաքական նախկին կուսակցութեանց անդամները, որոնց ցանկը ձեռք ձգած էր Քրեմլին. մասնաւորաբար՝ ամէն տեսակի ընկերակցականներ: Սովետներու յաղթանակէն երեսուն տարի ետք, Ստալին տակալին կը հարածէր այս «կարողական ուրազործներու» վերլինները, որոնցմէ շատեր կը ծառայէին պետութեան. ճարտարագէտներ, գիտնականներ, մասնագէտներ: Սոլժենիցին անոնցմէ շատերուն հանդիպած է ճամբարներու մէջ: Անոնք ամէնէն արիներն էին, կ'ըսէ ան:

● Կրօնական Հեղեղը: Ու տակալին շատ ուրիշներ, բոլորն ալ նոյն ձեռք սահմրկեցուցիչ զէպերով: Սոլժենիցին կը թուէ չարչարանքի 31 տեսակներ: Կը պատմէ, թէ սպանութեան պետը՝ Ռիոմին, որ յետոյ ներքին փոխ նախարար եղաւ, դադանի ոստիկանութեան իր հիանալի գրասենեակին մէջ, կը սրէր անձնապէս զգեստել այն բանասարկեալները, որոնք կը մերժէին խոստովանել: Ան գետինը ծածկել կու տար մեծ կտա-

ւով ձը, որպէսզի արիւնը չազտուէ իր արեւելեան գորգերը:

Սովետացիներն կը յիշէ տարազ ձը, որ հպարտութեամբ կ'արտայայտուէր մասնաւոր սպասարկութեանց դործակալներուն կողմէ. «Տակէք մեզի մարդկային լեակ մը, ձեզի կը շինենք քղաքաղաք մը»: Բայց բանտարկեալներն ալ ունէին իրենց առածը. «Ան որ ճամբար չէ գացած, օր մը պիտի երթայ: Ան որ ճամբարէ մը դուրս պիտի գայ, երբեք պիտի չմտնայ»:

Սովետացիներն չմտնաւ: Ձուգեր որ Խորհրդային Միութիւնը մտնայ: Ձուգեր որ աշխարհ մտնայ:

Խորհրդային վարչակարգը երբեք չէ գտնուած այս հասակով հակառակորդի մը առջեւ, որ զինուած է միայն իր միջազգային հռչակով: Որովհետեւ, այժմ առ զրեթէ բոլոր զեկազարները նուիրապետութեան աստիճանները բարձրացած են Ստալինի օրերուն, իրենց կարգախօսն է «Ձխտանշտկել անցեալը»: Բայց նայն-

իսկ այսօր, եթէ «հերեմիկոս» մասաւորականները «լուծարքի» չեն ենթարկուիր, սակայն միշտ կը հալածուին, յիմարանոցներու մէջ կ'արգելափակուին կամ կ'աջտորուին ճամբարներ, ուր տակաւին կը դնուին մէկ միլիոն տարագիրներ:

Քրեմլին ինչպէ՞ս պիտի կրնայ վերցրնել Սովետացիներէ նեատեմ ձեռնոցը: Բան մը չընէ՞ կը նշանակէ քաջալերել ուրիշներ: Անոր անմին կամ ընտանիքին վրայ բռնանալ՝ կը նշանակէ վտանգել մեղմացումը, զոր արդէն խնդրոյ առարկայ կը դարձնէ Քոնկրէսը Ուաշինկթընի մէջ: Կը նշանակէ նաեւ պատճառ դառնալ «կուլակ Արշիպեղազոսի» շարունակութեան հրատարակման:

Վերջին լուծում մը. վտարել հերեմիկոսը: Բայց ան կը մերժէ աջտորուիլ: Ու յետոյ, նիւ Եւրօքէ կամ Սթոքհոլմի մէջ Մոսկուայէն նուա՞ղ վտանգաւոր պիտի ըլլայ: Ոչ, իսկապէս, Քրեմլին երբեք այսպիսի մարտահրաւիրի մը առջեւ չէ դնուած:

Հայագոս' Տ. Ո.



Կարգիչներ



Ա. ԱՐՓԻՆԷԻ

«ԵՒ ՆԱԻՐ ՍՈՒԼԵՑ»

հատորը

1967 թռակարեն ատաղ, Ա. Արփինէ ծանօթ անուն էր ամապրերու էջերուն սոգոր ընթերցողին միայն: 1967ին ան կը հրատարակէ իր գրականութեան անգրանիկ հոսանքը՝ «Կեանքի կատակերգութիւն», որ քանակապէս պատմութեան ներ մտփոխող հատոր մըն է: Վեց տարի ետք, անցնող տարեշրջանին, Ա. Արփինէ հրատարակութեան տուաւ իր երկրորդ հատորը՝ «Եւ Յուր Սուրբ...», զարմալ պատմութեան հատոր մը, այս անգամ քանակապէս կարճ ու երկար կը տարներով:

Ա. Արփինէի երկու հատորները կը պարզեն իրարահարապատ երեւոյթ մը, որ ակներեւ է այդ երկուքին մէջ տեղ գտած թեմաներու ճամփաութեան ճամբով, արտայայտական համանման հզանակով և ոճին նոյնութեամբ:

Յիշուլ հաստատումը ի նպաստ գրագիտութիւն է անպայման, որովհետեւ կը մասնէ տատանումներ ու ստատումներ մերժող և որոշ-

եալ ուղիք մը հետեւող անոր քայներուն անթեր ընթացքը:

Ա. Արփինէ պատմութեամբ է ամապրերու էջերուն: Ա. Արփինէ պատմութեամբ է իր երկու հատորներով:

«Եւ Յուր Սուրբ...» հատորին մէջ տեղ մը, ան կ'ըսէ. «Այո, բնութիւնը, բնութիւնը է Աստուծոյ գլխաւոր տանարը եւ ետէն է, որ մարդ ամենն ակելի կը գգայ Տիրոջ փառքը օրհնորգելու պահանջը...»: Աւ հաւատարիմ իր խաղերուն, այլ հաւատարիմ ուրիշ ուժի մը, գրականութեան, Ա. Արփինէ իր հատորը կը վերածէ ընթան մէկ այլ տանարին:

Արդարեւ, չկայ պատմութեամբ մը, ուր ան ներմուծած լուսայ կաթիլ մը ցող, ճանաչ մը տրեւ, լիքան մը ուրուաղիքը, ծովուն շառաչը...: Անգամ Նիւ Ծորքի երկնաքերներուն նեղ անցքերուն միջեւ Արփինէ անթիք կը գտնէ հանրային

պարտեզ մը հանդիպելու, վայելելու քնութեան պատրանքը...

Հատորին պատճառած ճեղքը իբրև գլխաւոր թատերադրամը ունին Պոլինն ու Նիւ Եորքը, ուր ապրած է Արփինէն, առաջինին մէջ պարտեզնայով իր երազուն երկաստորգութիւնը, երկրորդին մէջ ապրելով փորձառութիւններու ճամբով շահուած հասունութեան շրջան մը:

Պոլիսը իբրև վայր ունեցող պատմութեանը արգարորդն մտածելի կու տան, որ Ա. Արփինէն քանոնք գրած է անցեալին ու հաւանաբար վերամշակած է Հատորին յանձնելէ առաջ:

Յամենայնզկէս, նոյն մտածումը կ'այցելէ ընթացողին միտքը նաև Նիւ Եորքի մէջ տեղ գտած պատմութեանը զինքնուրոյն զինքնուրոյն զինքնուրոյն շարժումները վայրի հարց չի կրնար ըլլալ այս պարագային, այլ պատմութեան ժամանակը ինքն է, որ կը ստեղծէ յիշեալ ապուստոսութիւնը:

Ա. Արփինէն Նիւ Եորքն ու Ամերիկան աւելի հին են կարծես, քան ներկայի Նիւ Եորքը, ներկայի Ամերիկան, ներկայի աշխարհը:

Վերոյիշեալ պատճառին քերտած է հաւանաբար այն ճակատագիրը, որուն ենթակայ են ընդհանրապէս Ա. Արփինէն հերոսները: Անոնք գլխաւորաբար արուեստագէտ տիպարներ են, կամ սկզբունքը ամէն բանէ վեր դասող իտէլիացիները: Անոնք բարութեան ու ազնուութեան խառնուրդ են ու զրեթէ միշտ կը խորհրդանշեն անխառն գրականութիւն: Մարշկային ակարութիւններ, ի հարկէ, կ'այցելեն քանոնք երբեմն, բայց չեն տիրապետեր անոնց: Նման պարագաներու, ընկանն ու իրականը կը նահանջեն՝ տեղ առաջով բնագոյնը ցակնելն, որ անպատճառ կ'իրագործուի երբեմն երազով, երազայութեամբ, արուեստի ճամբով ու յանախ գրականութեամբ, այսինքն՝ երեւակայութեան թռիչքով:

Այս բոլորէն մեկնած կարելի է հաստատել, որ զբոսն պատմութեանը փորձառութեամբ շահուած արուեստներու և ապուստոսութիւններու

հիւսք մը կը կազմեն ու կը հունաւորուին Ա. Արփինէն իմացապալտ մտքին ու հոգիին արգասիքներով, ինք պիտի ըսէ՝ զեղզիով ու շունչով:

Հատորին մէջ տեղ գտած է նաեւ գլխաւոր օրագիրը անուն կտոր մը, զոր զժողով պիտի ըլլար սեզանորի պատմութեանը շարքին մէջ, ո՛չ միայն իր ծառային պատճառով, որ երեք պատճառած ճեղքու չափ տեղ դրաւած է, այլևս համայն խորքին ու կարգ մը այլ տուեալներու, որոնք կրնային վիզակի մը վերածել կտորը:

«Ըն ճալը տակեց...» Հատորը կ'ըզբարձրուի հետեւեալ պարբերութեամբ.

«Վրէժը կը տրո՛ւ թախտաբոյսի. պիտի զրկեմ գայն Հայաստան. քող տարի մը երկուք ուսման հոն: Թող շնչէ մեր լեզուներուն օդը, իսկ մեր ազիրներուն անուպակ ջուրը ու հայրենի հողը, մեր պապեմանով սուրբ հողը իր հրաշքը պիտի գործէ. օտար ազնուութիւնները գայն պիտի մերժուին ու ամբողջակամ հայ դարձնէ: Իմ քոնքն ու քոնքնուր թախտաբոյսը պիտի է դատարան հայեր մնան. Սեյա, գտարին հայեր...»

Ու նաև՝ նոյն խորքը ունեցող պատմութեանը մը կը բացուի Հատորը. աւելի՛ն. զրեթէ երազանչիւր պատմութեան մէջ կը մրճակարկ զտարին հայերն մնալու արգելին ոգիի մը արժանանքը: Մանաւանդ Ամերիկայի մէջ ընթացող ունեցող պատմութեան մէջ՝ Ա. Արփինէն անպայման հնչեցողքն է տեղանկը մուսուլման, օտար ազնուութիւններուն, ուրացումին...

Այս մեռումը, զազուրթաւայ կեանքի ամենէն արտիւն մէկ մասնազտութիւնը կը գտնուի «Ըն ճալը տակեց...» Հատորին գլխաւոր թեմաներէն մէկը:

Ա. Արփինէն գրադատուի մըն է, որ կը հաստատուի արուեստի զօրութեան, կը հաստատուի տեղ անթափ բարեբն ու անոր կը մտասնի առաջնութիւն մը՝ ազգային ու մարդկային: Իր գրականութիւնը թելազրոյն է լուին ու զեղծիկին, պատգամարկն է կատարակնն ու կը ձգտի նկարագրի կոփելու, հոգի ազնուացնելու և բարոյական մշակելու:

Ք Ի Ն Պ Ա Պ Ի Ն

Հղմարներ

ԽՕՍԲ՝ «ԱՐՏԱՔԻՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՊՍՊՐԱՆՔԻ ՎՐԱՑ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՃԱՌԵՐՈՒ» ՄԱՍԻՆ

Նիկողոս Սարաֆեանի ժահուան առաջին տարելիցին առիթով, Փարիզի «Յառաջ»-ը իր 16 Դեկտեմբերի թիւին առաջին էջին վրայ տուած է սղրացեալ բանաստեղծին մէկ զերթուածը, երկրորդ էջին՝ արձակ կտոր մը, եւ երրորդ էջին՝ անոր մասին ստորագրած Կ. Միրիճեանի եւ Գ. Պըլտեանի գրութիւնները:

«Յառաջ» նոյնպէս Սարաֆեանին նուիրած է նոյն օրուան իր խմբագրականը՝ «Բանաստեղծը եւ ծովը»:

Տեղեկագրեցինք այս բոլորը՝ աւելցնելու համար, որ «Յառաջ» խմբագրական «ծով»ուն մէջ ամէն ինչ յստակ չէ ու աւելի քան պզտոր են հոն հոսեցուած հետեւեալ բաները.

«Ամփոփուած իր առանձնութեան մէջ, Սարաֆեան հեռու ապրեցաւ ամբոխէն: Յոբիեան չունեցաւ եւ լաւ է որ այդպէս եղաւ: Յոբիեանները անիրաժեշտ են միայն անոնց համար, որոնք վստահ չեն իրենց արժէքին եւ արտաքին վկայականներու պէտք ունին: Այս քերթը, որ Յոբիեաններու հանդէպ անհանդարժողութեան իր զգացումը ծառայեցած է իր հիմնադիրէն, գիտէ, թէ ապստամբի վրայ արտասանուած ճառերը չեն, որ պիտի որոշեն, թէ ո՞վ վաւերական գրագէտ է:

«Սարաֆեան յոբիեանի պէտք չունեցաւ, հաստատելու համար, թէ ի՞նչ գրագէտ էր»:

Այսինքն: Եթէ Սարաֆեանի յոբիեանը տօնուէր՝ յանկարծ պիտի տըմ-գունէ՞ր գրական անոր դէմքը, կամ յոբիեանով պատուրուած գրագէտները նոյն պատճառով անվաւե՞ր պէտք է հռչակել իսկոյն: Ո՞ր փորձառութեան ու ճշմարտութեան վրայ հաստատուած է գրական այս սահմանադրութիւնը, որ այսօր մտնական եղանակով մը ջով ջով կը դրուին այս բառերը: Աւելի պարզ ըլլալու համար՝ թուենք կարգ մը յոբիեանական իրողութիւններ: Օրինակ՝

1946ին տօնուեցաւ Յ. Օշականի յոբիեանը, 1966ին՝ Համաստեղի, 1972-1973ին՝ Արամ Հայկազի:

Արդ՝ կրնա՞նք առանց խղճտխայթի ընդունիլ «Յառաջ»ի ընդհանրացումը եւ յիշեալ գրագէտներուն առիթով եւս կրկնել իրեն հետ, թէ՛

«Յոբիեանները անիրաժեշտ են միայն անոնց համար, որոնք վստահ չեն իրենց արժէքին եւ արտաքին վկայականներու պէտք ունին»:

«Արտաքին վկայականներո՞ւ» պէտք ունէին Օշականն ու միւսները՝ վաւերական գրագէտ հռչակուելու համար, թէ անոնց վաւերական արժէքն ի՞նքն էր, որ յոբիեանական յարգանքով մը լեցուց ժողովուրդին սիրտը:

Ընդամենը չորս հատուածնոց խմբազարկան անձուկ սիւնակի մը մէջ քիչ մը շատ է այսքան վիրաւորանք կուտակել եւ երբորուն տուեալներու վրայ կոթնած հպարտանալ, որ «Յորեկիսնճեկրու հանդէպ անհետնորժողութեան իր զգացումը ժողովարարութեան է իր հիմնադիրը»:

Հիմ շունի նոյնպէս զգացական այս «ժողովարարութիւնը»: «Յառաջ» մէջ, ի վերջոյ, Մինաս Զերգի, Եղիշէ Դուրեանի, Գարեգին արք. Յովսէփեանի եւ ուրիշներու յորեկաններու առիթով յօդուածները զրոյզը տարբեր մարդիկ չկեն, «իր խմբագիրն էր»:

Ի վերջոյ զրազէտները իրենք կը կազմակերպեն իրենց յորեկանները, որ վիրաւորական այս լեզուով կը խոսուի անոնց հետ, թէ երախտագիտութենէ մղուած ուրիշներ կը ծրարեն ու կը պահեն նման ձեռնարկները: Մասնաւորապէս աւելի տարիներ հայ զրականութեան ծառայած եւ ընդհանրապէս եօթանասունի դուռներուն հասած յորեկան զրազէտներու յիշատակին թէ անձին հանդէպ թերթի մը կողմէ ցուցարարուած այս վերաբերումը լուրջ վերաբերում չէ:

Նայն հասարակութենէն հետոյ ապրած եւ յորեկանական հանգոյքներէն զուրկ մնացած ըլլալու հանդամանքը զրոյզտի մը համար բարենիչ կը համարէ «Յառաջ» եւ հաւատարիմ չէ նոյնիսկ իր այդ տեսութեան, մինչեւ անգամ Սարաֆեանի նուիրած նոյն խմբագրականին մէջ: Մէջբերուած վերի լուր է, որ այդպէս եղաւ՝ ինչ անձիւնքն ազգային վերջ կարգացէք ինչու այդպէս չեղաւ ըսող հետեւեալ պահանջը.

«Երբ այսօր, բնւերկն գիտեստեմէի եւ երախտագիտութեան(?) կ'արժանանայ Հայաստան, որ բարեհաճե՛ր է Սարաֆեանը ներկայացնել փրանսերէն լոյս տեսնող ձայնակար Մաղկաֆազի մը մէջ, կը մնայ մեզի ըսել, թէ Հայաստան արեւի լաւ կ'ընէր մաի ի՛ր հազիմ վրայ գտնուող ժողովուրդին ծանօթացնել Սիիւսէի այս բանաստեղծը, որ ցարդ թապու կը մնայ Երեւանի համար: Մահն իսկ զեւ չկատարեց իր դերը, որպէսզի Սարաֆեանի գրականութիւնը վերջապէ՛ս արժանանար երեւանեան գիղային»:

Բանաստեղծ մը լայն խաւերուն կը ծանօթացուի ուսումնասիրութիւններով, զաստիտութիւններով, բացառիկ թիւերով կամ... յորեկանով: Հետաքրքրական տիտի ըլլար զիտեալ, թէ ի՛նչ պիտի ըսէր «Յառաջ», եթէ Հայաստան հրաշիւք իմն «ի՛ր հողին վրայ գտնուող ժողովուրդին» յորեկանով մը ծանօթացուցած ըլլար Սարաֆեանը:

Հայաստանէն՝ Սփիւռքի բանաստեղծ մը ծանօթացնելու պահանջ, Սփիւռքի ծանօթացնելու ճիւղերէն՝ գեղարուեստին: Ընթերցողը կը կորուսի ազդընդմէջ զրուարած «Յառաջ»ի «անհանդուրժողութեան զգացումներուն հակասութեանց մէջ»:

Կրկնէ՛նք: Յորեկան մը, տարեգրած մը, տարեկից մը նշող մարդերը, թելարուած յարգանքի տուրքին հետ՝ միշտ նպատակ ունեցած են ենթակականերուն նուաճումներէն զեղեցկութիւն մը հազարդել կամ թարմացնել ընթերցողին մտքին: Նման համարումներու արժանացած մարդերը ոչ «ապրապրանքի վրայ արտասանուած ճառեր»ու պէտք ունին ոչ ալ «արտաքին վկայականներու»: Աւելի շատ մե՛նք պէտք ունինք անոնց: Այդ կ'ըսեն մեզի նոյնիսկ տարեկից նշող «Յառաջ»ի յաջորդական թիւերը...

Մեր օրաթերթերուն աշխատանքները առօրեայ հեւքի մը մէջ եւ վայրկեաններու հաշիւով կը կատարուին, բայց ատիկա չի նշանակեր, որ անոնց մէջ պարզուած տեսութիւնները նոյնպէս հեւքու ըլլան եւ կրնն վայրկեաններու բերած արամարուութեանց կնիքը:

«ԳՐԱԽՕՍԱԿԱՆ՝

ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻ ՄԸ ԱՌԻԹՈՎԸ»

Այսօրուան մեր մամուլին մէջ պարզուած ամէնէն ուշադրաւ երեւոյթներէն մէկը արագ գրուած գրութիւններուն ստեղծած խճողումն է: Յօդուածագիրները զարմանալի թեթեւութեամբ մը կը խաղցնեն զրիչը սպիտակ թուփին վրայ եւ մամուլի պատասխանատուները ապշեցուցիչ արագութեամբ մը կը հիւրընկալեն հասած որեւէ սեւագրութիւն: Կարծես ո՛չ զրոյզ իր արագ աւարտած գրութիւնը հակազդուելու փոյթ կ'ընէ եւ ոչ ալ հիւրընկալները խղճմտութեամբ կը վարուին հանրային կարծիք վարելու իրենց պատասխանատուութեանց հետ:

Այս գրութիւնը լուսագոյնս հաստատող գրութիւններէն մէկն է քաղաքիս «Մասիս» շաբաթաթերթի 1973 թիւ 32ին մէջ լոյս տեսած «Գրախօսական»ը, զոր կ'արտագրենք նոյնութեամբ, սրբագրելով թոյլ տրուած անճակ վրէպները միայն:

Երիտասարդ մը, Սարգիս Կիրակոսեան, բանաստեղծութիւններու հատոր մը հրատարակած է՝ «Այս է արիւն իմ», եւ հասուն տարիքի մէջ գտնուող ուրիշ մը, Հրայր Քաջարենց, յոյսով բանալէ ետք մատուցուած գիրքը՝ պարանթափ եղած է: «Լաւ տրամադրութեամբ բացիմք իր գիրքը: Յոյսին յաջողեց յուսախաբութիւնը: Մե՞նք ներքեմ իրեն, որ յուսախաբ ըրաւ մեզ, քէ ինք ներքէ մեզի՝ որ անաչառօքէն բայց սիրող սրտով կը կատարեմք այս դիտողութիւնը»:

Բանաստեղծն ու գրախօսողը կրնան ներել կամ չներել իրարու, ասիկա իրենց զիտնալիքն է, բայց գրախօսական մը հեղինակին համար չի պրուիր միայն, նկատի կ'ունենայ նաեւ ընթերցողը, որ այս պարագային չի կրնար ներողամիտ ըլլալ, որովհետեւ գիրքը չէ ներկայացուած իրեն, անոր մասին չիտրթաւար ընդհանրացումներ կատարուած են միայն:

Սարգիս Կիրակոսեանի «Այս է արիւն իմ» խորագիրը Քրիստոսի «Ինքնազոհընծայման» պարագաներով նախապաշարած է Քաջարենցը, որ Քրիստոսի արիւնին համանման կաթիլներ փնտրած է անոր տակ, փոխանակ ներկայացած քերթուածներուն արիւնը ստուգելու, ճշգրիտ պոյութիւնը կամ չգոյութիւնը օնփական արեան: Չի՞ կրնար արդեօք հին արտայայտութիւն մը նորոգ բովանդակութիւն մը ղգենուել, ի դէմս «Մնացորդացին ինչո՛ւ անպայման պարտաւորուած պիտի ըլլանք կտակարանային բաներ տեսնել եւ կունակ դարձնել նոյն անունին տակ Յ. Օշականի պատկերացուցած մեր մնացորդացին ծովածաւալ յուզումներուն:

Ասացուած քներուն ու քսոներուն կայուն նշանակութիւններ տալու խելօք արամազրութիւնը սահմանափակութեան առիթ տուած է հոս եւ դուռ բացած թիւրիմացութիւններու: Խորքին հետ՝ կը թուի, թէ Քաջարենց առանձին յարգանք մը ունի նաեւ ձեւական կայունութեան: Կ'ըսէ. «Չափաբերծալ, յանգուար եւ իմաստայից Էնթուածը՝ յվկուած աղամսնդ մըն է»:

Քիչ մը տարօրինակ կը հնչէ կազապարներու մէջ մտնելու հրաւիրող սա նեղացուցիչ հրաւերք: Առանց չափարեքեալ ու յանգաւոր նպատակներուն շի՛ կընար արդեօք քերթուած մը զարձեալ իմաստալից բլլալ եւ տղամօճեղեայ: Հարկա՛ւ կընայ: Եղած է շա՛տ: Եւ որովհետեւ քիչ մը դժուար է այս պարտաւսականքին հետ նոր ժամանակներուն եւ հետակարներուն նայիլ, ետ երթանք եւ յիշենք մէկ օրինակ միայն, Վարուժանի «Կարմիր հողը»: Չափարեքեալ մասեր չկան այդ հողին մէջ, ոչ ալ յանդ կայ, բայց ամէնքս ալ գիտենք, որ առջափնիքի է ու անկշռելի հոն խտացուած իմաստին աղամանդեայ որակը: Այդպէ՛ս է:

Ճիշդ է օտար նշաններով կատարուած դասաւորումներուն ասոնն եղած գիտողութիւնը, բայց կշիռ չունի լեզուական իր միւս մաքրամոյութիւններէն եւ ոչ մէկը: Չմտնանք, որ քննարկուած բանաստեղծական հատոր մըն է եւ ոչ թէ հայերէն լեզուի գասագիրք մը: Դրականութեան մէջ օտար բաներուն պոքածութիւնը մեղք մը չէ համարուած Պօլէքէն մինչեւ Տոստոյեանի եւ Տոստոյեանիէն մինչեւ Իլիքի ու Չարենց, որոնք, ի հարկին, յատկներէն, ռուսերէն, սպաներէն ասացուածքներով զարդարած են իրենց էջերը:

Ճիշդ չէ անտեսել այս տունայները նոր գիրքերու առիթով: Նախանշանակեալ արամադրութիւնը գոտակնի առաջնորդ չէ եղած ու չի կընար բլլալ գրականութեան մէջ:

Երեսասարդի մը գործը պահուելու աշխատանքը խղճմանք կ'ենթադրէ, այս չէ՛:

Կարդացէք ու գատեցէք:

ՀԱՅԱԿԱՆ ՄՍՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

«ԱՅՍ Է ԱՐԻԻՆ ԻՄ»

Համազգայինի Վահէ Աէթեան Տպարանը հրատարակած է քերթուածներու հաւաքածոյ մը, զգայացունց վերնադրով, — «Այս է արին իմ» (Պէյրութ, 1973): Հեղինակն է Սարգիս Կիրակոսեան:

102 էջերու մէջ՝ 36 քերթուածներ են:

Առաջին անջատ քերթուածը կը կրէ «Ինչա՛ւ, ինչա՛ւ», վերնագիրը: Միւս քերթուածները բաժնուած են չորս խումբերու, սեփական ենթադրանադրերով, — Ճերմակ ու սեւ առասպել, Անպատճաքաբար, Խորհուրդ անընթեռնելի, Մուց քառերգութիւն:

Ընդհանուր վերնագիրը, «Այս է արին իմ», քեզ անմիջապէս կը մղէ, կը տանի, կը կեցնէ խորախորհուրդ մթնոլորտին մէջ: Քրիստոսի յայտարարութիւնն է «Արե՛ք ի սմանէ...»:

Սարտազգէցիկ պահն է՝ ինքնագոհընծայման: Եղբրական իրողութեան հազորդակից՝ ընթերցողը բացառիկ արամադրութեամբ կը սկսի ընթեռնուլ անջատ քերթուածը, — «Ինչա՛ւ, ինչա՛ւ»:

Հարցումը, սակայն, կ'ենթադրէ անստուգութիւն: Յայտարարութիւնները կեղբոնամիտ են եւ ոչ թէ կեղբոնախոր կամ ամենարշիւ: Քողազերծումները բնական կարգի մէջ են, խոստովանութիւններ են կարելի, եւ անկարելի:

«Մանուկ մը բարի
 Ինձաւ արեւուն արգանդէն հրակ
 Անպնայն քեանք մը համարակ :
 Ե՛ս էի արդեօք :
 Եւ ինչո՞ւ համար,
 Մարդոց գէմքերուն գիմա՞կն հեզելու :
 Ինչ խեղճ պատմութիւն :
 ... Մեհեանի դրան փոշիներուն հետ՝
 Քնացայ երկար
 Փոշիներու ծուխ շուռչէն ծխացող տեսիլքով հարբած :
 Բառերու անժամգ ժանիքներուն հետ
 Խողալու յիմար հաճոյքն ունեցայ» :

Կը գանուինք մթնոլորտի մը մէջ, տարբեր՝ խորախորհուրդ մթնոլորտէն :

Չորս խումբերուն պատկանող իրերայաջորդ զերթուածները եւս կը յածին մթնոլորտին մէջ, տարբեր՝ խորախորհուրդ մթնոլորտէն :

Չափաբերեալ, յանդաւոր եւ իմաստալից զերթուածը՝ յղկուած ազամանդ է :

Անհասար են Սարգիս Կիրակոսեանի զերթուածները՝ չափաբերական գիտակէտէն : Յանգեր պատահական են : Իմաստները՝ կայմկլատուներ են՝ սեփական մթնոլորտին մէջ :

Բազմաձյներու քաղխումով տողերը կը կազան .

Մտտերովս բիւրեղ, երգերս քոլոր . . . :

Տողերը մերթ հատածներ ունին, մերթ շունին : Անշնչտակիր ձայնաւորը (Ը) յաճախ կ'երեւի հաստածալերջի կամ տողալերջի բառին ծայրը — Բայց ինչո՞ւ քաղ, սառն աչքերդ, համբուրուեցան հիմն ու նորը . . . :

Կը յայտնուին լեզուական կամ զերթակոնական սայթաքումներ . . .

Նայումսմեքերով, որ կը ծնին արեւուն հետ (ուղղէ՛ որոնք կը ծնին), արնավէժ (ուղղէ՛ արիննավէժ կամ արեմնավէժ, մատուցեցի (ուղղէ՛ մատուցի), մունջ թատերադրութիւն (ուղղէ՛, քատրերգութիւն) :

Յատարանութիւններ կան — Մէկէն կուլ տուի ուղղէ՛ իսկոյն կուլ տուի :

Օտար դասաւորումներ՝ I, II, III, IV. փոխան Ա. Բ. Գ. Դ. Ի :

Օտար բառեր իսկ — nature morte, փոխան՝ մեռեալ բնութեան, In my beginning is my end, փոխան՝ սկիզբիս մէջ է վախճանս իմ :

Պատահական նշումներ են ասոնք :

Ջգայացունց վերնագիրը, «Այս է արիւն իմ», կ'ենթադրէ զգայացունց զերթուածներ՝ բնական եւ գործնական կարգի մէջ :

Դանիէլ Վարուժանի իր գլուխ գործոցը պարզապէս կոչած էր «Հացին երդը» : Ե՛րդը, երգերէ բաղկացած, բայց ի՛նչ երգեր, բնական եւ պերճական կարգի մէջ, թորմ հացի պէս քաղցրաբայր, կերէք եւ իմացէք :

Նահատակ բանաստեղծը մտադրած էր գրել նաեւ «Փիլիին երդը», ասանց «Այս է արիւն իմ» գոչելու :

Երբ կարգացինք Սարգիս Կիրակոսեանի զերթուածներուն ընդհանուր վերնագիրը, յուսացինք թէ Սարգիս Կիրակոսեան պակասը պիտի լրացնէ : Լաւ տրամադրութեամբ բացինք իր գիրքը : Յոյսին յաջողեց յուսախարութիւնը : Մէ՞նք ներենք իրեն, որ յուսախար ըրաւ մեզ, թէ ինք ներէ մեզի՝ որ անաչառօրէն, բայց սիրող սրտով կը կատարենք այս դիտողութիւնը :

ՀՐԱՁ ՔԱՋԱՐԵՆՃ

Ծ Ե Ր Ա Ղ Ո Ւ Է Ս Ի Ն

Յ Ա Ճ Ա Խ Ա Ն Ք Ը

Դեկտեմբեր 25ին, Անգարայի մէջ 89 տարեկանին անհետացաւ Գորշ Փայլին զինակից Թուրքիոյ ծեր աղուէսը, Իսմէթ Իւնէօնիւ, Հայ Ժողովուրդին Հաղար շարիք գործած ու կամեցած «Թուրքօղիին», որուն մահուան անկողինն մէջ Հայոց զիրերուն Հանդէպ ցոյց տուած Հետաքրքրութիւնը արժանի է ուշադրութեան յանձնել:

Դրուագը պատմած է Իւնէօնի մօտիկ բարեկամներէն Քեմալ Սաթր, ու սպուած՝ Քրջական «Կիւմայտըն» թերթին մէջ.

— Փաշան իր վերջին քմարտն առաջ, մերթ ընդ մերթ կ'արթննար եւ կը յիշէր նեղուցներու խնդիրը, երբեմն ալ կը հարցնէր, թէ կառավարութիւնը դեռ չէ՞ կազմուած: Մահէն երկու օր առաջ, մեզ գարմանքի մատնող դէպք մը պատահեցաւ: Փաշան նորէն ուշաքափ էր, բայց արթնութեան մէկ վայրկեանին հարցուց մեզի.

— Հայաց այբուբենին մէջ քամի՞ գիր կայ:

— Կարծեմ 38 գիր, փաշաս:

— Ոչ, 36 գիր կայ, մեզի այդպէս սորվեցուցին Խարտի վարժարանը: Սաթր եւ շուրջի անձերը գարմացան: Խամէք փաշա նորէն խօսեցաւ.

— Բերէ՛ք տեսնեմ Հայկական Այրենարանը, վարի յարկը գրողարանը պէտք է ըլլայ:

Սաթր գնաց գտաւ Խնդրոյ առարկայ Այրենարանը, համբեցին եւ տեսան, որ իսկապէս 36 հատ եմ եղեր հայ տառերը:

— Փաշաս, — ըսին, — մեր ըսածը միշտ է եղեր:

— Հարկաւ միշտ պիտի ըլլայ, — պատասխանեց Խամէք փաշա, — եթէ Կ'ուզէ՛ք համրել:

Եւ սկսաւ համրել Հայկական Այրենարանին 36 տառերը:

Քեմալական շարժումին իր բերած արիւնոտ մասնակցութենէն մինչեւ Լոզան ու Լոզանէն մինչեւ Նախագահութեան իր վերջին օրերը Հայկական աւմէն ինչ ոչնչացնելու մոլուցքով Քրջացած այս Թուրքին անկատար մնացած ո՞ր զօրութիւնը թելագրեց արդեօք զրեթէ անդրչիբձեան այս Հետաքրքրութիւնը, Հայոց զիրերուն Հանդէպ Քրջօրէն Թաքնուած Համար՞ւմ մը, թէ մեր առճարհերը, խոյակներն ու քանդակները թնդանօթի բռնած եւ զիրերուն պարագային նոյնը ընել կրցած շըլլալու անդօրութեան յաճախեցը:

Ներքի՞ն է արդեօք մտածել, որ մահաբերի մէջ իրեն այցելած պայծառութեան Հաղուողէպ բոպէնեքուն Իւնէօնի զգաց բարբիին ու բարիքին թշնամի, շարին ու յարիքին բարեկամ իր Հոպիին ծանրածանր բեռը եւ թըրքութիւնը քիչ մը թեթեւցնելու պէտքի մը զօրութեամբ յիշեց Հայոց տառերը՝ քաւիչ յանցանաց:

Ո՞վ գիտէ: Դժուար է Իւնէօնի Թուրքին մէջ զընտանար Հոպիի մը գիտար ընել, բայց եւ փաստ է գժոխքի գրան սեմին Հայոց զիրերը յիշելու պահանջը...

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ՆՈՒԻՐՈՒԱԾ

ՅԱԿՈՐ ՕՇԱԿԱՆԻ

«Գ. Մելիտինեցի գրական մրցանակի դատակազմին հրատարակած «Ժակ-պոուկը», «Հանի Մուրատ» եւ «Հանի Ապուլլա» վեպերուն առիթով

ՆԱԽԱՁԵՆՈՒԹԵԱՄԲ «Բ Ա Գ Ի Ն» ԱՄՍԱԳՐԻ

Կը նախագահէ

Մ. Ի Շ Խ Ա Ն

Կը խօսին

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ ԵՒ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ


Յայտագրի գեղարուեստական բաժնին կը մասնակցին

ԱՐՓԻՆԷ ՓԵՀԼԻՎԱՆԵԱՆ, ՊՕՂՈՍ ՃԵԼԱԼԵԱՆ

ԵՆ ԽԱՉԻԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Կիբակի, 17 Փետրուար 1974, Կենտրոնական գրադարանի 630ի6,

Ամերիկեան Համալսարանի Զեպարտմենտ



Մէկ ՏԱՐՈՒԱՆ «ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ



«ԲԱԳԻՆ»ի քարեկամ մը (Պէյրուքէն)

- 1.- Մշակութային Միութեան (Պոսթըն)
- 2.- Օշական վրդ. Մինասեանին (Պոսթըն)
- 3.- Սոփիա Յակոբեան Գալեհին (Պուրն Համաւո)
- 4.- Բաւասուն Մանկանց վարժարանին (Պուրն Համաւո)
- 5.- Արցարեան վարժարանին (Պուրն Համաւո)

Պր. Հրանտ Մարտեան (Պէյրուքէն)

Օր. Արփի Տատոյեանին (Նիւ Եսբ)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ



Ա.ՊՐԷՔ, ԵՐԵՒԱՆ, (Պատմաւածագներ), Ա. Հայկազ, Պէյրուք, 1973:

ԻՆՉ ԿՐՆԱՄ ՈՒԶԵԼ (Պատմաւածագներ), Զ. Գիւրջեան, Պէյրուք, 1973:

ՏԱՂԱՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՈՒՌՍՄԱՆԵՑԻԻ (Ուսումնասիրութիւն), վարդան ծայր. վարդապետ Տէմիրճեան, Պէյրուք, 1973:

ՏԱՐԻԳԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՐԱՆԱԿՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ 20 ՏՈՒՐԲ
ՀԱՏԱՎԱԶԱԹ 4 Լ. ՈՍԿԻ

باكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزاجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՍՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

•

ՀԱՌԻԶ ԽՄԱԳԻՐ
Կ. ԱՍԱԳԻՐ
ԽՄԱԳԻՐ
Գ. ՄԱՂՅԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչությունը հասցե

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth - Liban